ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-5** (1651) Մայիս 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Մեր լինելիության ընտրությունը (էջ 1-4)

2- Քաղաքական
Անի Մելքոնյան
Խլված հաղթանակների մայիսը(էջ 5-7)

3- Իրավաքաղաքական
Գէորգ Յակոբճեան
Ալիեւի տարածքային նկրտումները միջազգային օրէնքի լոյսին տակ (էջ 8-10)

4- Տնտեսական
Արմեն Գրիգորյան
Հունավորել համահայկական ներուժը, ձևավորել համազգային օրակարգ (էջ 11-14)

5- Հայ դատ
Գևորգ Ղուկասյան
Դասական էթնիկ լոբբինգի հաղթանակն ու ԱՄՆ-ի փոփոխվող արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում (էջ 15-17)

6- Պատմության լուսարձակ
Արմեն Խաչատրյան
Թուրքական զորքերի ներթափանցումը Հայաստան ու Անդրկովկաս և 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը (էջ 18-22)
Վանիկ Վիրաբյան
Առաջին հանրապետության միլիցիայի և բանակի տարեգրությունից (էջ 23-26)
Վանիկ Վիրաբյան
Հայաստանի Հանրապետության հետախուզությունը 1918-1920 թթ. (էջ 27-29)
Դերենիկ Կարոյի Մելիքեան
Ռազմական գործողութիւնները Հիւսիսային Իրանում եւ քրիստոնեայ բնակչութեան (հայերի եւ ասորիների) կոտորածները. 1914-1916թթ. (մաս 2-րդ) (էջ 30-34)

7- Հայրենի եզերք
Վաչագան Ռստակյան
Հայոց մայրենին երեկ և այսօր (էջ 35-37)

8- Դաշնակցական բեմ
Աւօ Գաթրճեան
ՀՅԴ կազմակերպական ապակեդրոնացումը կուսակցութեան ամրակուռ խարիսխ (էջ 37-38)

9- Ընկերական զրույցներ
Նորեկ Գասպարյան
Շուշի կամ անուսադիր գեներալների սովորական պատմությունը (էջ39-40)

10- Ընթերցումներ
Վրէժ-Արմէն
Գնահատելու համար Պալեաններու ներդրումը (էջ 41-44)

Մեր լինելիության ընտրությունը

ՀՀ վարչապետի պաշտոնից հրաժարականի մասին սույն թվականի ապրիլի 25-ի տեսաուղերձով Նիկոլ Փաշինյանը կարծեսթե վերջ դրեց խորհրդարանական առաջիկա ընտրությունների կայանալ-չկայանալու վերաբերյալ խոսակցություններին: Չբացառելով քաղաքականության անկանխատեսելիությունը, մանավանդ մեզանում և մեր օրերում, այնուամենայնիվ ցանկանում ենք հավատալ, որ ընտրությունների անցկացման որոշումը որևէ պատճառով կամ պատճառաբանությամբ չի բեկանվի, և մեր ասելիքը բխեցնում ենք այս իրողությունից:

Հայաստանում, Արցախում և առհասարակ հայության կյանքում ներկայումս տիրող բարոյա-հոգեբանական մթնոլորտի պայմաններում, մեր հայրենիքի առջև ծառացած ազգային ու պետական մարտահրավերներին հանդիման ինչպիսի՞ ընտրություն պետք է կատարի հայաստանցի ընտրողը:

Ակնհայտ է, որ սա հերթական ընտրություն չի լինելու, այլ քաղաքական աննախադեպ գործընթաց, որի ժամանակ, ըստ էության, տեղի է ունենալու կողմնորոշում երկու քաղաքական հոսանքների միջև, որոնց այս պահին կանվանենք Նիկոլ և հականիկոլ այլընտրանք:

Թե Հայաստանը ինչ հեռանկար կունենա Նիկոլ Փաշինյանի հետագա պաշտոնավարման դեպքում, անաչառորեն քննելու համար պարտավորված ենք զգում մի կողմ դնելու մեր անձնական վերաբերմունքը, ինչպես և չանդրադառնալու այն բազմաթիվ մեղադրանքներին, որոնք որքան էլ փաստարկված թվան, այսօր դեռևս իրավականորեն չապացուցված վարկածներ են: Ավելին՝ ցանկանում ենք հարցերին անդրադառնալ հատկապես հասարակության այն հատվածի հետաքրքրությունների տեսանկյունից, որը համոզված է, որ հենց գործող վարչապետն է այն մարդը, որը կարող է երկիրը դուրս բերել ներկայիս համընդհանուր ճգնաժամից, լուծել նրա անվտանգության խնդիրները և հայկական երկու պետությունները դուրս բերել խաղաղ ու սահուն զարգացման մայրուղի:

Մեր ասելիքը սկսենք ամենացավոտ ու այս պահի ամենակենսական խնդիրներից: Այդ խնդիրներից է Արցախի հայկական լինել-չլինելը՝ նկատի ունենալով հատկապես անվտանգության, տարածքի և կարգավիճակի հարցերը: Անվտանգությանը և սահմաններին վերաբերող հարցերի այս բլոկի մեջ ներառենք նաև Հայաստանի սահմանների խնդիրը, ադրբեջանաթուրքական տանդեմին այս կամ այն կարգավիճակով Զանգեզուրի տարածքով ճանապարհ կամ ճանապարհներ տրամադրելու հարցը և բուն Հայաստանի տարածքների նկատմամբ Ադրբեջանի բացահայտ ու առավելապաշտական հավակնությունները:

Մեր դատողությունները կառուցելով միայն փաստերի հիման վրա՝ արձանագրենք, որ պատերազմում կրած ծանր և ջախջախիչ

պարտությունից հետո Նիկոլ Փաշինյանը՝ որպես երկրի ղեկավար և գերագույն գլխավոր հրամանատար, կորցրել է ամուր դիրքերից բանակցություններ վարելու կարողությունը: Ավելի շուտ՝ նա ոչ թե որպես բանակցությունների լիարժեք կողմ է հանդես գալիս, այլ մասնակցում է դրանց՝ իր պահանջների իրավունքը լրիվ հանձնած ռուսական կողմին և պատրաստ ստորագրելու ցանկացած փաստաթուղթ՝ անկախ նրանից՝ հայության սպասումները դրանում արտացոլված են, թե ոչ: Ասվածի ամենավառ վկայությունն այն է, որ պատերազմական գործողությունների ավարտից հետո Ադրբեջանը տիրացավ հաշտության հայտարարությամբ չամրագրված հսկայական տարածքների, պատմության մեջ որպես աննախադեպ երևույթ միակողմանիորեն գծում է Հայաստանի ու Ադրբեջանի նոր սահմանները, գերիներին պատանդ պահելով փորձում է հայկական կողմին պարտադրել տարածքային, հաղորդակցական ուղիների և այլ զիջումներ: Ընդ որում, այս ամենն ուղեկցվում է Ադրբեջանի պայմաններն ընդունած Հայաստանի ղեկավարի հասցեին վիրավորանքներով և երկրի նկատմամբ ագրեսիվ, նվաճողական բնույթի հոխորտանքով: Հայկական կողմն ունակ չեղավ լուծելու ըստ տրամաբանության առաջնահերթ լուծում պահանջող՝ գերիների ազատ արձակման հումանիտար խնդիրը, ինչը պետք է դիտվեր մյուս խնդիրների լուծման նախապայման: Քանի որ հոգեբանական-կամային և գուցե մեզ համար անհայտ քաղաքական պատճառներով ՀՀ առաջին դեմքն անկարող է արձագանքելու հակառակորդ կողմի լկտի պահվածքին ու հավակնություններին, նրա թելադրանքով (այլ կերպ լինել չի կարող) Հայաստանի անունից թույլ հակադարձումներով շատ հաճախ հանդես է գալիս Արտգործնախարարության մամլո խոսնակը՝ դրանով իսկ լրջորեն գցելով պաշտոնական պատասխանի մակարդակն ու կշիռը: Հայաստանը խուսափում է միջազգային ատյաններում կառավարական մակարդակով պատերազմական հանցագործությունների, գերիների, ադրբեջանական հավակնությունների և այլ հարցեր բարձրացնելուց: Որքան էլ ամոթալի լինի խոստովանելը այսօրվա

ապրող սերունդները չեն կարող չընդունել, որ իրենց ապրած տարիների ընթացքում երբեք այսքան անպաշտպան ու նսեմացված չեն եղել:

Այսպիսով՝ Նիկոլ Փաշինյանի և նրա քաղաքական թիմի ամենանվիրված պաշտպանների համար պետք է ակնհայտ լինի, որ Նիկոլին ընտրելու դեպքում վերարտադրված իշխանությունն անզոր է լինելու ստեղծված կացության մեջ բեկում մտցնելու. չպետք է մոռանալ, որ այս պարագայում խոսքն արդեն ոչ թե Արցախի, այլ Հայաստանի ապագայի մասին է: Հույսեր չկապելով պարտված իշխանության հետ՝ մնում է աղոթելը, որ ռուսական զորքը պինդ պահի թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի հետ պետական սահմանները, թեև սա էլ վերջնական երաշխիք չէ, եթե հիշենք հենց արցախյան վերջին պատերազմը: Այս պայմաններում արագորեն երկրի պաշտպանության խնդիրները լուծելու փոխարեն Նիկոլ Փաշինյան ղեկավարն անում է ճիշտ հակառակը. ժողովրդի հետ հանդիպման ժամանակ նա հայտարարում է, որ զորակոչ կարելի է կազմակերպել հինգ տարին մեկ՝ երեք ամիս ժամկետով: Սա ուղղակիորեն նշանակում է քանդել բանակը, ինքնապաշտպանության հնարավորությունից զրկելով՝ կործանման դատապարտել պետությունը, իսկ արյունախում թշնամիներով շրջապատված ժողովրդի ճակատագիրը թողնել Աստծո հույսին: Սա է սպասվում գործող իշխանությանը նորից իշխանության բերելու դեպքում:

Երկրի անվտանգությանն ու զարգացմանը վերաբերող խնդիրների շարքում երկրորդ կարևոր ոլորտը արտաքին հարաբերությունների ճակատն է: Դատելով զուտ փաստերով՝ միանշանակորեն կարելի է պնդել, որ գործող իշխանությունների օրոք արտաքին հարաբերությունների ոլորտը ձախողված էր: Արևմտյան զանազան կառույցների ազդեցությունը կրող անհատների թիմային անցումն իշխանության ի սկզբանե խաթարեց նոր իշխանության նկատմամբ Հայաստանի ավանդական և հիմնական դաշնակիցների վերաբերմունքը: Անվստահությունը անհանդուրժողականության վերածվեց Նիկոլ Փաշինյանի և նրա թիմակիցների կողմից ավանդական դաշնակիցների շահերը ոտնահարող գործողությունների պատճառով (հակասական հայտարարություններ, նրանց ազդեցության և հեղինակության թուլացում Հայաստանում, հարաբերությունների ակտիվացում վերջիններիս թշնամի տերությունների ու ուժերի հետ, նման կազմակերպությունների միանալը և այլն): Կարելի է բացառություն համարել Ռուսաստանի հետ պահպանվող ոչ ակտիվ հարաբերությունները, ինչն էլ պայմանավորված է հիմնականում Ռուսաստանի մտահոգություններով՝ ա) Հայաստանի իշխանությանը ամբողջովին չմղելու հակառակորդ ճամբար, բ) Անդրկովկասում ունեցած իր կենսական շահերով գ) իր թիկունքը ամբողջովին իրենց տիրապետության տակ առնելու ՆԱՏՕ-ի և Թուրքիայի նկրտումներին դիմակայությամբ և



այլն: Բայց թե պաշտոնական Ռուսաստանն ինչ վերաբերմունք ունի Հայաստանի իշխանությունների հանդեպ, բացահայտում են ոչ պաշտոնապես նման պարտականություն իրականացնող, կրեմլյան թելադրանքով գործող հեռուստահաղորդաշարերն ու զանազան վերլուծական կենտրոնների ղեկավարները: Հայաստանի ձախող ղեկավարությունը չկարողացավ արդարացնել նաև իր՝ իշխանության գալով շահագրգռված արևմտյան ուժերին: Որպեսզի ասվածը փաստարկված լինի, պարզապես հիշենք, որ անցած երեք տարիների ընթացքում Հայաստանի իշխանությունները, մեկ-երկու ճանաչողական փոխայցելություններից բացի, չեն ունեցել պաշտոնական կամ պետական ոչ մի այց և նման ընդունելություններ: Երկրների ղեկավարների մի քանի աշխատանքային փոխայցելությունները եղել են նախապես ծրագրված ժամանակացույցներին համապատասխան (ԵԱՏՄ նիստեր և այլն): Բոլոր ճիգերը՝ Նիկոլ Փաշինյանի համար ապահովելու քիչ թե շատ բարձր մակարդակի ընդունելություն ամերիկյան վարչակազմում, հանգեցին Կալիֆոռնիայի փոխնահանգապետի հյուրընկալությանը: Հայաստանն արդեն երեք տարի դուրս է արտաքին քաղաքական ու դիվանագիտական ակտիվ գործընթացներից, և այս իրողության ամենաակնհայտ հետևանքն այն է, որ Արցախյան պատերազմի ժամանակ ու դրանից հետո որևէ պետություն կամ միջազգային կազմակերպություն չփորձեց գործնականում աջակցել մեզ կամ դատապարտել ագրեսիան, Թուրքիայի ներխուժումը տարածաշրջան, պատերազմական հանցագործությունները և դրանց հետևանքները: Ոչ մի կշտամբանք ԵԱՀԿ-ի կողմից չի հնչել այն բանի համար, որ, վիժեցնելով բանակցությունների ընթացքը, Ադրբեջանը խախտեց ուժի սպառնալիքի և ուժի կիրառման հարցերում, ապա նաև բանակցությունների ընթացքում ամրագրված սահմանների, ապագա կարգավիճակի

և այլ հարցերում սահմանված կարմիր գծերը: Այսօր էլ հակամարտության կարգավորման միջազգային միակ ձևաչափը ներկայացնողները բերանները ջուր առած լռում են բռնի ուժով իրավիճակի նման փոփոխության հարցում, իսկ հայկական կողմը ոչ մի քայլ չի անում այդ լռությունը խախտելու համար: Վերջապես Հայաստանի անփորձ-անկարող պաշտոնյաները մշտապես ձեռնծալ մնացին և ոչինչ չձեռնարկեցին Ադրբեջանի կողմից միջազգային կազմակերպություններում անցկացված զանազան հակահայ բանաձևերի դեմ: Այսպիսով՝ ակնհայտ է, որ Հայաստանը քաղաքական, դիվանագիտական ճգնաժամի, եթե չասենք՝ մեկուսացման մեջ գցած իշխանությունը վերարտադրվելու դեպքում ոչ մի հնարավորություն չի ունենալու արմատական բեկում մտցնելու այս ասպարեզում ևս: Հայաստանը արտաքին ուժերի համար այսօր հեղինակազրկված, քաղաքական արժեք ու հեռանկար չունեցող պետական կազմավորում է, և այս կացության հեղինակ իշխանությունը ոչ իրավիճակը փոխելու որևէ քայլ է անում, ոչ էլ կարող է անել:

Հայաստանի համար ոտքի կանգնելու, հզորանալու ու խոցելիությունը հաղթահարելու հաջորդ կարևոր պայմանը տնտեսության թռիչքային զարգացումն է: Գալիք ընտրությունների նախօրյակին Հայաստանի գործող իշխանությունը տնտեսական տեսանելի ապագայի վերաբերյալ այնպիսի խոստումներ է տալիս, որոնք ոչ մի առնչություն չունեն ոչ մեկնարկային իրավիճակի, ոչ տնտեսական զարգացման եղած (ավելի շուտ՝ չեղած) նախագծերի, ոչ սպասվող ներդրումների և աճ ապահովող այլ գործոնների հետ: Անցած եռամյակում Հայաստանում չեն կազմվել տնտեսական զարգացման հիմնավորված ու իրատեսական նախագծեր, չեն կատարվել քիչ թե շատ շոշափելի ներդրումներ, աճ չեն արձանագրել մեր տնտեսության ավանդական ճյուղերը: Հակառակը՝ տնտեսությունը ազատ անկման վիճակում է, բացառվում է արտաքին կամ նույնիսկ ներքին ներդրումների հավանականությունը՝ պայմանավորված այս ոլորտի արհեստավարժ պաշտոնյաների բացակայությամբ, վարվող տնտեսական սխալ քաղաքականությամբ, ներքաղաքական մթնոլորտով և անկայունությամբ, երկրի անհեռանկարայնությամբ և այլն: Կարճ ճամանակահատվածում իշխանությունը զգալիորեն մեծացրել է պետական պարտքը և շարունակում է նորանոր պարտքեր վերցնել երկրի ֆինանսական գործունեությունը նվազագույնս ապահովելու համար: Հայտնի է, սակայն, որ մինչև գալիք ընտրությունները վիճակը մի կերպ պահելուց հետո երկրի ֆինանսատնտեսական անկումը դառնալու է շատ ավելի ակնհայտ՝ հանգեցնելով տնտեսական նորանոր ճյուղերի կաթվածահարմանը, գործազրկության աճին, դրամի շոշափելի արժեզրկմանը, մթերքի ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքների գների անվերահսկելի աճին և այլն: Գումարվելով բացասական այլ գործոնների՝

այս իրավիճակն անխուսափելիորեն մեծացնելու է արտագաղթի ցուցանիշները: Անցած տարիներին մի շարք հիմնարկների լուծարման, աշխատատեղերի կրճատման պայմաններում որոշ ոլորտներում և գերատեսչություններում աշխատավարձերի հատվածական բարձրացումները կամ տնտեսական աճի մասին թվանկարչությունը չպետք է մոլորեցնեն. քաղաքացին տնտեսական վիճակի վերաբերյալ դատողություն պետք է անի երկու հիմնական ցուցանիշներից ելնելով՝ գրպանի գումար և գներ:

Երկրի և սեփական ապագայով մտահոգ յուրաքանչյուր քաղաքացի պետք է հասկանա, որ, անկախ համակրանքից ու հակակրանքից, ներկա իշխանությունների կառավարման շարունակումը աղետաբեր, եթե ոչ կործանարար է լինելու Հայաստանի համար:

Վերևում թվեցինք մի շարք ուղղություններ, ըստ որոնց իրականացվող արդյունավետ գործընթացներով է պայմանավորված լինելիության ճակատագրական ջրբաժանի առջև հայտնված մեր երկրի ապագան: Թվարկված գործոններից բացի՝ իրավիճակի հաղթահարման համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև համախմբված ժողովրդի միասնական կամքի ակտիվ դրսևորումը: Դժբախտաբար, գործող իշխանությունը առաջին օրվանից հասարակությունը բաժանեց սպիտակների ու սևերի, պառակտեց ազգային միասնականությունը՝ ստեղծելով ներքին անհանդուրժողականության մի աննախադեպ մթնոլորտ, որը պայթելու եզրին է: Ցավոք, երևույթը պայմանավորված է երիտասարդ իշխանության բնույթով և իրավիճակը լիարժեքորեն տնօրինելու անկարողությամբ: Այն առաջին օրվանից փորձեց ինքնահաստատվել ու կայանալ ոչ թե դրական գործերով ու դրանց արդյունքներով՝ փաստելով իր իրավացիությունն ու գոյության արդարացվածությունը, այլ հավանական մրցակիցներին, իր պես չմտածողներին վարկաբեկելով ու հալածելով: Դժվար թե գտնվի մեկը, ով կհավատա,

որ վերընտրվելու դեպքում ներկա իշխանությունը նախ կձերբազատվի անփորձ, ինքնահավան կադրերից և ապա, առանց քաղաքական ու այլ խտրության, գործի կիրավիրի կարող կադրերին, դեպի ազգային քաղաքականություն ու արժեքներ շրջադարձ կատարելով կապահովի հասարակության համախմբումը: Նույնպիսի խոհեմությամբ և ազգային գերագույն շահերի գիտակցությամբ նա կսկսի այլ կերպ խոսել Սփյուռքի հետ՝ շահելով իր կառավարումը այսօր մերժող հայության աշխարհասփյուռ զանգվածների վստահությունը, վերարթնացնելով հայրենի պետությանն օգտակար լինելու ցանկությունը:

Կսիրենք, թե չենք սիրի Հայաստանի այսօրվա իշխանություններին, չենք կարող չընդունել, որ այսպիսին է այս իշխանությունը իր էությամբ, բարոյական նկարագրով, ազգային շահերի գիտակցությամբ, կառավարման ունակությամբ և երեքամյա գործունեության արդյունքներով: Անհնար է չտեսնել, թե ինչպես կարճ ժամանակահատվածում նա հասցրեց իր դեմ տրամադրել համակիր հսկայական զանգվածների: Եթե մի իշխանություն այսօր չի կարողանում հանգիստ փողոց դուրս գալ, ազատորեն շփվել մարդկանց հետ, տեղից տեղ տեղաշարժվել և այցելել մարզեր՝ առանց հազարավոր ոստիկանների ուղեկցության, եթե շատերը նրան չեն վստահում և հավատ չեն ընծայում նրա ո՛չ ասածներին, ո՛չ գործերին, ինչպե՞ս կարող է նման իշխանությունը կրկին ընտրվել և շարունակել երկրի ղեկը վարել այն ուղղությամբ, որը տանում է դեպի անդունդ:

Ժամանակից շուտ Նիկոլ Փաշինյանը սկսել է նախընտրական քարոզչությունը ու դարձյալ հնչում են մեծ-մեծ խոստումներ՝ իրական միջոցների ու հնարավորությունների հետ աղերս չունեցող, ինչպես եղավ երեք տարի առաջ, ինչպես եղավ ամիսներ առաջ՝ արցախյան պատերազմից հետո: Համաժողովրդական ցասումից նեղն ընկած Նիկոլ Փաշինյանը այս անգամ էլ վեց ամիս ժամանակ խնդրեց ճգնաճամի հաղթահարման ծրագրեր կազմելու, հրատապ լուծում պահանջող խնդիրները լուծելու համար: Վեց ամիսն էլ անցավ, կարելի՞ է մեկ դրական փոփոխություն նշել, որ տեղի է ունեցել այս ընթացքում: Այդպես է լինելու նաև նոր ընտրությունների ժամանակ եթե մարդիկ հավատան հերթական հեքիաթներին:

Կարող ենք հաստատել, որ առաջիկա ընտրությունը լինելու է այս և հակառակ բևեռների միջև, այսինքն՝ գիտակցելով ներկա ընտրության ճակատագրական լինելը՝ ժողովուրդը կողմնորոշվելու է կամ-կամի միջև, Նիկոլի ու հականիկոլի միջև, ապազգայինի ու ազգայինի միջև, անկման անկասելիության և վերելքի հնարավորության միջև: Այս դեպքում քաղաքական ուժերի ո՛չ քաղաքական հավակնություններն են տեղին լինելու, ո՛չ քաղաքական-գաղափարական առանձնահատկությունները. մրցակցելու են կարճ ժամանակում հնացածն ու իր սնանկությունն ապացուցածը և այն նորը, որը պարտվածի,

ձախողվածի խարան չի կրում իր ճակատին: Պետք է գա այն հոսանքը, որը կզսպի Ադրբեջանի ու Թուրքիայի հավակնությունները և կկարողանա պայքարել Արցախի ապագայի համար, նա, ով ընդունելի կլինի և կարող է համարձակորեն բանակցությունների մեկնել Մոսկվա, Փարիզ և Վաշինգտոն, Բրյուսել, Պեկին, Թեհրան և այլուր, ով կապեր ունի և կարող է լինել ամեն տեղ ու խոսել բոլորի հետ, ով տնտեսություն ղեկավարելու փորձ ունի և Հայաստանի տնտեսությունը դուրս կբերի անդունդից, ով թշնամիներ չունի հայության մեջ և կարող է ոչ միայն ապահովել երկրի ներքին միասնականությունը, այլև նրա առանցքի շուրջ համախմբել Սփյուռքը: Չպետք է կասկածել, որ միայն նման ուժեղ, գիտակից, գործուն, ողջ հայությանը ներկայացնող, ինքնավստահ իշխանության գոյությունը կվախեցնի մեր թշնամիներին, կզսպի նրանց ախորժակը և հեռու կվանի հայոց սահմաններին սպառնացող վտանգը: Վախեցած, զիջող իշխանությունների վերարտադրման դեպքում թշնամին ավելի սանձարձակ է դառնալու, և ավելի իրական՝ նոր պատերազմի հավանականությունը: Հիշենք, որ հենց այսօրվա այս տեսակ իշխանությունն էր, որ ոգևորեց թշնամուն և ներշնչեց այն վստահությունը, թե վերջապես հասել է բարենպաստ պահը, երբ կարող է պարտության մատնել հայկական կողմին, աներևակայելի զիջումներ պարտադրել և մարսել իր հանցագործությունը: Նոր ընտրությունը լինելու է մեր ապագան երաշխավորող ու կանխորոշող ընտրություն: Այժմ «սիրուն աչքերի համար» մեկին համակրելու, մյուսին հակակրելու ժամանակը չէ. առջևում հայրենիքի փրկության ընտրությունն է: Կրկին սխալվելը հանցանք է: Մեր ընտրությամբ որպես ազգ պետք է ապահովենք հայրենիքի փրկության նպատակի հաղթանակը: ■

Խլված հաղթանակների մայիսը

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Հազարամյակների իր պատմության ընթացքում հայ ազգը բազմաթիվ վերելքներ ու անկումներ, հաղթանակներ ու պարտություններ է ունեցել:

Հայոց պատմության հաղթանակները եղել են ոգու և կամքի հաղթանակ, իսկ պարտությունները՝ հիմնականում դավաճանության հետևանք, ինչն էլ անջնջելի դրոշմ է դրել մեր երկրի ճակատագրի մի մեծ ժամանակահատվածի վրա:

Պատահականորեն թե նախախնամությամբ մեր հաղթանակները հիմնականում կերտվել են մայիս ամսին:

Ցավի ու խեղճության՝ ցեղասպանության ապրիլից հետո հայ մարդը մի տեսակ սրտի թրթիռով սպասում էր իր հաղթանակների մայիսին, որի սկիզբը եռատոնն էր:

Բայց մինչ եռատոնին անդրադառնալը՝ մի փոքր մայիսյան այլ հաղթանակների մասին: Արշակունյաց թագավորության անկումից հետո ինքնության պահպանման առաջին լուրջ կռիվը հայ ժողովուրդը մղեց 451թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում: Իհարկե, ռազմական հաղթանակ հայությունը չտարավ. շատերն այն անվանեցին «բարոյական հաղթանակ», շատերը՝ պարտություն: Ոմանց համար Վարդանանց պատերազմը լոկ կրոնական պատերազմ էր, շատերն էլ այն համարում են ինքնության կռիվ: Վարդանանց պատերազմի մասին կարելի է անվերջ խոսել, քննարկել ու բանավիճել, սակայն թեմայի վրա շատ չկենտրոնանալու համար նշենք միայն, որ դարեր շարունակ Վարդանի ու Վարդանանց կերպարները հայ ժողովրդի համար հերոսականության խորհրդանիշներ են եղել, իսկ Վարդանանց նշանաբանը՝ «մահ իմացյալ անմահություն է»՝ յուրահատուկ պատգամ իր ազատության համար պայքար մղող հայ ժողովրդին:

Խորհրդային ապազգայնացման տարիներին, երբ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մեր ազատագրական պայքարի շատ հերոսների անուններն արտասանելն անգամ արգելված էր, Վարդան Մամիկոնյանի ու Վարդանանց կերպարները հայության համար դարձան ինքնության պահպանման հենասյուներից մեկը:

Հայ ժողովրդի համար, սակայն, ամենա-ճակատագրականը 20-րդ դարն էր՝ լի ողբերգական և հերոսական բազմաթիվ էջերով: Ցեղասպանված հայությունը իր մեծ ողբերգությունից հետո կանգնել էր «ազատություն կամ մահ» հրամայականի առաջ, և անխուսափելի էր թվում մահը, բայց հայ ժողովուրդը կարողացավ հավաքել իր ուժերն ու դիմակայել թշնամուն, ինչի շնորհիվ նրան հաջողվեց 600-ամյա չգոյությունից հետո նորից Հայկական լեռնաշխարհում իր պետականության խարիսխը գցել:

Նշենք, սակայն, որ ոչ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, ոչ էլ հանրապետության հռչակումը թշնամու դեմ ժողովրդական ինքնաբուխ հուզումների կամ ինքնահոս իրադարձությունների արդյունք չէին, այլ Արամ Մանուկյանի, Դրոյի, Մ. Սիլիկյանի ու նրանց գործակիցների անդուլ աշխատանքի արդյունքը: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ նախ Արամը, ապա



նաև Դրոն ու Սիլիկյանը համարվում են Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը, և միանգամայն ճիշտ է Ս. Արարատյանի այն դիտարկումը, որ «….եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ, և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող է վերագրվել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկյանին և Դրոյին»[1]:

1918 թ. մայիսի 19-ին թշնամին ներխուժեց Արարատյան դաշտ: Դեռևս մարտին դիկտատոր ընտրված Արամ Մանուկյանը գեներալ Մ. Սիլիկյանին հրահանգեց չնահանջել և պահպանել դիրքերը, հակառակ դեպքում հարվածի տակ կդրվեր Երևանը: Թուրքական զորքերի առաջխաղացման և անկասելի թվացող արշավանքի պայմաններում շատերին դիմադրությունը անհնար և անիմաստ էր թվում, հուսադրող չէին նաև բանակից հասնող լուրերը: Արամը, սակայն, այլ կարծիքի էր. գիտակցելով պահի ճակատագրական լինելը՝ նա դիմում է հայ մորը, հայ կնոջը. «Եթե հայ մայրերը չզոհաբերեն իրենց զաւակները, կործանուած է բոլորիս թէ՛ կեանքը և թէ՛ պատիւը: Հասած է ժամը, երբ հայ կինը պէտք է զգայ իր կոչման բարձրութիւնը և կատարէ իր սուրբ պարտականութիւնը»[2]: Արամի կոչը անարձագանք չմնաց, և գաղթելու պատրաստ ժողովուրդը կամավորագրվեց իր ազատության կռվին:

Մայիսի 21-ին թշնամին գրավեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Գեներալ Սիլիկյանն ու փոխգնդապետ Վեքիլյանը որոշեցին թշնամուն վճռական հակահարված տալ. մշակվեց ռազմական գործողությունների ծրագիր:

Մայիսի 26-ին Երևանում ստացան գեներալ Սիլիկյանի հեռագիրը, որով գեներալը ավետում էր հաղթանակը: Դեպքերի ականատեսն այսպես է նկարագրում այդ հուզիչ պահը. «….Արամը երևաց պատշգամբում… Հեռագիր կայ ձեռքին, յուզմունքից գունատ է, ժպիտ կայ երեսին: Քար լռութիւն: Բազմութիւնն ասես շնչել իսկ դադարել է»[3]: Արամն ընթերցում է գեներալ Սիլիկյանի հեռագիրը, որն ազդարարում էր. «....հինգ օրից ի վեր տևող

ճակատամարտը վերջացաւ թուրքերի կատարեալ պարտութեամբ…»[4]:

1918 թ. մայիսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում հայությունը սեփական ուժերով դիմադրեց իրեն ռազմապես գերազանցող թուրքական բանակին և հաղթանակ տարավ: Արամի, Դրոյի ու Սիլիկյանի շնորհիվ հայերը կարողացան «….զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը՝ միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին….»[5]:

Մայիսյան հերոսամարտերը բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Դրանք ոչ միայն վերջինիս փրկեցին բնաջնջումից, այլև հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը՝ ծնունդ տալով Հայաստանի առաջին հանրապետությանը. «Սարդարաբադի, Բաշ-Աբարանի և Ղարաքիլիսայի յաղթանակներու դարբնողները կը մնան Վասպուրականի ԱՐԱՄԸ՝ իր պողպատեայ կամքով, ԴՐՕՆ՝ իր շեշտակի խոյանքով, ու սպարապետ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆ և զօր. ՍԻԼԻԿԵԱՆ՝ ռազմավարի հանճարով»[6]: Մայիսի 28-ին կազմավորվեց և թուրքերի հետ առանձին բանակցություններ վարելու համար Բաթում ուղարկվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը: Այսպիսով՝ աշխարհի քաղաքական քարտեզում նորից հայտնվեց հայկական պետություն, հայ ժողովուրդը՝ որպես պետականություն ունեցող ազգ, աշխարհի քաղաքական ասպարեզ մուտք գործելու առաջին չափազանց ծանր ու դժվար, բայց կարևոր քայլերն էր անում:

1919 թ. մայիսի 28-ին ընդունվեց Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հռչակագիրը: Թվում էր՝ Հայաստանի առաջ խոստումնալից ապագայի հեռանկար է բացվում, բայց այն ընդհատվեց Հայաստանի խորհրդայնացմամբ:

Թեև Հայաստանի առաջին հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, բայց իր գոյության 2.5 տարիների ընթացքում ոչ միայն ապահովեց հայության ֆիզիկական անվտանգությունը, այլ նաև հող նախապատրաստեց մեր ժողովրդի ազգային, մշակութային ու քաղաքական կյանքի զարգացման համար: Իր անկումից հետո էլ Հայաստանի առաջին հանրապետությունը շարունակեց ապրել հայ ժողովրդի սրտում «….որպես մշտավառ հուշ անցյալի և իբրև կենդանի հույս ապագայի»[7], և այդ կենդանի հուշն ու հույսն էին, որ 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին ծնունդ տվեցին նախ՝ Արցախյան շարժմանը, ապա՝ հայկական երկու պետություններին՝ Հայաստանի Հանրապետությանն ու Արցախի Հանրապետությանը: 1988 թ. փետրվարից սկիզբ առած՝ մայր Հայաստանին միանալու արցախցիների արդար պահանջին ու խաղաղ ցույցերին Ադրբեջանի և ԽՍՀՄ իշխանությունները պատասխանեցին բիրտ ուժի կիրառմամբ: Ադրբեջանն ի վերջո սանձազերծեց լայնածավալ պատերազմ Արցախի դեմ: Ի պաշտպանություն Արցախի՝ պատերազմի մեջ ներքաշվեցին նաև Հայաստանն ու Սփյուռքը: Հայությունը անհավասար պատերազմի մեջ մտավ Ադրբեջանի և նրան թեև ոչ բացահայտ սատարող այլ ուժերի դեմ: Այդ անհավասար պատերազմում բեկումնային եղավ 1992 թ. մայիսը, որը նշանավորվեց հայոց պատմական բերդաքաղաք Շուշիի ազատագրմամբ: Մինչև 1992 թ. մայիսը Արցախի

Ազատագրված Շուշիում 1992թ.

մայրաքաղաք Ստեփանակերտը շարունակաբար գնդակոծվում էր իր նկատմամբ իշխող դիրք ունեցող Շուշիից, ուստի անհրաժեշտ էր լռեցնել Շուշիում գտնվող ադրբեջանական կրակակետերը: Բացի այդ՝ պարզ էր, որ ով տիրում է Շուշիին, նա տիրում է նաև Արցախին. անհրաժեշտ էր գրոհել Շուշին: Հայոց բերդաքաղաքի ազատագրման գործողությունը ծրագրվել էր ամիսների ընթացքում, գերգաղտնիության պայմաններում, իսկ ազատագրման հրամանը ստորագրվեց մայիսի 4-ին: Կար Շուշիի ազատագրման երկու ծրագիր. ի տես բոլորի դրված էր «Հրազդան» ծրագիրը՝ «Հրազդան-1»՝ Շուշիի ազատագրում, «Հրազդան-2»՝ Լիսագորի ազատագրում, և «Հրազդան-3»՝ Բերձորի(Լաչին) ազատագրում ու «Կյանքի ճանապարհ»-ի բացում, մինչդեռ Շուշիի ազատագրման իրական ծրագիրը՝ «Հարսանիք լեռներում»-ը, գաղտնի էր պահվում. այդ մասին գիտեին միայն գործողության ծրագիրը մշակողները: Շուշիի ազատագրման գործողության հրամանատար Կոմանդոսի վկայությամբ՝ ծրագրի մշակման գործում կարևոր նշանակություն են ունեցել հետախուզական տվյալները: Ըստ գեներալ Գուրգեն Դալիբալթայանի՝ Շուշին ազատագրելու համար անհրաժեշտ էր 10.000 զինվոր, մինչդեռ բերդաքաղաքն ազատագրվեց ընդամենը 1700 մարտիկներով՝ ընդդեմ թշնամու 2300-ի:Շուշիի ազատագրման գործողությունը սկսելու որոշումը կայացվեց մայիսի 7-ին, իսկ մայիսի 8-ին՝ ժամը 02:30-ին, գործողությունը սկսվեց և ավարտվեց մայիսի 9-ին, երբ քաղաքն ամբողջովին մաքրված էր թշնամուց: Շուշիի ազատագրման չորս ուղղությունների հրամանատարներն էին. «ա) Շոշի (արևելյան) ուղղություն, հրամանատար՝ Ա. Կարապետյան, բ) «26»-ի (հյուսիսային) ուղղություն՝ գրոհում էր Ստեփանակերտի կողմից, հրամանատար՝ Վ. Չիթչյան, գ) Լաչինի (հարավային) ուղղություն, հրամանատար՝ Ս. Բաբայան, դ) Քյոսալարի (հյուսիսարևմտյան) ուղղություն, հրամանատար՝ Ս. Օհանյան»[8]: Շուշի մտած հայկական ուժերը դաշնակցական Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորած ուժերն էին, ավելի հստակ՝ Ստեփանակերտի առաջին վաշտը: Մայիսի 8-ին՝ ժամը 06:30-ին, Աշոտ Ղուլյանը կապ է հաստատում Կենտրոնական շտաբի հետ և խնդրում Կոմանդոսին հաղորդել ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանին, որ Շուշիի բերդի պատի վրա է և մի քանի րոպեից կմտնի քաղաք:

Արդեն «….մայիսի 9-ին քաղաքի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու վրա կրկին բարձրացվեց հայոց եռագույնը»[9]:

Շուշիի ազատագրմանը հաջորդեց 1992 թ. մայիսի 18-ին Բերձորի (Լաչին) ազատագրումն ու «Կյանքի ճանապարհ»-ի բացումը, որով Արցախը միացավ մայր Հայաստանին: Ու թեև 1992 թ. ամռանը հայկական կողմն ունեցավ մի շարք տարածքային կորուստներ, բայց Շուշիի ազատագրումը, ըստ էության, արդեն վճռել էր պատերազմի ելքը, իսկ Բերձորի ազատագրմամբ «….ստեղծվեց Արցախ-Հայաստան ցամաքային կապը՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղին, բացվեց մարդասիրական միջանցքը, հույսի կամուրջը, հարթվեց կյանքի ճանապարհը, Լեռնային Ղարաբաղն ազատ շնչելու հնարավորություն ունեցավ»[10]: Սկսած 1992թ.-ից՝ մայիսը հայ ժողովրդի համար նշանավորվում էր եռատոնով. ամեն տարի՝ մայիսի 9-ին, հայ ժողովուրդը տոնում էր Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակը, Շուշիի ազատագրումը և Արցախի պաշտպանության բանակի ստեղծումը, ապա մայիսի 18-ին ոգեկոչում Բերձորն ազատագրած քաջերին և իր հաղթանակների մայիսը եզրափակում՝ մայիսի 28-ին տոնելով Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հաղթանակներն ու հայկական պետականության վերածնունդը: Թվում էր, թե հայկական հինավուրց բերդաքաղաք Շուշին, Բերձորն ու ամբողջ Արցախի Հանրապետությունը (12.000 քառ.կմ) «Կյանքի ճանապարհ»-ով անշրջելիորեն միացել են մայր Հայաստանին, բայց 2018թ. «թավշյա» իշխանափոխությունից հետո իշխող շրջանակների համար Արցախն ու արցախյան հիմնախնդիրը երկրորդ պլան մղվեցին, Արցախի հաղթանակը, որ հայության՝ վերջին հազարամյակի հաղթանակներից մեծագույնն էր, արժեզրկվեց ու ստորադասվեց տարատեսակ կեղծ «արժեքների» նկատմամբ, լայն տարածում գտավ և պետական քաղաքականություն դարձավ մեզ դեռևս 1920 թ. Կարսի անկման օրերից ծանոթ «խաղաղության» ու «բարեկամության» կեղծ քարոզը, որին լծված մերօրյա «բոլշևիկները» արեցին ամեն ինչ՝ հայ հասարակության գիտակցության մեջ Արցախի կարևորությունը կեղծ խաղաղությանն ու բարեկամությանը ստորադասելու, և իրենց արտաքին ու ներքին հանցավոր անտարբերությամբ մոտեցրին պատերազմը: Չնայած ազդեցիկ հակաքարոզին՝ պատերազմի առաջին իսկ օրվանից բանակը, կամավորները, ժողովուրդը դիմակայեցին, 44 օր անհավատալի սխրանքներ գործող հայոց զորքն ու նրա թիկունքը պահող հայ ժողովուրդը անզիջում պայքար մղեցին հայրենիքի համար, բայց նոյեմբերի 9-ին անսպասելիորեն թիկունքից դաշույնի հարված ստացան. նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ամեն օր «հաղթելու ենք» ասող իշխանության ղեկավարը գաղտնի ազգի ու բանակի թիկունքում կապիտուլյացիոն համաձայնագիր ստորագրեց:

Հայ ազգն իր պատմության ընթացքում պարտություններ ու դավաճանություններ շատ է տեսել, բայց առաջին անգամ է, որ կռվող բանակի թիկունքում պետության ղեկավարն անձնատվության (կապիտուլյացիայի) փաստաթուղթ է ստորագրում՝ ճանապարհ բացելով պանթյուրքիզմ կոչվող կործանարար աղետի առաջ, որի ճամփան այդքան դժվարությամբ կտրել էին Մայիսյան հերոսամարտերն ու Նժդեհի գլխավորած Զանգեզուրի ինքնապաշտպանությունը: Դավաճանական կապիտուլյացիայով պանթյուրքիզմի ծրագրին զոհաբերվեցին Արցախն ու Սյունիքի անվտանգությունը: Արցախը Հայաստանի Հանրապետության դարպասն է, որն այլևս բացվել է թշնամու առաջ, վտանգված է Հայաստանի ողնաշարը՝ Սյունիքը, իսկ հայրենիքը դավաճանաբար հանձնողը ամուր կառչել է իր՝ այլևս որևէ արժեք չունեցող աթոռից:

Մայիսն է, հայ ժողովուրդը ամեն տարվա պես մեծ ոգևորությամբ պետք է նշեր իր հաղթանակների եռատոնը, բայց 1992 թ.-ից հետո առաջին անգամ մայիսն ուրիշ է. այն այլևս խլված, դավաճանված հաղթանակների մայիս է լինելու, իսկ հայոց հինավուրց բերդաքաղաքը, որն այս տարի տոնելու էր իր ազատագրման 29-ամյակը, նորից գերված է, բայց ոչ թշնամու ռազմական ուժով, այլ դավաճանության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության հետագա գոյության համար անհրաժեշտ են ամուր Սյունիք և ապահով Արցախ, հետևաբար պետք է հնարավորինս արագ դասեր քաղել սխալներից և կանգնեցնել հայոց պետականության անկումը. Հապաղելը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ, իսկ երրորդ անկախության հնարավորություն մենք գուցե այլևս չունենանք:

Ծանոթագրություններ

1.Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.(քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Գալոյան, Եր., 2000, էջ 34:

2.«Ազատ խոսք» օրաթերթ, մայիս 1936, N 24:

3.Ասրյան Ա., Արամ Մանուկյան.կյանքը և գործը, Եր., 2008, էջ 196:

4.Նույն տեղում:

5.Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 34:

6.«Ազատ խոսք» օրաթերթ, հունիս 1936 (բացառիկ հրատարակություն), էջ 4:

7.Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 609:

8.http://www.historyofarmenia-am.armin.am/ am/ Encyclopedia _of _armenian _history Shushii_azatagrum.

9.http://www.ysu.am/newspaper/hy/1465544588#.YIPbiFUzbIU.

10. https://www.yerkir.am/news/view/174577.html?fbclid=IwAR1Md-xus PWPJB6jY PJBYM2SIwau8MbxWaKZTwftFp3fO_3c4_i_juXUWA4.

Օգտագործված գրականության ցանկ

ա) Գրականություն

1. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008:

2. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.(քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Գալոյան, Եր., 2000:

3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Մամուլ

1.«Ազատ խոսք» օրաթերթ, մայիս 1936, N 24:

2.«Ազատ խոսք» օրաթերթ, հունիս 1936 (բացառիկ հրատարակություն):

գ) Համացանցային նյութեր

1. http://www.historyofarmenia-am.armin.am/am/ Encyclopedia _of _armenian _history _Shushii_azatagrum.

2. http://www.ysu.am/newspaper/hy/1465544588#.YIPbiFUzbIU.

3. https://www.yerkir.am/news/view/174577.html?fbclid=IwAR1Md-xusPWPJB6j YPJBYM2SIwau8MbxWaKZTwftFp3fO_3c4_i_juXUWA4.

Ալիեւի տարածքային նկրտումները միջազգային օրէնքի լոյսին տակ

Գէորգ Յակոբճեան
Միջազգային իրաւունքի մասնագետ, Ավստրիոյ Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչ

Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը վերջին տարիներուն ու յատկապէս Արցախեան 44-օրեայ յպատերազմէն ետք ամէն առիթի հրապարակայինօրէն եւ առանց տատամսելու Հայաստանէն տարածքային պահանջքներ ունենալու մասին կը յայտարարէ: Յատկապէս Զանգեզուրի, Երեւանի եւ Սեւանի վրայ կեդրոնացած են անոր ախորժակները: Աւելին՝ ան դեռ 2018-ին յայտարարեց. «Երեւանը մեր պատմական տարածքն է, եւ մենք՝ ազերիներս, պէտք է վերադարձնենք այդ պատմական տարածքը: Այս մեր քաղաքական եւ ռազմավարական նպատակն է, որուն պէտք է աստիճանաբար մօտենանք»: Այսինքն, հռետորաբանութենէ եւ ամբոխավարական դրսեւորումներէ անդին, ալիեւեան յայտարարութիւնները **պետական, քաղաքական ու ռազմավարական առաջադրանք-նպատակ են** եւ, ըստ միջազգային օրէնքի ու յարաբերութիւններու, կը վերաբերին անկախ ու ինքնիշխան պետութեան մը, այս պարագային՝ միջազգային օրէնքի ենթակայ (սուպյէկթ) Հայաստանի անկախ հանրապետութեան տարածքներուն նկատմամբ նկրտումներ ունենալուն:

Միջազգային օրէնքի լոյսին տակ Ալիեւն ու Ազրպէյճանը իրաւունք ունի՞ն նման նկրտումներ ունենալու: Նկատի առած միջազգային օրէնքի եւ յատկապէս ՄԱԿ-ի կանոնադրութեան 2.4 յօդուածի՝ ուժի սպառնալիքով կամ գործադրումով այլ պետութիւններու տարածքային ամբողջականութիւնը եւ քաղաքական անկախութիւնը խաթարելէ ձեռնպահ մնալու սկզբունքը՝ առաջին հայեացքով անընդունելի ու արգիլուած թուացող ազրպէյճանական այս նկրտումները տեսականօրէն եւ գործնականօրէն բացառուած չեն: Որովհետեւ այստեղ իրաւական սկզբունքը կամ միջազգային յարաբերութիւններուն մէջ պետութեան ստանձնած պարտաւորութիւնը ուժի սպառնալիքով կամ գործադրումով այլ պետութեան մը տարածքային ամբողջականութիւնը եւ քաղաքական անկախութիւնը չխաթարելուն մասին է, այլ ոչ թէ տարածքային պահանջքներ-խնդիրներ ունենալը արգիլուած ըլլալուն: Անկախ պետութիւնները պատմութեան ընթացքին յաճախ ունեցած են, ունին եւ պիտի ունենան տարածքային վէճեր ու նկրտումներ:

Հայ-ազերիական յարաբերութիւններուն մէջ տարածքային խնդիրը աւելի հնչեղութիւն կը ստանայ, որովհետեւ երկու երկիրները միջազգային եւ դիւանագիտական յարաբերութիւններ չեն հաստատած իրար հետ, միջպետական սահմանները ճանչցող համաձայնագիր առ այժմ չկայ, եւ, ըստ ազրպէյճանական հերիւրանքներու, գոյութիւն ունի «վերադարձի» (return) եւ «պատմական արդարութեան վերականգնման» խնդիր, որուն ակունքները կ՚երթան 1918 թուական: Այստեղ փակագիծ մը բանալով՝ կ՚արժէ վերահաստատել 1918թ մայիս 28-ին կերտուած Հայաստանի առաջին հանրապետութեան ունեցած գերկարեւոր արժէքը, որ հայութեան եւ Հայաստանին շնորհեց միջազգային յարաբերութիւններուն մէջ անկախ ու ինքնիշխան պետութիւն, միջազգային օրէնքի ենթակայ ըլլալու եւ ըստ այնմ բոլոր հնարաւորութիւններէն ու հետեւանքներէն օգտուելու իրաւունքը:

Վերադառնանք բուն նիւթին: Թէեւ Ազրպէյճան բազմիցս պաշտօնապէս յայտարարած է, թէ Հայաստանէն տարածքային պահանջքներ չունի, այլ խօսքը «վերադարձի» մասին է, վերատիրանալու նախահայրերուն կալուածներուն եւ պատմա-մշակութային կոթողներուն, Ալիեւի իրարայաջորդ ռազմատենչ յայտարարութիւնները, սպառնալիքներն ու երբեմն գործողութիւնները լրջօրէն կասկածելի եւ անհաւատալի կը դարձնեն տարածքային պահանջքներ չունենալու պաշտօնական մեկնաբանութիւնները: Ուրեմն, ինչպէս նախաբանին մէջ նշուեցաւ, Ազրպէյճանը պետական մակարդակի ռազմավարական նպատակ ունի Հայաստանի տարածքներու գոնէ մէկ երրորդին նկատմամբ: Տեսականօրէն այս նպատակի իրականացման համար Ազրպէյճան ունի երկու ճանապարհ՝ օրինական եւ ապօրինի. ապօրինին՝ ուժի սպառնալիքով կամ գործադրումով, օրինականը՝ խաղաղ պայմաններու մէջ միջազգային օրէնքի տրամադրութիւններուն համաձայն՝ միջազգային պայմանագրի ստորագրում կամ դատական գործընթաց: Ստորեւ կը քննարկուին այս ճանապարհները:

Ազրպէյճան իր վարքագիծով ու յայտարարութիւն-ներով արդէն իսկ կը խախտէ վերը նշուած սկզբունքի «ուժ սպառնալու» բաժինը: Յարմար պահու Զանգեզուրը, Երեւանն ու Սեւանը որպէս ազրպէյճանական հողեր վերադարձնելու սպառնալիքը ինքնին Ազրպէյճանի ստանձնած միջազգային պարտաւորութեան եւ

միջազգային օրէնքի կոպիտ խախտում է, որ կ'ենթադրէ ՀՀ եւ միջազգային ընտանիքին կոշտ ու կտրուկ արձագանքը, համապատասխան միջամտութիւնը եւ զայն պատասխանատուութեան ենթարկելը: Ճիշդ այս նրբութիւնը նկատի առած՝ կարելի է աւելի հասկնալ, թէ Ալիեւ խորքին մէջ ինչ ըսել կ'ուզէր, երբ «առանց թանկի» Երեւան-Սեւան հասնելու մասին կը խօսէր: Ան պարզապէս կը փորձէր միջազգային ընտանիքին աչքերուն փոշի ցանել:

Գալով ուժի գործադրման հաւանականութեան՝ եթէ նկատի առնուի, որ Ազրպէյճան անցնող Արցախեան պատերազմին մարդկութեան դէմ յանցագործութիւններ ու պատերազմական ոճրագործութիւններ գործեց, ռազմագերիներու հարցով խախտեց իր պարտաւորութիւնը, Հայաստանի արեւելեան սահմանին ապահովական ու ոտնձգութեան բազմաթիւ դէպքեր արձանագրեց, Պաքուի թանգարանային խայտառակութիւնը կազմակերպեց, հայատեացութեան եւ ցեղասպանական քաղաքականութեան շօշափելի ու փաստարկուած դրսեւորումներ ունեցաւ, ապա պատեհ առիթի ՀՀ-ի նկատմամբ ուժ գործադրելու հաւանականութիւնը չի բացառուիր: Հետեւաբար ոչ մէկ երաշխիք, ընդհակառակը, տարածաշրջանային ու միջազգային վերջին զարգացումներու լոյսին տակ, լուրջ վտանգներ կան, որ Ազրպէյճան իսկապէս ուժի կիրառումով փորձէ Հայաստանի նկատմամբ իր տարածքային նկրտումներուն հասնիլ: Ահա այս հաւանականութիւնը կանխելու համար շատ բան կախուած է ՀՀ իշխանութիւններէն, բանակէն, պետական հաստատութիւններու գործունէութենէն, ԱԳՆ-ի աշխուժ ու նախաձեռնող աշխատանքներէն, դաշնակիցներու հետ ճիշդ յարաբերութիւններու մշակումէն: Իսկ այսօրուայ ՀՀ իշխանութիւնները, որոնք անձնատուութեան համաձայնագիր ստորագրած են Ազրպէյճանի հետ, որոնք ամէն առիթի Ալիեւին քմծիծաղին ու անարգանքին կ'արժանանան, ուղղակի տկարացուցած են պետութեան ինքնիշխանութիւնն ու ազգային անվտանգութիւնը, ոչ իրաւական, ոչ քաղաքական, ոչ ալ բարոյական իրաւունք ունին պետութիւնն ու ժողովուրդը այսպէս պայթիւնավտանգային կործանման եզրին պահելու եւ, շուտով հանրային կեանքէ հեռանալով, պարտաւոր են նոր իշխանութիւններուն հնարաւորութիւն տալ ազրպէյճանական նկրտումներուն իրականացումը կանխելու:

Եթէ պահ մը կարելի է ենթադրել (թէեւ շատ դժուար է ու անիրատեսական), որ Ազրպէյճանը օրինական միջոցներով, առանց ուժի սպառնալիքի կամ կիրառման փորձէ Հայաստանի հետ իր տարածքային նկրտումներուն հարցերը լուծել խաղաղ ու միջազգային օրէնքի տրամադրութիւններուն համաձայն, ապա մինչ օրս Արդարադատութեան միջազգային դատարանին մօտ պետութիւնները 9 դասերու (categories – կատեկորիաներու) վրայ հիմնուած իրենց տարածքային պահանջներու հայցերը իրաւականօրէն փորձած են ապացուցել եւ արդարացնել: Այդ կատեկորիաներն են՝ 1.միջազգային պայմանագրեր, 2. աշխարհագրութիւն,

3. տնտեսութիւն, 4. մշակոյթ-ազգային ինքնութիւն, 5.գործող վերահսկողութիւն (effective control), 6. պատմութիւն (տարածքին տիրանալու պատմական իրաւունք), 7. Uti possidetis-, 8. ազնուականութիւն (elitism), 9. գաղափարախօսութիւն:

Հայ-ազրպէյճանական տարածքային խնդրի խաղաղ լուծման մէջ վերը նշուած կատեկորիաները քննարկելէ առաջ, ինչպէս նշուեցաւ, երկու հիմնական տարբերակ կարելի է տեսնել միջազգային օրէնքի տրամադրութիւններուն համաձայն: Ա. ՀՀ-ն ու Ազրպէյճանը, որպէս ուղղակի կամ միջնորդաւորուած բանակցութիւններու արդիւնք, միջպետական յարաբերութիւններ կը մշակեն եւ յատկապէս միջպետական սահմաններու համաձայնագրի ստորագրման կը հասնին, եւ այդ համաձայնագրերը երկու երկիրներուն սահմանադրական տրամադրութիւններուն համաձայն կը վաւերացուին:Այս տարբերակին մէջ, վարը ներկայացուելիք դասերուն (կատեկորիաներուն) զուգահեռ, նկատի կ'առնուին բանակցող կողմերուն կարողութիւնները, հզօրութիւնը, ուժային յարաբերակցութիւնը, ազգային անվտանգութեան եւ ինքնիշխանութեան մակարդակը, ներքին ու արտաքին քաղաքականութեան դրսեւորումները, տարածաշրջանային դաշնակցութիւնները, հաւասարակշռութիւնն ու կապերը, դիւանագիտական հմտութիւնները, կողմերուն առաջնահերթութիւնները, ռազմավարութիւններն ու բազմաթիւ այլ գործօններ: Ըստ երեւոյթին, մինչ օրս ՀՀ-ն ներկայացնող միջազգայինօրէն հեղինակազրկուած իշխանութիւնները, որոնք Արցախեան վերջին պատերազմի ողբերգութեան, պարտութեան եւ պետականակործան հետեւանքներուն ամբողջական պատասխանատուներն են, բնականաբար չունին եւ չեն կրնար ունենալ այս գործօններէն ոչ մէկը, ուստի անոնց հեռացումն ու նոր իշխանութիւններու ձեւաւորումը դարձեալ անխուսափելի հրամայական կը դառնայ: Բ.Ազրպէյճան եւ Հայաստան պետութիւններու համաձայնութեամբ ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի կամ յատուկ «ad hoc» դատարանի եւ կամ արպիթրաժ մարմնի մօտ տարածքային հարցերը քննարկելու

դատական գործընթաց կը սկսին: Այս գործընթացն ունի պատմահրաւական բազմաթիւ նրբութիւններ, եւ մեծ հաւանականութեամբ Ազրպէյճանը, վերը նշուած ինը կատեկորիաներէն հետեւեալներուն վրայ հիմնուած, կը ներկայացնէ իր փաստարկներն ու հակափաստարկները:

1. **Միջազգային պայմանագրեր**. ասոնց մէջ կը մտնեն 1918 մայիս 28-էն ետք ստորագրուած բոլոր պայմանագրերը եւ համաձայնագրերը, ինչպէս նաեւ խորհրդային տարիներու համաձայնագրերը (ներառեալ անոնք, որոնք միջազգային օրէնքի լոյսին տակ անվաւեր ու ապօրինի են, սակայն տէ ֆաքթօ մինչ օրս կը գործեն): 2. **«Պատմական» հիմքեր.** Ազրպէյճանը խեղաթիւրուած պատմական փաստերով փորձէ փաստել, թէ իր պահանջած տարածքներուն վրայ դադարները հայերէն առաջ իշխած են (first possession) եւ աւելի երկար տիրացածեն (length of possession) այդ տարածքներուն, քան հայերը: Այստեղ նոյնիսկ Ալիեւ իր ընտանեկան արմատներու պարագան կրնայ օգտագործել՝ պնդելով, որ իր հօրենական կողմը՝ Զանգեզուրէն, մօրենական կողմը Երեւանէն սերած է: Բնականաբար, այս թեզը, մեղմ ըսած, ծիծաղելի է բազմաթիւ հանգամանքներու բերումով, որոնց վրայ չ'արժէ այստեղ կեդրոնանալ. միայն այն փաստը, որ Ազրպէյճան անունով պետութիւն գոյութիւն չունէր նախքան 1918, բաւարար է այս թեզը ջրելու: 3.**Տնտեսական հիմնաւորումներ.** Ազրպէյճանը իր տնտեսութեան եւ կայուն զարգացման, մարդոց եւ ապրանքներու ազատ շրջանառութեան համար Զանգեզուրի միջանցքին տիրանալու անհրաժեշտութեան փաստարկներ փորձէ ներկայացնել: 4.**Uti possidetis.** այստեղ որպէս քաղաքական ստորաբաժանումներու՝ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ազրպէյճանի՝ խորհրդային տարիներուն գործած համաձայնագրերն ու Խորհրդային Միութեան օրէնսդրութիւնը ընդհանրապէս քննարկման եւ արժեւորման առարկայ կը դառնան երկու պետութիւններուն եւ դատարանին կողմէ: 5. **Բանթուրանական գաղափարախօսութիւն**. Ազրպէյճանը կրնայ առաջ տանիլ Թուրքիոյ հետ բանթուրանական եղբայրութեան եւ գաղափարախօսութեան հիմնաւորումները որպէս հիմք՝ ՀՀ-էն տարածքներ պահանջելու: Այստեղ անհրաժեշտ է բանթուրանական գաղափարախօսութեան՝ ծաւալապաշտական, ցեղասպանական քաղաքականութիւն եւ հայ ժողովուրդի հաւաքական գոյութեան սպառնալիք պարունակելու թեզը առաջ տանիլն ու դատապարտելը:

Ամփոփենք: Ազրպէյճանը հիմնականին մէջ չորս ճանապարհ ունի Հայաստանի նկատմամբ իր տարածքային նկրտումներուն հասնելու: **Ա.** Ազրպէյճան ուժի գործադրման սպառնալիքով ՀՀ-էն տարածքներ կը փորձէ խլել:Այստեղ նոյնիսկ այն միտքը, որ կրնան գոյութիւն ունենալ ՀՀ այնպիսի իշխանութիւններ, որոնք նոր պատերազմէ խուսափելու պատրուակով ու մոլորութեան մէջ կը զիջին հողեր կամ տարածքներ, ինքնին անընդունելի, խիստ դատապարտելի եւ անտեղեակայելի է, որովհետեւ այս տրամաբանութիւնը ոչ միայն կործանարար է մեր պետութեան եւ ժողովուրդին համար, այլ նաեւ կը հակասէ ու կը խախտէ միջազգային օրէնքի տարրական սկզբունքները. այն անկախ ու ինքնիշխան պետութիւններու եւ ժողովուրդներու գոյակցութեան ու միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան իսկական սպառնալիք է: Հետեւաբար պէտք է բացառել այս տարբերակը ամէն գնով: **Բ.** Ազրպէյճանը իսկապէս ուժի գործադրումով կը փորձէ տարածքներ խլել ու թէեւ կոպտագոյնս կը խախտէ միջազգային օրէնքը, սակայն, նկատի առած ներկայի միջազգային հանրութեան վիճակը եւ «գործող» ապարդիւն ընթացակարգերը-գործիքակազմերն ու նման դէպքերու մէջ միջազգային հանրութեան անճարութեան եւ անկարողութեան մակարդակը, ՀՀ-ի ռազմավարական դաշնակիցներու կողքին, տարածքներ չկորսնցնելու հիմնական ու էական երաշխիքը հայոց բանակին ու ժողովուրդին պատրաստուածութիւնն է, մեր սեփական ժողովուրդի կեցուածքը. որքան մեծ ու հզօր ըլլան չընկրկելու եւ չյանձնուելու կամքն ու յանձնառութիւնը, ամէն գնով պայքարելու վճռականութիւնը, այդքան դժուար պիտի ըլլայ Ազրպէյճանի նպատակներու իրականացումը: **Գ.**Ազրպէյճանն ու Հայաստանը բանակցային գործընթացէ անցնելէ ետք դիւանագիտական յարաբերութիւններ ստեղծող, սահմանային եւ տարածքային հարցերը լուծող միջազգային համաձայնագիր կը ստորագրեն ու կը վաւերացնեն: Այստեղ մեծ ազդեցութիւն ունին Արցախեան հիմնախնդրի ներկայի ու ապագայի զարգացումները, տարածաշրջանային վերիվարում-ները, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները, Ազրպէյճանի ու Հայաստանի ներքին քաղաքական զարգացումները եւ այլ գործօններ: **Դ.** Հայաստանն ու Ազրպէյճանը կը դիմեն դատական գործընթացի եւ կ'ենթարկուին դատարանին առած որոշումին: Բնականաբար, ամէնէն իտէալական, խաղաղ, կայուն եւ երկարաժամկետ միջոցը երրորդ տարբերակն է, որուն նախապայմանը մեր պետականութեան հզօրացումն է:

Հունավորել համահայկական ներուժը, ձևավորել համազգային օրակարգ

Արմեն Գրիգորյան
ՀՅԴ Հայաստանի ԳՄ ֆինանսների և էկոնոմիկայի հանձնախմբի նախագահ

Արցախյան ազատագրական պայքարից անցել է շուրջ 30 տարի: 1994 թվականին կնքված հրադադարին հաջորդեց բանակցային փուլը, որի լեգիտիմ և ընդունելի ձևաչափը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափն էր: Հայ ազգը հաղթել էր և ազատագրել իր պատմական հայրենիքի կարևորագույն մասը՝ Արցախը: Ի՞նչ արեց Ադրբեջանը: Այո՛, չընդունեց հայկական կողմի հաղթանակը և իր բարեկամ Թուրքիայի հետ շրջափակեց Հայաստանն ու Արցախը՝ հույս ունենալով, որ մենք կհայտնվենք սոցիալ-տնտեսական ծայրահեղ ծանր վիճակում և կգնանք որոշակի զիջումների: Մենք, իհարկե, չգնացինք զիջումների և փորձեցինք զարգանալ: Որոշ առումներով ստացվեց, և մի քանի տարվա ընթացքում ուղղեցինք մեր մեջքը: Դա հնարավոր էր, քանի որ հաղթել էինք: Անցան տարիներ. այդ շրջանն այս հոդվածում բաց կթողնենք, բայց մի կարևոր հանգամանք չենք կարող անտեսել, այն է՝ պարբերաբար շրջանառության մեջ էր դրվում մի վտանգավոր թեզ, որ պետք է զիջել, չենք կարող զարգանալ, քանի որ ունենք Արցախի հիմնախնդիր: Այս վտանգավոր ձևակերպմանը հավատացողներ գտնվեցին, և սկսվեց հասարակության տարանջատման փուլը: Ի վերջո հասանք մի հանգրվանի, երբ ՀՀ-ում տեղի ունեցավ իշխանափոխություն: Այդ հանգրվանը 2018 թվականն էր: Անցել է երեք տարի: Երեք տարվա ընթացքում պետությունն ու հասարակությունը անցան բազում զրկանքների միջով, պարտվեցինք Արցախի դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմում: Թանկ վճարեցինք, շատ թանկ, դեռ վճարում ենք: Հայաստանի գործող իշխանությունները ամեն օր խոսում են ճանապարհների ապաշրջափակման մասին՝ ներկայացնելով տնտեսության զարգացման հնարավորություն: Անշուշտ, ճանապարհները կարևոր են, բայց արդյոք դրանք կարևո՞ր չէին Ադրբեջանի համար 1994 թվականին: Ադրբեջանը, ճանապարհները փակելով, ցույց տվեց, որ չի ընդունում մեր հաղթանակը, իսկ իշխանություններն այսօր ի՞նչ են ցույց տալիս՝ լինելով նույն ճանապարհները բացելու կողմնակից: Արդյոք Արցա՞խն է պատճառը, որ այսօր Հայաստանը սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ծայրահեղ ծանր վիճակում է: Կարծում եմ, որ ոչ: Մենք ունեինք կայուն և կանխատեսելի միջավայր, տարածաշրջանի հզոր բանակ, դանդաղ, բայց զարգացող երկիր, երբ ունեինք Արցախ: Խնդիրներ կային, այսօր էլ կան, վաղն էլ կլինեն. մարդկանց պահանջները ժամանակի ընթացքում փոխվում են, և դա բնական է:

Արցախի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ Ասկերան, Հադրութ, Մարտակերտ, Մարտունի, Շահումյան, Շուշի, Քաշաթաղ և

մայրաքաղաք Ստեփանակերտ: Որոշ շրջաններ ամբողջությամբ կորցրել ենք, և այսօր դրանք գտնվում են թշնամու տիրապետության տակ, իսկ մյուսները պարզապես բզկտված են:

Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու այն ռեսուրսներն ու հնարավորությունները, որոնք կորցրել ենք, և թե ինչու է պետք վերականգնել Արցախի ամբողջականությունը: Արցախը վերադարձնելու նպատակ ձևակերպելը նշանակում է հայ ազգի՝ սեփական հայրենիքում ապրելու իրավունքի ամրապնդում և արդարության վերականգնում: Ինչևէ, վերադառնանք վերոնշյալ հանգրվանին՝ 2018 թվականին: Հասկանալու համար, թե ինչպիսի Արցախ ունեինք, պետք է միասին քննարկենք սոցիալական, մակրոտնտեսական մի քանի և տնտեսության որոշ ճյուղերի պատկերը 2018 թվականի դրությամբ: Մեկ հոդվածով, իհարկե, դժվար կլինի ամբողջական պատկերը ստանալ, բայց պատկերացում կազմել իհարկե կարող ենք:

Այսպիսով. սոցիալական վիճակը երեխաների դեպքում

Նախ դիտարկենք կրթական ոլորտը:

Արցախում 2018 թվականին՝ մինչ ՀՀ-ում իշխանափոխությունը, գործում էր 51 նախադպրոցական հիմնարկ (ՆԴՀ), որոնցից 2-ը մասնավոր էր, իսկ մնացածը՝ մանկապարտեզ, ընդհանուր ունեինք 810 սենյակ, որոնք զբաղեցնում էին 25287.7 քառ./մ տարածք: Միջին հաշվով՝ յուրաքանչյուր ՆԴՀ հաճախել է 77 երեխա, և այդ հիմնարկներում աշխատել է 899 մարդ, որոնցից 386-ը (42.9 տոկոսը) կազմում էին մանկավարժադաստիարակչական անձնակազմը: Պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի կորուստ ունենք նախադպրոցական հիմնարկների առումով, տես հետևյալ աղյուսակը:

	ՆԴՀ-ների քանակը, միավոր	Խմբերի քանակը, միավոր		Տեղերի քանակը, միավոր	Երեխաների թվաքանակը, մարդ	
		ընդամենը	այդ թվում՝ 3 և բարձր տարիքի երեխաների համար		ընդամենը	նրանցից՝ աղջիկներ
ք. Ստեփանակերտ	8	37	34	1330	1506	748
Ասկերան	9	18	16	450	403	195
Հադրութ	6	11	9	285	269	132
Մարտակերտ	8	21	17	511	501	245
Մարտունի	10	30	24	822	723	322
Շահումյան	2	3	2	74	76	44
Շուշի	4	10	8	275	267	139
Քաշաթաղ	4	8	7	236	190	81
Ընդամենը	**51**	**138**	**117**	**3983**	**3935**	**1906**

Թշնամու կողմից օկուպացված տարածքները համադրելով այսօրվա քարտեզի հետ՝ արդեն հասկանալի է այն աղետալի վիճակը, որում հայտնվել է հայ ազգը, մասնավորապես՝ Արցախն ու արցախցին:

Գրեթե նույն պատկերն է հանրակրթական դպրոցների առումով, որոնք Արցախում 220-ն էին. Շահումյանի շրջանում՝ 16, Շուշիի շրջանում՝ 7, որից 2-ը՝ գյուղական համայնքի, Քաշաթաղի շրջանում՝ 53, Հադրութում՝ 26: Ընդհանուր առմամբ Արցախում 2018 թվականին կար 2606 դասարան՝ տարբեր տարիքային խմբերի: Ավելի քան 1800 աշակերտ ամեն տարի ավարտում էր դպրոցը: Արցախում ընդհանուր առմամբ ձևավորվել էր 2606 դասարան: Բաշխվածությունը նշված շրջաններում հետևյալն է. Շահումյան՝ 167, Շուշի՝ 770, Քաշաթաղ՝ 528, Հադրութ՝ 315: Վերջին տարիներին աննախադեպ աճել էր երաժշտական, արվեստի դպրոցների և ստեղծագործական կենտրոնների թիվը: Միայն 2014 թվականից մինչև 2018 թվականը այն ավելացել էր շուրջ 30 տոկոսով՝ 2814-ից դառնալով 3657: Քանի որ խոսում ենք Արցախի կրթօջախներից, չենք կարող չանդրադառնալ նաև գրադարաններին և գրքային ֆոնդերին:

	Հանրակրթական դպրոցներում		Երաժշտական, արվեստի դպրոցներ և ստեղծագործական կենտրոններ		Գրադարաններ	
	դասարանների քանակը	աշակերտների թվաքանակը	քանակը ըստ շրջանների	աշակերտների թվաքանակը	քանակը	գրքային ֆոնդ
ք. Ստեփանակերտ	351	8647	4	2474	3	273544
Ասկերան	380	2466	3	843	1	10063
Հադրութ	315	2067	3	667	1	37439
Մարտակերտ	355	3387	3	716	1	22892
Մարտունի	440	3677	3	1060	1	17427
Շահումյան	167	743	1	80	1	5326
Շուշի	70	926	2	687	1	19808
Քաշաթաղ	528	2059	1	332	1	10024
Ընդամենը	**2606**	**23972**	**20**	**6859**	**10**	**396523**

Այս ամենը նշանակում է ունենալ միջոցներ, շենքային պայմաններ, գույք և կյանքի որակի դրական փոփոխություն: Արցախի վաղվա սերունդը տեր կլիներ այս հսկա կապիտալին, տեր կլինի, պիտի լինի:

Դիտարկենք տնտեսական ոլորտը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունը: Տնտեսության մյուս ճյուղերին կանդրադառնանք հաջորդ հոդվածներում: Նախքան գյուղատնտեսության ցուցանիշներին անդրադառնալը դիտարկենք մի քանի մակրոտնտեսական ցուցանիշներ: Ինչ վիճակում էր Արցախի Հանրապետությունը 2018 թվականին: Նախ պետք է նշենք, որ Արցախում վերջին տարիներին տնտեսական ակտիվությունը երկնիշ էր (2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ աճել էր 15.4 տոկոսով, իսկ 2018 թվականին՝ 2017 թվականի համեմատությամբ 12.1 տոկոսով): 2018 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2017 թվականի համեմատությամբ աճել էր 11.9 տոկոսով, որը շուկայական արժեքով կազմում է 310252.3 մլն. դրամ: Նույն ժամանակաշրջանի շինարարական ոլորտի աճը կազմում է 11.5 տոկոս կամ 52504.8 մլն. դրամ, ծառայությունների ոլորտինը՝ 13.9 տոկոս կամ 67120.5 մլն. դրամ, առևտրաշրջանառությանը՝ 3.1 տոկոս կամ 120878.3 մլն դրամ: Պատկառելի ցուցանիշ ուներ արտաքին առևտուրը. Արցախում 2018 թվականին 2017 թվականի համեմատությամբ արտահանման աճը կազմել է 29 տոկոս, իսկ ներմուծմանը՝ 22.6 տոկոս: Սա նշանակում է, որ Արցախն արտահանող երկիր էր և աշխարհին ասելիք ուներ: Միջին ամսական աշխատավարձն աճել էր 3.7 տոկոսով, իսկ սպառողական գների ինդեքսը՝ 1.8 տոկոսով: Մակրոմակարդակում Արցախն առաջընթաց էր ապրում: Դետալային մի քանի շտկումներ անելուց հետո, նոր գործիքակազմի կիրառմամբ կարելի էր հասնել առավել ներառական տնտեսական կարգին:

Քանի որ Արցախն ուներ զարգացող գյուղատնտեսություն, չէր կարող լինել պարենային անվտանգության խնդիր: Կար շուրջ 93 հազար հեկտար ցանքատարածք, որն օգտագործվում էր տարբեր նպատակներով՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերից մինչև տեխնիկական մշակաբույսերի մշակում: Արցախում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածքը 2018 թվականին կազմում էր 80180.5 հա, որտեղից ստացվել էր շուրջ 1388129.9 ցենտներ բերք: Տեխնիկական մշակաբույսերին հատկացված էր 5308 հեկտար ցանքատարածք, որոնց մեջ առյուծի բաժինն ընկնում էր ծխախոտին՝ 164.9 հա, և 2018 թվականին ստացվել էր 16897.4 ցենտներ ծխախոտ, կտավատը՝ համապատասխանաբար 2032 հա և 16748.4 ցենտներ, արևածաղիկը՝ 2511.6 հա և 20217 ցենտներ: Ավելի քան 45016.6 ցենտներ կարտոֆիլի բերք էր ստացվել 623.7 հեկտարից: Ըստ վարչական շրջանների պատկերն ունենալու համար բերված աղյուսակներից կարելի է հասկանալ, թե ինչ տեսակի կորուստ ունենք:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածքներ, համախառն բերքը և միջին բերքատվությունը բոլոր տնտեսություններում և ըստ շրջանների

	Ցանքատարածք, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածք, հա	Հավաքած բերքը, ցենտներ	1 հեկտանի միջին բերքատվությունը, ցենտներ
Արցախի Հանրապետություն	**80 207,5**	**69 496,5**	**1 388 129,9**	**20,0**
այդ թվում՝				
Ասկերան	13 359,2	12 350,9	254 584,8	20,6
Հադրութ	18 682,0	15 986,0	322 078,0	20,1
Մարտակերտ	8 281,3	7 722,0	114 627,6	14,8
Մարտունի	16 080,6	15 558,4	340 843,2	21,9
Շահումյան	164,8	164,8	3 302,2	20,0
Շուշի	254,3	240,3	4 314,2	18,0
Քաշաթաղ	23 385,3	17 473,8	348 379,9	19,9

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքներ, բոլոր տնտեսություններում և ըստ շրջանների

	Ընդամենը ցանքատարածք, հա	այդ թվում՝						
		հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, հա	տեխնիկական մշակաբույսեր, հա	կարտոֆիլ, հա	բանջարաբոստանային մշակաբույսեր, հա	բոստանային մշակաբույսեր, հա	կերային մշակաբույսեր, հա	ծաղիկ, հա
Արցախի Հանրապետություն	**92 941,7**	**80 110,5**	**5 308,0**	**623,7**	**1 099,9**	**355,8**	**5 443,6**	**0,2**
այդ թվում՝								
Ասկերան	15 754,8	13 359,2	1 419,0	162,9	279,3	35,5	498,7	0,2
Հադրութ	19 924,4	18 682,0	650,0	101,0	130,4	21,0	340,0	-
Մարտակերտ	9 884,9	8 276,3	1 042,9	138,8	76,7	14,3	335,9	-
Մարտունի	21 093,1	16 053,6	2 030,5	132,9	250,6	13,5	2 612,0	-
Շահումյան	583,3	164,8	-	23,0	19,4	0,1	376,0	-
Շուշի	350,1	254,3	4,5	24,1	13,8	0,4	53,0	-
Քաշաթաղ	25 351,1	23 320,3	161,1	41,0	329,7	271,0	1 228,0	-

Դատելով պտղատու այգիների քանակից, մշակվող այգիների, տնկիների, բերքի տեսակներից՝ Արցախում գյուղատնտեսությունը, բացի այն, որ սոցիալական խնդիրներ էր լուծում և ապահովում զբաղվածությունը, նաև մշակույթ էր: Տնկարկները կազմում էին 4402.6 հեկտար, որոնց բերքատվությունը կազմել է 85849 ցենտներ: Դրանցից կորիզավորները զբաղեցնում էին 316.6 հա, իսկ բերքը կազմում էր 5386.5 ցենտներ, ընկուզապտուղները՝ 385 հա, և բերքը՝ 9668 ցենտներ, միայն Հադրութում դրանք զբաղեցնում էին 165.8 հա: Մեծ տարածք էին զբաղեցնում թթի այգիները՝ շուրջ 899 հեկտար, որտեղից հավաքվում էր 13053.1 ցենտներ թութ, իսկ խաղողի այգիները զբաղեցնում էին 1761.7 հա, որից 1131.1 հեկտարը՝ Մարտունիում, և տալիս 74312.4 ցենտներ բերք, ընդ որում՝ միայն Մարտունին 51871.4 ցենտներ խաղողով էր ապահովում:

Պտղատու այգիների և հատապտղանոցների տարածքը (ներառյալ տնկարանները), համախառն բերք և միջին բերքատվությունը բոլոր տնտեսություններում և ըստ շրջանների

	Ընդամենը Տնկարկներ, հա	որից՝ պտղատու, հա	Հավաքած բերքը, ցենտներ		1 հեկտանի միջին բերքատվությունը, ցենտներ
			ընդամենը	որից՝ պտղատու	
Արցախի Հանրապետություն	**4 402,6**	**3 841,8**	**85 849,0**	**83 731,0**	**21,8**
այդ թվում՝					
Ասկերան	1 068,6	668,1	22 944,7	22 931,7	34,3
Հադրութ	506,7	460,2	14 803,0	14 779,0	32,1
Մարտակերտ	548,0	524,0	18 615,7	16 534,7	31,6
Մարտունի	1 718,1	1 718,1	12 787,3	12 787,3	7,4
Շահումյան	11,3	11,3	160,0	160,0	14,2
Շուշի	39,9	39,9	307,0	307,0	7,7
Քաշաթաղ	510,0	420,2	16 231,3	16 231,3	38,6

Այստեղ կան բազմաթիվ մանրամասներ, որոնց կարելի է ավելի հանգամանորեն անդրադառնալ, բայց դրանք կներկայացնենք հաջորդիվ: Կներկայացնենք նաև էներգետիկ, տրանսպորտի, հանքարդյունաբերության ճյուղերի պատկերը:

Զարգանալու և համակարգային փոփոխություններ կատարելու, լրիվ հաշվարկված հայեցակարգեր կիրառելու համար մեզ անհրաժեշտ է հունավորել համահայկական ամբողջ ներուժը և դարձնել համազգային օրակարգ՝ մտքում միշտ ունենալով հայ ազգի հայահավաք և հողահավաք ազգային պետության տեսլականը:

Դասական էթնիկ լոբբինգի հաղթանակն ու ԱՄՆ-ի փոփոխվող արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում

Գևորգ Ղուկասյան
ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհրդի հատուկ ծրագրերի պատասխանատու, քաղաքագիտության ասպիրանտ

Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի կապակցությամբ իր ուղերձով Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: ԱՄՆ-ն դարձավ այն պետություններից մեկը, որոնք Հայոց ցեղասպանությունը ճանաչել են միաժամանակ և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանությունների մակարդակով: Կատարվածը, մի կողմից, ՀՅԴ Հայ դատի ամբողջ պայքարի կարևոր հանգրվաններից էր և առանցքային ձեռքբերումներից, մյուս կողմից՝ հստակորեն ցուցում է մեր տարածաշրջանում ամերիկյան տասնամյակներ տևած քաղաքականության վերափոխումը: Ի պատիվ Հայ դատի նվիրյալների՝ նրանք կարողացան գրագետ և հմուտ աշխատանքով հասունացնել հասարակական-քաղաքական նպաստավոր պահը, որն ուղեկցվեց Թուրքիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության փոփոխությամբ:

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբին տասնամյակների նվիրված աշխատանքի շնորհիվ հաջողվել էր հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը ամերիկյան պետության գրեթե բոլոր մակարդակներում՝ նահանգայինից մինչև քաղաքային և արդեն դաշնային: Ամերիկյան հասարակական-քաղաքական շրջանակներում Հայոց ցեղասպանությունը համարվում է կատարված փաստ, որի ամբողջական արձանագրմանը պակասում էր միայն ԱՄՆ նախագահի խոսքը:

Սույն հոդվածով ցանկանում ենք անդրադառնալ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի՝ որպես էթնիկ լոբբինգ իրականացնող ինստիտուտի գործառութային առանձնահատկություններին և նախագահ Բայդենի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման լույսի ներքո փորձել վեր հանել մեր տարածաշրջանում ամերիկյան արտաքին քաղաքականության վերափոխման և զարգացման հիմնական վեկտորները:

Էթնիկ լոբբինգի ինստիտուտը որպես սփյուռքների քաղաքական գործունեության դերակատար

Ներկայումս, պայմանավորված շարունակական գլոբալացմամբ, աշխարհում նկատվում է էթնիկ համայնքներում ապրողների թվի կտրուկ աճ: Այսպես, եթե 1960-ական թթ. աշխարհում կար մոտ 75.5 միլիոն մարդ, որ ապրում էր սեփական հայրենիքից դուրս, ապա 2000 թ.՝ 176.6 միլիոն, 2009 թ.՝ 213.9 միլիոն, իսկ 2019թ.՝ 272 միլիոն: Հետևաբար միգրացիոն միտումներն ազդում են նաև սփյուռքների քաղաքական բազմաշերտ դերակատարության վրա և պարտադրում են նոր զարգացումների դիտանկյունից

Աջից՝ Գևորգ Ղուկասյան, ձախից՝ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյան

անդրադառնալ դրանց:

Սփյուռքները աստիճանաբար դառնում են միջազգային հարաբերությունների ուրույն դերակատարներ, իսկ էթնիկ լոբբինգի ինստիտուտը, ըստ էության, սփյուռքների քաղաքական դերակատարության հիմնական կազմակերպված արտահայտչաձևն է[1]:

Լոբբինգը հանրային-քաղաքական համակարգի զարգացած ինստիտուտ է, որը ֆիզիկական անձանց և իրավաբանական կազմակերպությունների միջոցով ճնշում է գործադրում պետական իշխանության մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների վրա՝ իր շահերին համահունչ որոշումների ընդունումը նախապատրաստելու համար: Լոբբինգի վերջնականորեն համաձայնեցված սահմանում չկա: Օրինակ՝ Լիոնել Ջեթերի կարծիքով՝ լոբբինգի պարզ և ամբողջական սահմանումը հետևյալն է. «Լոբբինգը հանրային քաղաքականության ձևավորման գործընթաց է՝ կառավարության (դրա ինստիտուտների) և օրենսդրական գործընթացի վրա ազդելու նպատակով»: Ըստ հեղինակի՝ այն նաև քաղաքական համոզման արվեստ է[2]:

Թոմաս Լայնը և Ջոն Մաքսվելը, ըստ գործունեության ուղղվածության, առանձնացնում են լոբբիստական կազմակերպությունների հետևյալ տիպերը՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա-էթնիկական (ճնշման խմբեր) և հատուկ[3]:

Էթնիկ լոբբիստական խմբերը ձևավորվում են ազգային, կրոնական, մշակութային համախմբման միջոցով՝ հյուրընկալող երկրի պետական իշխանության թևերի, տարածքային և տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների հիման վրա՝ ի շահ իրենց հայրենի պետության ուղղակի կամ անուղղակի ճնշումներ գործադրելու, քաղաքական նպատակներ դնելու և դրանց հասնելու համար: Որպես կանոն, էթնիկ լոբբիստական խմբերն իրենց հայրենի

երկրների հետ ունեն միջնորդավորված կամ ուղղակի կապեր:

Էթնիկ լոբբիստական խմբերի հիմնական անելիքներից են՝ **հիմնահարցի ձևակերպում, տեղեկատվության ապահովում, քաղաքականության մշտադիտարկում:**

Տեխնոլոգիական առումով էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության առանձնահատկություններ կարող են դիտվել հետևյալները՝ **միասնական հասարակական կարծիքի ձևավորում, ընտրարշավային գործիքակազմի կիրառում, պաշտոնական հնարավորությունների և կապերի օգտագործում, ոչ պաշտոնական կապերի օգտագործում, պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգեբանական ճնշման գործադրում:**

Լոբբինգի տեխնոլոգիաներից արևմտյան աշխարհում շատ հայտնի է «Lobbing the grass-roots»-ը: Այն հանրային քաղաքականության համալիր գործիքակազմ է, որի կիրառման ընթացքում լոբբիստը դիմում է ոչ թե պետական հաստատություններին, այլ հասարակության ներկայացուցիչներին, իշխանության այս կամ այն որոշման վրա ազդեցու ունակ սովորական քաղաքացիներին: Լոբբինգի այս տեխնոլոգիան, ըստ էության, հասարակական ներուժի հնարավոր գեներացում է կոնկրետ խնդիր լուծելու համար[4]:

Այսպիսով՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները լոբբիստական գործունեության համար տիպիկ երկիր է: Ամերիկյան քաղաքական մշակույթը աշխարհում լավագույնս ընդունում է լոբբիստական կազմակերպություններին, միայն թե դրանք պետք է խստորեն բավարարեն պետության օրենսդրահրավական պահանջները, լինեն թափանցիկ և, որ ամենակարևորն է, Միացյալ Նահանգների համար չհանդիսանան «5-րդ շարասյուն»:

Ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներում չափազանց կարևոր է լոբբիստական գործունեությունը սահմանափակել բացառապես «հյուրընկալ պետության քաղաքացի-իշխանություն հարաբերակցության սահմաններում», ինչպես նաև սահմանափակել հայրենի պետության կողմից սփյուռքյան համայնքների քաղաքական գործունեության ուղղորդումը: Այսինքն, ի դեմս էթնիկ լոբբինգի ինստիտուտի, մենք գործ ունենք միջազգային հարաբերությունների ինքնուրույն դերակատարների հետ, որոնք, ելնելով իրենց ազգային շահերից և հայրենի պետության կարիքներից, առանց վերջինիս ուղղորդման, իրականացնում են համապատասխան աշխատանքներ: Այս բանաձևի պահպանումը էթնիկ լոբբինգի հաջողության համար նախապայմանային նշանակություն ունի:

Սպիտակ տան կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու ամերիկյան փոփոխվող արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում

Սույն հրապարակման մեջ, իհարկե, նպատակ չունենք անդրադառնալու Հայ դատի գործունեության պատմությանը Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ սկսած 1944թ., երբ ՀՅ Դաշնակցությունը Նյու Յորքում հիմնադրեց Հայ դատի համաշխարհային ցանցը: Միայն նշենք, որ Հայ դատի Ամերիկայի կենտրոնական հանձնախումբը (Armenian National Committee of America) Վաշինգտոնի իր գրասենյակով և ԱՄՆ-ի երկու ափերի իր հանձնախմբերով դասական էթնիկ լոբբինգ իրականացնող կառույց է, որի բնութագրիչներն ու գործունեության առանձնահատկություններն ամբողջապես համապատասխանում են վերոնշյալ սահմանումներին, և որին անդրադառնում են միջազգային հարաբերությունների ու քաղաքագիտության այս ոլորտն ուսումնասիրող համաշխարհային մակարդակի քաղաքագետներ: Վերջին երկու տարվա ընթացքում հատկապես Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը գրագետ աշխատանքով, ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ, քաղաքական մանրակրկիտ պլանավորմամբ և, որ ամենակարևորներից է, հայ համայնքի համախմբմամբ հետևողականորեն հասել ու հասնում է իր առջև դրված առանցքային խնդիրների լուծմանը:

2019թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր ընդունվեցին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում և Սենատում, ինչը նույնպես ցեղասպանության միջազգային ճանաչման անկյունաքարային հանգրվաններից էր: Ամեն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրականացումը վերապահված է գործադիր իշխանությանը, Հայ դատի հանձնախումբը գերակա նպատակ սահմանեց Սպիտակ տան կողմից ցեղասպանության ճանաչումը: Նկատենք, որ Կոնգրեսի երկու պալատների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը նախորդել էր ԱՄՆ-ի 50 նահանգներից 49-ի կողմից ցեղասպանության ճանաչումը: Այսինքն՝ Սպիտակ տան վրա ճնշումը նաև դաշնային մակարդակով էր: Այս քաղաքական դրամագլուխը հնարավոր էր եղել կուտակել տասնամյակների աշխատանքի շնորհիվ:

Սպիտակ տան վարչակազմի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նախ և առաջ նշանակում է Թուրքիայի նկատմամբ ամերիկյան

Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյան

արտաքին քաղաքականության փոփոխություն և տարածաշրջանում այդ քաղաքականության փոխակերպում: Թուրքիան այնուամենայնիվ շարունակելու է լինել Ամերիկայի դաշնակիցը և ՆԱՏՕ-ի կարևոր անդամներից մեկը: Հայոց ցեղասպանության ճանաչմամբ ամերիկա-թուրքական հարաբերությունները, անշուշտ, ավելի չեն վատթարանա, որովհետև դրա համար այլևս տեղ էլ չկա. երկու երկրների հարաբերությունները վաղուց այսքան վատթար չեն եղել:

Թուրքիայի շարունակական ապակայունացնող դերը իրեն հարակից գրեթե բոլոր տարածաշրջաններում, այդ թվում՝ ռազմական հակամարտության ուղղակի սպառնալիքը ՆԱՏՕ-ի անդամ Հունաստանի դեմ, հարաբերությունների լարումը Ֆրանսիայի ու Եգիպտոսի հետ, դրդում է պաշտոնական Վաշինգտոնին գործադրելու իրավիճակից բխող զսպման ռազմավարական մեխանիզմներ: Այդ ծիրի մեջ պետք է դիտարկել նաև ԱՄՆ-ի ռազմաքաղաքական գլխավոր դաշնակից Իսրայելի և Հունաստանի միջև նախադեպը չունեցող պաշտպանական համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի կողմից ձեռնարկվող զսպման մեխանիզմները:

Թուրքական ծավալապաշտական քաղաքա-կանության ձախողումը Արևելյան Միջերկրականում և արևմտյան ուղղությամբ Թուրքիային մղում է դեպի արևելք, դեպի մեր տարածաշրջան, որը դեպի պանթյուրքական երազանք տանող ճանապարհն է:

Եթե խնդրին մոտենանք միջազգային հանրության և հատկապես թիվ մեկ գերտերության դիրքերից, ապա Արցախյան երկրորդ պատերազմում ռազմական ուղղակի ներգրավմամբ Թուրքիան բառացիորեն կոլապսի ենթարկեց միջազգային անվտանգության համակարգը, ինչի թիվ մեկ պատասխանատուն գերտերություններն են՝ ի դեմս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի: Այնուամենայնիվ պատահական չէ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամներն են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից երեքը:

Թուրքիան, որն առնվազն ըստ փաստաթղթի, ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցն է, իսկ Ռուսաստանի՝ բարեկամ երկիրը, Ֆրանսիայի հետ էլ ռազմաքաղաքական միևնույն պլանում է, բացահայտորեն և լկտիաբար ոտնահարեց ղարաբաղյան հակամարտության լուծման համար այդ պետությունների կողմից առաջարկված առանցքային սկզբունքներից մեկը՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը: Հետևաբար գերտերությունների արձագանքը այս ամենին չէր կարող ուշանալ: Իհարկե, Ամերիկայի պարագայում գումարվեցին նաև Թուրքիայի տևական սիրախաղը Ռուսաստանի հետ, «S400» հակաօդային համալիրների ձեռքբերումը, երկրի ներսում ժողովրդավարության խայտառակ վիճակը, այլախոհների նկատմամբ բռնությունները և այլն:

Վերոգրյալի համատեքստում ամենևին էլ պատահական չէ այն, որ միմյանց հետ բազմապիսի հակադրությունների ետնապատկերին Մինսկի խմբի եռանախագահությունը շարունակում է համաձայնեցված աշխատանքը ղարաբաղյան հիմնախնդրի լուծման բանակցային գործընթացում, ինչի լավագույն ապացույցներն են Մինսկի ձևաչափի անհապաղ վերականգնման և հակամարտության վերջնական քաղաքական կարգավորման վերաբերյալ համանախագահ երկրների հայտարարությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ, չնայած միմյանց միջև առկա հակադրություններին, համանախագահ երկրներից ոչ մեկը կասկածի տակ չի դրել Ղարաբաղում ռուսական խաղաղապահ զորակազմի ներկայության արդյունավետությունը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Ռուսաստանի գործողությունները, մեծ հաշվով, համաձայնեցված են Ֆրանսիայի և Ամերիկայի հետ:

Որպես արդյունք, ի հակադրություն հակա-մարտությունը լուծված համարելու մասին Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման, այնուամենայնիվ պետք է տեսանելի ապագայում սպասել Մինսկի խմբի ձևաչափում բանակցությունների վերականգնմանը և հակամարտության կարգավորման ուղղությամբ միջազգային ջանքերի: Այս ամենին ընդառաջ Հայաստանին անհրաժեշտ է ազգային դեմք ու դիմագիծ ունեցող նոր իշխանություն, որը, ի տարբերություն գործող կապիտուլյանտ իշխանության, միջազգային ճկուն հարաբերություններով և ազգային տեսլականով ի զորու կլինի առաջնորդելու երկիրը տարածաշրջանային նոր զարգացումներում:

Ինչ վերաբերում է Հայ դատի հետագա աշխատանքներին ԱՄՆ-ում, ապա հանձնախումբն ունի իր քաղաքական օրակարգը՝ հստակ առաջնահերթություններով, որոնց սպասարկման համար իրականացվում են անհրաժեշտ համալիր աշխատանքներ՝ լոբբիստական գործունեության համալիր գործիքակազմի կիրառմամբ: Այս համատեքստում առաջնային նպատակներից մեկը Հայաստանին և Արցախին ամերիկյան 100 մլն դոլար ֆինանսական արտակարգ օժանդակության տրամադրումն է, որի իրականացման համար արդեն իսկ մեկնարկել են անհրաժեշտ աշխատանքները, այդ թվում՝ օրենսդրական նախապատրաստության մակարդակով: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Տես Ղուկասյան Գ., Արևմտյան Եվրոպայի հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության շուրջ, «Պատմություն և մշակույթ», 2020, № 1, էջ 242-251:

2- Ղուկասյան Գ., Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությանշուրջ, «Հանրային կառավարում»,2019, № 2, էջ 184-192:

3- Տես Thomas P. Lyon, John W. Maxwell, Astroturf: Interest group Lobbying and Corporate Strategy. "Journal of Economics & Management Strategy", Volume 13, Number 4, 2004:

4- Վերջերս Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով Սպիտակ տուն են ուղարկվել ավելի քան 1 միլիոն նամակներ, որոնք լոբբինգի այս տեխնոլոգիայի կոնկրետ օրինակ են:

Թուրքական զորքերի ներթափանցումը Հայաստան ու Անդրկովկաս և 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը

Արմեն Խաչատրյան
ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի տնօրենի գիտական գծով տեղակալ

Անդրկովկասյան սեյմը[1], չընդունելով Բրեստ-Լիտովսկի հաշտության[2] պայմանները, Թուրքիայի հետ վերջնական հաշտություն կնքելու համար Տրապիզոն ուղարկեց պատվիրակություն՝ Ա. Չխենկելու գլխավորությամբ: Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էին Սեյմի կողմից հաստատված Ա. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին: Թուրք-անդրկովկասյան բանակցություններն սկսվեցին 1918 թ. մարտի 1-ին՝ թուրքերի կողմից գրավված Տրապիզոնում: Հենց սկզբից դրսևորվեցին Թուրքիայի զավթողական նպատակները: Նույնիսկ Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը՝ Օսմանյան կայսրության սահմաններում, թուրքերը չէին ընդունում: Այդ հարցում մերժվում էր Անդրկովկասի կառավարության որևէ միջամտություն: Սեյմի մուսուլման պատվիրակներն ընդունում էին Թուրքիայի տարածքային պահանջները և Անդրկովկասի անկախության առաջարկները: Իսկ թուրքերն ունեին ավելի հեռուն գնացող նպատակ՝ Կ. Պոլիսը Բաքվին միավորելու ծրագիր:

Թուրքական զորքերի՝ Արևմտյան Հայաստանը զավթելուց հետո նրանք դրեցին երկրամասի անկախության հռչակման հարցը: Անդրկովկասի պաշտպանության հարցը դարձավ առաջնային: Այն քննարկվեց 1918 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին ռազմաճակատի հրամանատար, գեներալ-մայոր Եվգենի Լեբեդինսկին, կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը, շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Եվգենի Վիշինսկին, Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Գաբրիել Ղորղանյանը (Գավրիիլ Կորգանով): Ալեքսանդրապոլի խորհրդակցության մասնակիցների ճնշող մեծամասնությունը դեմ էր Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն: Սակայն վրաց մենշևիկների և մուսուլմանների մեծամասնության ճնշման տակ Անդրկովկասյան սեյմը 1918 թ. ապրիլի 9-ին հայտարարեց Անդրկովկասի՝ Ռուսաստանից անջատման և երկրամասի անկախության մասին՝ կատարելով թուրքերի պահանջը: Ստեղծվեց Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետությունը: Այդ որոշումն ավելի արձակեց թուրք կառավարիչների և զինվորականության ձեռքերը:

Երբ Թուրքիայի կովկասյան բանակի հրամանատարությունն ստացավ Անդրկովկասի անկախության լուրը, պահանջեց անհապաղ դատարկել Կարսը: Անդրկովկասի նոր կառավարության նախագահ Ա. Չխենկելին կարգադրեց հանձնել Կարս ամրոցը: Դրան առարկեց Հայկական առաջին կորպուսի հրամանատար Թ.

Նազարբեկյանը, որն արդեն ստանձնել էր նաև ռազմաճակատի հրամանատարությունը: Նա կարծում էր, որ Կարսն ի վիճակի է դիմադրելու թուրքերին: 1918 թ. ապրիլին հետևեց Չխենկելու նոր հրամանը՝ Կարսը դատարկելու մասին: Վրաստանի համար կարևոր էր պահել Բաթումը: Մինչ այդ հայերը ցույց էին տալիս կատաղի դիմադրություն Սարիղամիշի մոտ: Կնքվեց ժամանակավոր զինադադար: Կարսն անցավ թուրքերի ձեռքը: Կարսում մինչ այդ կռվում էին հայկական առանձին կորպուսի զորամասերը, հայկական երկրորդ գունդը, սակրավորների վաշտը, կամավորականների ջոկատը և այլն:

Թիֆլիսում մայիսի 11-ին հաշտության բանակցություններ սկսելու համար ժամանեցին Թուրքիայի, Գերմանիայի և Անդրկովկասյան Հանրապետության ներկայացուցիչները: Սակայն թուրքական հարձակումը չդադարեց: Մայիսի 15-ին թուրքերը հրետանիով հանկարծակի հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա: Կռվի մեջ մտան այնտեղ գտնվող զորամասերը՝ «Վասպուրական» ջոկատը, վանեցիների կամավորական ջոկատը, Եֆրեմովի ռուսական կամավորական ջոկատը, Կարսի հեծյալ գունդը և այլն: Սակայն Անդրկովկասյան կառավարության կարգադրությամբ քաղաքը զիջվեց թուրքերին: Սկսվեցին նրանց վայրագությունները, թալանն ու սպանությունները: Էվակուացվեց Սուրմալուն: Ալեքսանդրապոլի գրավումը, մինչ այդ Տրապիզոնի, Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի, Կարսի և Բաթումի անկումը ոչ այնքան թուրքական զենքի հաղթանակն էին, որքան դիվանագիտական խարդավանքների արդյունք: Այստեղ դրսևորվեց Անդրկովկասի Հանրապետության ղեկավարների անհամաձայնեցված քաղաքականությունը:

Ալեքսանդրապոլի գրավումից հետո թուրքական բանակի հսկողության տակ անցան ռազմավարական հաղորդակցության կարևոր ուղիները՝ Տրապիզոն – Բաթում, Կարս – Ալեքսանդրապոլ (Գյումրի), Օլթի – Մերդենեկ – Արդահան – Ախալցխա, Էրզրում –

Սարիղամիշ: Թուրքական «Կարս» զորախումբն ստացավ նոր առաջադրանք: Կատարվեց թուրքական ուժերի նոր վերախմբավորում. դրանք բաժանվեցին չորս մասի: Առաջին զորախումբը հարձակման անցավ Վորոնցովկայի (Տաշիր) ուղղությամբ՝ ձգտելով դուրս գալու Բոլնիս-Խաչեն, Բորչալու, Թիֆլիս: Երկրորդ զորախումբը գրոհեց Ձաջուռ – Համամլու (Սպիտակ) – Ղարաքիլիսա (Վանաձոր) – Դիլիջան – Ղազախ – Ելիզավետպոլ (Գանձակ) ուղղությամբ՝ նպատակ ունենալով դուրս գալու Բաքու: Երրորդ և չորրորդ զորախմբերը ներխուժեցին Սարդարապատ, Արարատյան դաշտ՝ գրավելու Երևանը: Մայիսի 21-ին այս զորախմբերի առաջապահ ուժերը, մտնելով Արարատյան դաշտ, գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը, դուրս եկան «Ղամիշլու» (Եղեգնուտ) կիսակայարան: Թուրքական զորախմբի դեմ կանգնած էին Էրզրումից մինչև Արաքս նահանջած սակավամարդ զորամասերը: Թշնամուն դիմակայելու համար կատարվեց հայկական զինուժի վերաբաժանում: Կազմավորվեց Երևանյան զորախումբը՝ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Ջորավար Դրաստամատ Կանայանի (Դրո) հրամանատարությամբ ստեղծված զորախումբը պետք է պաշտպաներ Ապարանի մատույցները թուրքական 9-րդ դիվիզիայից: Երևանի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով միջոցներ ձեռնարկվեցին Կողբի և Իգդիրի ուղղությամբ: Նախիջևան – Շարուր (Նորաշեն) ուղղությամբ 3-րդ հետևակային բրիգադն էր՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գլխավորությամբ:

Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ գործող Սարդարապատի զորամասը 1918 թ. մայիսի 22-ին անցավ հարձակման Քյորփալու (Արշալույս) և Ղուրդուղուլի (Արմավիր) գյուղերից: Նույն օրը նրանք ետ վերցրին մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը մեծ կորուստներով անցան «Արաքս» կայարանի շրջանը: Այդ հաղթանակը մեծացրեց ժողովրդի հույսն ու հավատը: Մարդիկ ներկայանում էին զորամաս, հաղթանակի համար տրամադրում ամեն հնարավորը: Ազգային-քաղաքական միասնություն էր Հայաստանում, որովհետև մղվում էին կենաց ու մահու մարտեր: Բոլորին ոգևորում էին Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը և Արամ Մանուկյանը: Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն հայոց կաթողիկոսը դիմում է հայ ժողովրդին. «Թուրքը՝ մեր արևելյան ոսոխը, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի՝ մեր կենսագրության, գալիս է Էջմիածնի վրա: Մեր զորապետները Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերնին թողնել Մայր Աթոռ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը և ապաստանել Բյուրականում: Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ոչ, ես չեմ լքի մեր սուրբ նախնիների ավանդած Մայր Աթոռը, ես չեմ հեռանա Հայոց Առաքելական օջախից: Եթե հայոց զինվորականությունն ինքը, հայ ժողովուրդը չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել,



Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը

եթե ի զորու չեն փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ՝ շեմի վրա Մայր Աթոռի, որի գահակալի պատիվը ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծու ողորմածությամբ»[3]: Անկասկած, հայերի գլխին կախված էր ֆիզիկական ոչնչացման վտանգը: Դա հայրենական պատերազմ էր:

Սարդարապատը վերագրավելուց հետո մշակվեց թուրքերի շրջափակման և ջախջախման պլանը: Փոխգնդապետ Կարապետ Հասան Փաշայանի հրամանատարությամբ ստեղծվեց հարվածային խումբ, որն անվանվեց «Խզնաուզի ջոկատ»: Դրոյի զորաջոկատը 1918 թ. մայիսի 24-ին մտավ Ալի Քուչակ՝ մարտեր մղելով դեպի Բաշ-Ապարան շարժվող 36-րդ թուրքական դիվիզիայի դեմ: Համառ մարտերից հետո՝ մայիսի 29-ին, Բաշ-Ապարանում ջախջախվեց թշնամու 2 գունդ, ոչնչացվեց ծանր հրետանին. թշնամին տվեց 200 զոհ, թողեց մեծ քանակությամբ ռազմավար:

Բոլորը զենքը ձեռքներին շտապում էին Ղարաքիլիսա. ոգևորությունն աննախադեպ էր: Ղարաքիլիսայի մոտ 1918 թ. մայիսի 24-28-ը տեղի ունեցան կատաղի մարտեր, որոնց մասնակցեցին հայկական 4 գունդ, հեծյալ ջոկատը և բնակչությունից կազմված աշխարհազորայինները: Նրանք ունեին 7.000 զինվոր, 10 հրանոթ, 20 գնդացիր: Թուրքական զորքը 10.000 էր՝ թուրքական կանոնավոր և մահմեդական ավազակախմբերով: Հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին: Աչքի ընկան գնդապետներ Բեյ-Մամիկոնյանի և Նիկոլայ Ղորղանյանի (Կորգանով) զորամասերը, պորուչիկ Գարեգին Նժդեհը: Մարտում հերոսաբար զոհվեց շտաբս-կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը:

Քառօրյա մարտերի ժամանակ թշնամին մեծ կորուստներ ունեցավ, կասեցվեց նրա առաջխաղացումը դեպի Դիլիջան և Թիֆլիս: Մայիսի 30-ին, երբ սպառվել էր հայերի զինամթերքը, թուրքերը մտան Ղարաքիլիսա և դրսևորեցին իրենց բարբարոսությունը: Հայերի գործած սխրանքը խոստովանել է մինչև անգամ Մեհմեդ Վեհիբ փաշան Բաթումում՝ ասելով, որ հայերը Ղարաքիլիսայի մոտ մարտով ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները: Սարդարապատը, Բաշ-Ապարանը, Ղարաքիլիսան հայ ժողովրդի

աննկուն կամքի, անկախության համար պայքարի, վճռականության վկաները եղան: Հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերը վիժեցրին հայերին ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերը:

Երբ Հայաստանում՝ Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Բաշ-Ապարանում, վճռվում էր մեր ժողովրդի ճակատագիրը, Թիֆլիսում Անդրկովկասյան սեյմն հոգեվարքի վերջին օրերն էր ապրում իր մեջ մտնող ազգությունների ու կուսակցությունների ներքին գզվռտոցի հետևանքով: Անդրկովկասի թաթարներն ունեին թուրքամետ կողմնորոշում, իսկ վրաց մենշևիկները հայերից գաղտնի բանակցությունների մեջ մտան Անդրկովկասում գտնվող գերմանացի ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով Գերմանիայի հովանավորությամբ ապահովելու Վրաստանի անկախությունը: Վրաց մենշևիկների նախաձեռնությամբ և ադրբեջանցի մուսավաթների[4] հավանությամբ մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը լուծարվեց, ինչը տեղի ունեցավ նաև Թուրքիայի կամքով: Սեյմի որոշման մեջ գրված էր. «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտության հարցերով արմատական տարաձայնություններ դրսևորվեցին այն ժողովուրդների միջև, որոնք կազմել էին Անդրկովկասյան անկախ ռեսպուբլիկա, և այդ պատճառով անհնարին էր դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմն արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վայր է դնում իր լիազորությունները»[5]: Այդ օրը՝ մայիսի 26-ին, Վրաց ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը, իսկ մայիսի 27-ին մուսավաթները հռչակեցին Ադրբեջանի անկախությունը (Գյանջա կենտրոնով)՝ Խան Խոյսկու գլխավորությամբ:

Այդ ծանր պահին հայերի մեծ մասն անկախություն չէր ուզում, սակայն դեպքերի զարգացումն արագացրեց այն: Թուրքերի դեմ տարած հաղթանակը պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետություն հիմնելու նախադրյալներ ստեղծեց: Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետության փլուզումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, Հայաստանի

Զինվորներն ու կամավորները Սարդարապատում ճաշի պահին

Հայկական բանակը 1918թ.

Հանրապետությունն անկախ հռչակվեց, ինչը տեղի ունեցավ պատմության ծանրագույն մի ժամանակաշրջանում: Դա միաժամանակ ազգային զարթոնքի շրջան էր: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, մայիսի 28-ի առավոտյան Թիֆլիսի մեծահարուստ Ադամյանցի տան դահլիճում նիստ գումարեց՝ որոշելու ազգի անելիքը: Այստեղ կազմվեց Ավետիս Ահարոնյանի, Հովհաննես Քաջազնունու, Ալեքսանդր Խատիսյանի, Նիկոլ Աղբալյանի հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման վերաբերյալ, որը հրապարակվեց մայիսի 30-ին որպես ժողովրդին ուղղված կոչ: Հայաստանի Հանրապետության հիմնադիր այրերից Սիմոն Վրացյանն այս առիթով գրել է. «Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվեր մայիսի 30-ը: Հակառակ դրան՝ համարվում է մայիսի 28-ը, այսինքն՝ այն օրը, երբ Ազգային խորհուրդը վճռեց հաշտության պատվիրակություն ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարվել անկախության սկիզբը, որովհետև հաշտության բանակցություններ վարելու համար նախապայման էր անկախության հայտարարությունը: Ընդունելով թուրքերի այդ պայմանը՝ Ազգային խորհուրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախության փաստը»[6]:

1918 թ. մայիսի 31-ին անկախության հռչակագիրը հրապարակվեց նաև մամուլում՝ Թիֆլիսում տպագրվող «Հորիզոն» և «Кавказское слово» օրաթերթերում: Հայոց ազգային խորհրդի որոշման մեջ ասվում էր, որ վերջինս այն իրավունքներով, որոնցով նրան լիազորել է հայ ժողովուրդը, մայիսի 28-ին որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայաստանի ժողովրդավարական հանրապետություն: «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության համար, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային

խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[7]:

Բաթումում թուրքական պատվիրակությունը մայիսի 26-ին վերջնագրի տեսքով ներկայացրել էր նոր պահանջներ Շարուր-Դարալագյազի, Երևանի, Նախիջևանի, Էջմիածնի, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի նկատմամբ: Հայ ժողովրդի դարավոր իրձը հայոց պետականության վերականգնումն էր, որը կորցրել էր 500 տարի առաջ: Այդ մասին ի լուր ամբողջ աշխարհի հունիսի սկզբներին հայտնեցին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը, վարչապետ Հովհ. Քաջազնունին, արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսյանը: Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական, բուրժուա-դեմոկրատական պետություն էր: Այն օրինաչափ փուլ էր հայ ժողովրդի պատմության մեջ:

Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի պատվիրակությունների միջև մայիսի 11-ին Բաթումում վերսկսվել էին Տրապիզոնում ընդհատված բանակցությունները, իսկ Անդրկովկասյան սեյմը լիկվիդացնելուց հետո՝ մայիսի 30-ին, առանձին-առանձին բանակցություններ սկսվեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ազգային խորհուրդների և Թուրքիայի միջև: Հայկական պատվիրակության նախագահն էր Ալ. Խատիսյանը, անդամները՝ Հովհ. Քաջազնունին, Միքայել Պապաջանյանը: 1918 թ. հունիսի 4-ին ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը Թուրքիայի և Հայաստանի միջև: Հայաստանի համար խիստ ծանր էին հաշտության պայմանները: Թուրքիային էր անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը՝ Կարսի մարզը և 5 գավառ, իսկ Հայաստանին, որի բնակչությունը 310.000 էր, մնում էր ընդհանուր առմամբ 10-12.000 կմ2 տարածք՝ Երևանից մինչև Սևան (պայմանագրի 2-րդ հոդվածում Հայաստանին պատկանող տարածքի մակերեսի փոխարեն նշված են հայկական այն բնակավայրերն ու աշխարհագրական վայրերը, որոնցով գծվելու էր նոր սահմանը): Հայաստանը բաղկացած էր լինելու Նոր Բայազետի գավառից, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների առանձին մասերից: Նույն օրը թուրքական կառավարությունը պայմանագիր կնքեց նաև Վրաստանի հետ: Այսպիսով՝ Թուրքիային անցան Կարսը, Արդվինը, Արդահանը, Բաթումը, Ախալքալաքը, Ախալցխան, Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն և Կաղզվանը: Ընդհանուր առմամբ Թուրքիան Արևելյան Հայաստանից խլեց 28.000 կմ2 տարածք: Թուրք-հայկական սահմանը գծված էր այնպես, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանից գտնվում էր ընդամենը 7 կմ հեռավորության վրա: Պայմանագրով պետք է ցրվեին ֆիդայական բոլոր ջոկատները, ներառյալ Անդրանիկինը: Ցանկացած պահի թուրքական հրանոթները կարող էին որոտալ սահմանագլխին: Ձորավար Անդրանիկը

ԲԱՇ – ԱԲԱՐԱՆԻ ՀԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Բաթումի պայմանագիրը համարում էր հայության վզին փաթաթած ստորության շղթա:

Պատմաբան Լեոն Բաթումի պայմանագրի կողոպտիչ բնույթի մասին գրում էր. «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը, մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանի լճի չորս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման»[8]: Հայաստանն ունենալու էր սահմանափակ թվով զորք, երկաթուղիների վերահսկողությունն անցնում էր Թուրքիային, որն իրավունք էր ստանում Հայաստանի տարածքով զորք տեղափոխելու Ադրբեջան: Բաքվից դուրս էին բերվելու և լուծարվելու հայկական զորամասերը, որոնք կազմում էին Բաքվի կոմունայի պաշտպանների կորիզը:

Բաքվի ազգային խորհուրդը չենթարկվեց այդ որոշմանը: Նա իր ռազմական ուժերը 1918 թ. ապրիլի 25-ին դրեց Ստ. Շահումյանի կողմից ստեղծված Ժողովրդական կոմիսարների խորհրդի տրամադրության տակ: Մոտ 18.000 հայ մարտիկներ, որոնք ընդգրկված էին 4 բրիգադներում, 22 գումարտակներում, քաջ գիտակցում էին, որ, պաշտպանելով Բաքուն, պաշտպանում են Ղարաբաղը, Երևանը, Էջմիածինը: Դրանց գրավումը թուրքերի կողմից կնշանակեր հայ ժողովրդի կործանում: Նրանք պաշտպանում էին քաղաքի 100.000 հայերին: Բաքվի պաշտպանությանը մասնակցում էին բանակի գեներալ Հակոբ Բագրատունին, բրիգադի հրամանատար Համազասպը, Գրիգոր Կորգանովը, Սեբաստացի Մուրադը, որն էլ հերոսաբար ընկավ մարտի դաշտում: Անդրանիկը թուրքական ներխուժումից պաշտպանում էր Զանգեզուրը: Նա Ղարաբաղ չմտավ, այլ կես ճանապարհից հեռացավ անգլիացիների պահանջով: 1918 թ. սեպտեմբերի 15-ին անգլիական ուժերը լքեցին դիրքերը, և թուրքերը մտան Բաքու: Նրանք երեք օր կոտորեցին ու թալանեցին անզեն հայերին:

Նորածին Հայաստանի Հանրապետության կնքած առաջին միջազգային պայմանագիրը ծանր էր, բայց օդի պես անհրաժեշտ: Դրանով Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը:

Կամավորականները Ղարաքիլիսայում՝ ճակատամարտից առաջ

Բաթումի պայմանագիրը, որը չէր վավերացվել ոչ Հայաստանի և ոչ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, իր ուժը կորցրեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից՝ 1918 թ. նոյեմբերից հետո: Հայաստանի Հանրապետությանը ժամանակ էր պետք նվաճումներն ամրապնդելու, կործանվող ժողովրդին փրկելու համար: Բաթումի պայմանագրով ՀՀ-ն, փաստորեն, հրաժարվում էր պահանջատիրությունից, ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած վնասների ու կորուստների փոխհատուցումից: Ստրկացնող պայմանները վրդովմունքով ընդունեցին հասարակության բոլոր խավերը: 1918 թ. հունիսի 5-9-ը Երևանում տեղի ունեցան խոշոր ցույցեր՝ ընդդեմ հայ-թուրքական հաշտության: ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանն ստիպված էր հանդես գալ հայտարարությամբ և բացատրել ժողովրդին, որ այլ ելք չկար: Ալ. Խատիսյանն էլ, ամփոփելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, Ավ. Ահարոնյանին հղած նամակում գրում էր, որ հպարտ է պետականության վերականգնման համար. «Հզոր է հայոց հողի ոգին: Մենք կբերենք վատ հաշտության դաշնագիր, սակայն կբերենք նաև անկախ Հայաստան՝ տուն, բույն, որտեղ կթրծվի ժողովրդի միտքը: Այդ ամենը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը» : Հայաստանի անկախության հռչակումը, իրավամբ, շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում:

Հայաստանի անկախությունն ուներ իր ներքին օրինաչափ ընթացքը, որը որքան էլ հետևանք էր Առաջին համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխությունների, նույնքան էլ արդյունք էր հայ ժողովրդի՝ 1918 թ. մայիսյան հերոսական ոգորումների: Ի վերջո, հարյուրամյակների ընդմիջումից հետո դարձյալ վերականգնվեց հայոց անկախ պետականությունը՝ քաղաքական նոր արժեհամակարգով ու պետական կառուցվածքով: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Անդրկովկասյան սեյմը Անդրկովկասում ստեղծված պետական իշխանության մարմին էր, որը կազմավորվել է 1918 թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում՝ մենշևիկ Ն. Չխեիձեի նախագահությամբ: Այն ստեղծվել է Անդրկովկասում քաղաքական լուրջ ճգնաժամի պայմաններում՝ պայմանավորված երկրամասի քաղաքական կուսակցությունների միջև տարաձայնություններով և հասունացող թուրքական նախահարձակման վտանգով: Կազմավորումից հետո Անդրկովկասյան սեյմի մեջ մտան Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորները, ինչպես նաև երկրամասում գործող մի շարք կուսակցությունների ներկայացուցիչներ՝ 36 վրաց մենշևիկ, 30 մուսավաթական, 27 դաշնակցական, 19 էսէռ, 14 այլ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնց թվում էին նաև «Հայ ժողովրդական կուսակցության» ներկայացուցիչները: Անդրկովկասի բոլշևիկները հրաժարվեցին անդամակցել Սեյմին և բողոքեցին դրա կազմավորման դեմ: Անդրկովկասյան սեյմը վերացրեց պետական իշխանության նախկին մարմինը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, և իրեն հռչակեց օրենսդիր մարմին: 1918 թ. մարտին հայտարարեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից: Իր արտաքին քաղաքականության ոլորտում Անդրկովկասյան սեյմը շարունակեց Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը, պայքար ծավալեց երկրամասում խորհրդային իշխանության հաստատման դեմ՝ նպատակ ունենալով հասնելու Անդրկովկասի՝ Խորհրդային Ռուսաստանից լիակատար անկախացմանը, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը, Անդրկովկասի տարածքային ամբողջականության պահպանմանը:

2- Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը կնքվել է 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում (այժմ՝ Բրեստ, Բելառուս) մի կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի միջև: Պայմանագրի ստորագրմանը նախորդել են 3 փուլով տարված բանակցություններ: Հայկական հարցը դրվել է բանակցությունների բոլոր փուլերում՝ ինչպես լիագումար նիստերում, այնպես էլ ռուս-գերմանա-ավստրո-հունգարական և ռուս-թուրքական քաղաքական հանձնաժողովներում: Բրեստի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածով և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրով Թուրքիային էին անցնում Արևմտյան Հայաստանը և Կարսի ու Արդահանի մարզերը: Ռուսաստանը պարտավորվում էր զորքերն անհապաղ դուրս բերել Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից, ցրել հայկական կամավորական ջոկատները:

3- Հմմտ. 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Արշավիր Շահխաթունու հուշերը, աշխատասիրությամբ՝ Կ. Արիստակեսյանի, Ս. Պողոսյանի և Ա. Մելիքյանի, Եր., 2014, էջ 22-25:

4- «Մուսավաթ» ադրբեջանական ազգային կուսակցությունն ստեղծվել է Բաքվում 1911 թվականին «Մուսուլմանական դեմոկրատական մուսավաթ կուսակցություն» անվամբ:

5- «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960, էջ 222:

6- Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տիպ, Բէյրութ, 1958, էջ 154:

7- Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թթ. 59-60 և գ. 141, թ. 239 (այսուհետ՝ ՀԱԱ):

8- Լեո, Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 404:

Առաջին հանրապետության միլիցիայի և բանակի տարեգրությունից

Վանիկ Վիրաբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

ՀՀ միլիցիայի ստեղծումը

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջմամբ Ռուսաստանում առաջ եկած ցնցումներն ընդգրկեցին նաև Հայաստանը: Այդպիսի անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններում, երբ թուրք հրոսակները, իրականացնելով արևմտահայության նախճիրը, բախում էին Արևելահայաստանի դռները, 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Անդրանիկ կառավարության լիազորությունները ստանձնեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որն իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարում էր յուրաքանչյուր պետության համար կենսականորեն անհրաժեշտ բանակի և ներքին գործերի մարմինների, այդ թվում՝ միլիցիայի ստեղծումը:

ՀՀ պետական անվտանգության համակարգի կարևոր օղակներից էին միլիցիան և ՆԳ նախարարությունը, որոնց ստեղծման ու աշխատանքների կազմակերպման ուղղությամբ 1918-1920 թթ. որոշակի ջանքեր գործադրվեցին ՀՀ կառավարության կողմից: Այդ գործընթացներին ակտիվորեն մասնակցեցին թե՛ Հայաստանի խորհրդարանը և թե՛ Նախարարների խորհուրդը: Սկզբնական և հատկապես Արամ Մանուկյանի «դիկտատորության» ժամանակահատվածում Ներքին գործերի նախարարությունը մի ճյուղավորված համակարգ էր, որի մեջ մտնում էին և՛ ՆԳՆ-ին հատուկ ուժային ու միլիցիոն կառույցները, և՛ տարաբնույթ այլ գործառույթներ իրականացնող զեմստվային-քաղաքային, նահանգային ու գավառային կառավարման վարչական հաստատությունները: Ռ. Տեր-Մինասյանը գրում է հետևյալը. «Ներքին գործոց նախարարութիւնը այնպէս, ինչպէս Արամի ժամանակը կը ներկայանար, նրանից յետոյ՝ մինչև Հանրապետութեան անկումը, այլևս գոյութիւն չունեցաւ: Արամի մահուանից յետոյ Ներքին գործոց նախարարութիւնը մեռաւ և դարձաւ մի պարզ վարչութիւն: Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից առաջ Արամը Երևանի նահանգի դիկտատորն էր ընտրուած, և յանձինս նրան՝ փաստական հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան՝ Քաջազնունու դահլիճն էր կազմված, փաստօրէն, կառավարութիւնը մնում էր Արամը, թէև նա ներքին գործոց նախարար էր միայն: Նրա ձեռքն էին այն ժամանակները եւ Լուսաւորութեան, եւ Խնամատարութեան, Պարենաւորման, եւ Հաղորդակցութեան բաժինները, որոնք հետագային բաժանուեցին առանձին նախարարութիւնների: Բայց էականը գործերի բարդութիւնը չէր, այլ նրանց ուղղութիւնը: Արամի ժամանակ Ներքին գործոց նախարարութիւն ասելով պէտք էր հասկանալ պետութեան ֆիզիքական ոյժը և կառավարական վարչամեքենան, մարմնացումը պետական և կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրէնքների գործադրման և պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը, որտեղ ամփոփում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը: Արամի ատեն Ներքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ»[1]: Այդուհանդերձ, այդ ճյուղավորված համակարգի շրջանակներում ևս կատարվում են առաջին քայլերը՝ միլիցիա և ՆԳՆ համակարգին հատուկ ուժային այլ մարմիններ ստեղծելու համար: Ամեն դեպքում Արամ Մանուկյանի կողմից ձևավորած պետական կառույցը ՆԳՆ-ն սկզբնապես մնում էր ՀՀ Նախարարների խորհրդի կամ կառավարության հետագա ձևավորման և առանձին անհրաժեշտ ենթաճյուղերի կամ նախարարությունների ստեղծման հենք՝ «անկյունաքարը» մինչև գործնականում 1919 թ. կեսերին այն տրոհվեց մի շարք դեպարտամենտների, առանձին նախարարությունների[2]: Իսկ որպեսզի այն դառնար լիարժեք և գործուն օրգանիզմ, որի արգասաբեր գործունեությունից էր կախված երկրի ներքին անվտանգության ապահովումը, ՀՀ ՆԳ նախարարներից մեկը՝ Ա. Գյուլխանդանյանը, նշում է. «Իմ ցանկութիւնն էր այդ կենտրոնական օրգանը (Վարչութիւն և Միլիցիայի բաժին) դնել այնպիսի պայմանների մէջ, որ համարեայ ամբողջ Դիւանը բաղկացած լինէր համալսարանական կրթութեամբ մարդկանցից, որպէսզի ապագայում նրանցից մշակուէին երկրիս վարիչներ: Այդ որոշ չափով կը ծառայէր նրանց իբրև վարչական մի վարժութիւն, որը փորձառութիւն կը տար նրանց»[3]:

Փաստերը վկայում են, որ 1918-1920 թթ. Ներքին գործերի նախարարության և միլիցիայի գործի

կազմակերպիչներից է եղել ինչպես ՀՀ «դիկտատոր» հռչակված և առաջին ՆԳ նախարար դարձած Ա. Մանուկյանը (Ս. Հ. Հովհաննիսյան, Արամ փաշա), որը ՀՀ մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունու 1918 թ. հուլիսի 26-ի հրամանագրով հաջորդում է Երևանի Հայոց ազգային խորհրդի ներքին գործերի բաժնի վարիչ Ս. Դ. Թորոսյանին որպես ՆԳ նախարար և պաշտոնավարում 1918 թ. հուլիսի 6-ից 1919 թ. հունվարի 29-ը[4], այնպես էլ Ա. Մանուկյանի հիվանդության պատճառով 1919 թ. հունվարի 3-ից վերջինիս փոխարինած, իսկ 1919 թ. փետրվարի 9-ից ապրիլի 16-ը նախարարի պարտականությունները ստանձնած Ա. Հ. Խատիսյանը[5], որին այնուհետև հաջորդել է այդ գործի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Ս.Ս.Մանասյանը, որն այդ պատասխանատու պաշտոնը վարել է 1919 թ. փետրվարի 28-ից ապրիլի 28-ը, որից հետո՝ 1919 թ. օգոստոսի 10-ից 1920 թ. մայիսի 5-ը, այն վարել է Ա. Ի. Գյուլխանդանյանը, այնուհետև այդ պարտականությունները մինչև 1920 թ. սեպտեմբերի 19-ը ստանձնել է Ռ. Կ.Տեր-Մինասյանը (Ռուբեն փաշա), որին 1920 թ. սեպտեմբերի 20-ից փոխարինել է Ս. Շ. Արարատյանը (Շահնազարյան)՝ պաշտոնավարելով մինչև նոյեմբերի 23-ը, և վերջապես՝ ՆԳ վերջին նախարար է դարձել Ս. Ղ.Վրացյանը (Գրուզինյան), որը պաշտոնավարել է նոյեմբերի 24-ից 1920 թ. դեկտեմբերի 2-ը, այսինքն՝ մինչև հանրապետության անկումը և խորհրդայնացումը[6]:

Այդ գործընթացների կազմակերպման առումով շատ կարևոր էր ՀՀ խորհրդարանի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի ընդունումը՝ հաստատված Ժամանակավոր կառավարության կողմից 1917 թ. ապրիլի 17-ին և փոփոխված Հայաստանի խորհրդարանի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին: Իսկ 1920 թ. հունիսի 16-ին այդ օրենքում հավելում է արվում: 1920 թ. Միլիցիոներների թիվը Հայաստանի Հանրապետությունում 4562 էր, այդ թվում՝ Երևանի գավառում՝ 434, Էջմիածնում՝ 268, Սուրմալուում՝ 236, Ղարաքիլիսայում՝ 235, Ալեքսանդրապոլում՝ 273, Դիլիջանում՝ 253, Ն. Բայազետում՝ 247, Դարալագյազում՝ 162, Կաղզվանում՝ 419, Օլթիում՝ 419, Արդահանում՝ 519, Կարսում՝ 419, Գողթնում՝ 228, Նախիջևանում՝ 228, Շարուրում՝ 162, Ղարաբաղում՝ 268, և Զանգեզուրում՝ 268[7]: Ուշագրավ են Ղարաբաղի և Զանգեզուրի միլիցիայի հաստիքացուցակների տվյալները, քանզի ՀՀ կառավարությունը և խորհրդարանը նշված գավառները, անկախ Ադրբեջանի ագրեսիվ մտադրություններից և հավակնություններից, միշտ համարել են ՀՀ անբաժանելի մաս: Ուստի օրինաչափ էր ոչմիայն այդ գավառամասերում քաղաքացիական վարչակազմ ունենալը, այլև միլիցիայի և ՆԳ նախարարության անհրաժեշտ օղակներ և ստորաբաժանումներ ստեղծելու քաղաքականությունը: Դրանք պետք է ՀՀ անվտանգության անհրաժեշտ հենակետերը լինեին՝ պաշտպանելով հայ բնակչության օրինական շահերն ու իրավունքները Ղարաբաղում և Զանգեզուրում[8]:



ՀՀ բանակի ստեղծումը

Հայկական պետության հենքը և անվտանգության համակարգի գլխավոր երաշխավորը անկախության հռչակման պահից հայոց բանակն էր: Զինվորական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին՝ ռազմական նախարարի նշանակմամբ, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվել էր Գլխավոր շտաբը: ՀՀ առաջին զինվորական նախարարը դարձավ գեներալ-լեյտենանտ Հ. Բ. Հախվերդյանը, որից հետո պետական անվտանգության համակարգի այդ կարևորագույն կառույցը գլխավորեցին Ք. Գ. Արարատյանը, Ռ. Կ. Տեր-Մինասյանը, իսկ բոլշևիկյան շրջադարձի ժամանակ՝ Դրոն(Դ. Մ. Կանայան)[9]: Անվտանգության համակարգի ձևավորման և բանակաստեղծ գործընթացների ճանապարհին, անշուշտ, կարևոր քայլ էր 1919 թ. Սկզբին ՀՀ զինվորական նախարարությանն առընթեր Ռազմական խորհրդի ստեղծումը, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական-բանակային շինարարության և մարտական գործողությունների սկզբունքային հարցերը: 1919 թ. մարտի 25-ին այդ խորհրդի նախագահ նշանակվեց Հայկական կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թ. Հ. Նազարբեկյանը, որը ստանձնեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ հայկական բանակի սպարապետի պարտականությունները[10]:

Զորքերի ղեկավարումը բոլոր առումներով թողնվեց Հայկական կորպուսի հրամանատարին, որն ուներ գլխավոր հրամանատարի իրավասություններ: Զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919 թ. գարնանը հասնում էր 16000-ի[11], իսկ ըստ Հովհ. Քաջազնունու՝ եվրոպական տերություններին ներկայացրած հուշագրի՝ 1920 թ. Հուլիսի վերջերին՝ 18000-ի[12]: Այդուհանդերձ, ըստ տարբեր սկզբնաղբյուրների, բանակի թվաքանակը նշվում էր 35000 և նույնիսկ ավելի[13]: Սակայն փաստերի համադրումը ցույց է տալիս, որ այդ տվյալները իրականությանը չեն համապատասխանում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ այդ «ահռելի հայկական բանակը» գրեթե առանց լուրջ դիմադրության պարտություն կրեց 1920 թ. Սեպտեմբերի 23-ին սկսված ճակատագրական պատերազմում թվաքանակով իրեն

էապես չգերազանցող թուրքական բանակից[14]: Կարելի է համարել, որ 1918-1920 թթ. Հայկական բանակի կազմում մարտունակ էր ընդամենը 16000-18000 զինվոր, ինչը հաստատում է նաև Ս. Վրացյանը ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին գրած նամակում: Նա մասնավորապես ընդգծում էր, որ «մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ», և «աշխատել են ստեղծել նոր զորամասեր»[15]: Սակայն իրողություն է, որ նորին մեծություն «բրիտանական կառավարությունը» հայկական բանակին ապահովել է 40000-անոց բանակի համար նախատեսված զենքով ու զինամթերքով, որն այն ժամանակ արժեր 1.200.000 ֆունտ ստերլինգ[16]: Այդ մասին է վկայում Ռ. Հովհաննիսյանը՝ ընդգծելով, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կողմից 25000 հրացանի, 40000 համազգեստի մատակարարումը կկատարվեր, եթե Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ստորագրեին տեղափոխման ծախսերը հոգալու և անգլիական բանկի կողմից պահանջվող գանձապետական պարտամուրհակները որպես ավանդ դնելու մասին փաստաթուղթ[17]: Ալ. Խատիսյանը այդ կապակցությամբ նաև բազմանշանակ հավելում է. «Հայերը կը մեղադրէին անգլիացիները այն բանի մէջ, թէ այդ զէնքը հասաւ շատ ուշ, թէ զէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին հայ զինուորները, և այդ մեղադրանքներն ու դժգոհութիւնը զուգադիպեցան 1920 թ. Աշնան հայ-տաճկական աղետալի անյաջող ելքի հետ»[18]: Եվ չնայած ՀՀ կառավարությունը պատրաստակամորեն հատկացրեց պայմանավորված 829.634 ֆունտ ստերլինգը[19] ի դեմս անգլիական բանկում գրավադրած գանձապետական պարտատոմսերի, անգամ առաքումը բրիտանացիների կողմից «մաքուր» չկատարվեց, քանզի, ինչպես հետագայում պարզվեց, հրացանների մի զգալի մասը անպիտան դուրս եկավ, մի մասն առգրավեց Վրաստանը իր երկաթողագծերով տարանցման համար, մի մասն էլ կասկածելի հանգամանքներով 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին ընկավ քեմալականների ձեռքը: Ակնհայտ է, որ ազգային բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքները ամենևին էլ գոհացուցիչ չէին: Ալ. Խատիսյանըիր՝ 1919 թ. մարտի 14-ին Լենյին ուղղված նամակում, պատմելով նախօրյակին տեղի ունեցած խորհրդակցության մասին, որին մասնակցել էին գեներալներ Մ. Սիլիկյանը և Զումարովը, երևանյան ջոկատի հրամանատար Դրոն և ուրիշներ, որոշ դրական տեղաշարժերի հետ միաժամանակ ընդգծում է բանակի անմխիթար վիճակը՝ նշելով, որ հայկական բանակի զինվորները սոված և ցնցոտիավոր են, ավելի քան չորս ամիս չեն լողացել, նրանց 50 տոկոսը հյուծված է տիֆից և այլն: Ըստ գեներալ Մովսես Սիլիկյանի փաստացի վկայության, զորքի թիվը հասնում էր 31-32000-ի, որից շուրջ 900-ը՝ սպա: Մ. Սիլիկյանը տեղեկացնելով Լենյին հայկական զորքում տիրող վիճակի վերաբերյալ քննարկման և մտքերի փոխանակության մասին, միաժամանակ բացահայտում էր այն ցավալի իրողությունը, որ եթե իրենք մինչև ապրիլի 1-ը չունենան առնվազն 16000 զինվոր, ապա Հայաստանը կործանված է: Ուստի ընդհանուր եզրահանգմամբ որոշում են խնդրել անգլիացիներին՝ 1)իրենց թեկուզև փոքրաթիվ ջոկատները տեղակայել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և Քուլպում, 2) հատկացնել հաց, հագուստ և սապոգներ/ ճտքակոշիկներ- Վ.Վ./ Թիֆլիսից, 3) Վրաստանին վերադարձնել Հայկական կորպուսի ունեցվածքը, 4) գեներալ Վ. Հ. Բիչի միջոցով միջնորդել Վրաստանի իշխանությունների առջև՝ անարգել տարանցիկ ուղիներով Հայաստան առաքելու անհրաժեշտ բոլոր բեռները (ցորեն, հաց, տարբեր ապրանքներ և այլն)[20]: Վերջապես, ըստ ֆրանսերեն մի փաստաթղթի, որի հեղինակը Փարիզում ՀՀ ազգային պատվիրակության քարտուղարի օգնական Ղազարյանն է, հայկական բանակի մարտունակ զինվորների թիվը 1920 թ. 24715 էր, սպաներինը՝ 1515, վարչական սպաներինը՝ 309, կամավորներինը՝ 4023 և այլն[21]: Հանրագումարի բերելով հայկական բանակի վերաբերյալ փաստական տարաբնույթ տվյալները՝ կարելի է հանգել հետևության, որ չնայած կան նույնիսկ այնպիսի վկայություններ, որ իբր թե 1920 թ. Հայկական բանակի թիվը հասել է 60000-ի[22], իրատեսական է 16-18000 լինելը: Վերջապես, շուրջ 40000 կարող է ստացվել, եթե այդ 20-25000-ին հավելենք 10-12000-ից ավելի աշխարհազորայիններին և կամավորներին, որոնց մասին դիպուկ նկատել է Կ. Սասունին, որ «թէև արտաքին կերպարանքը զինուորի կը նմանէր, բայց անիկա զինուոր չէր»[23]: Մի կարևոր հակափաստարկ ևս. 1919 թ. հաշվարկներով 961700 բնակչություն ունեցող երկրի համար[24] նման թվաքանակը խիստ կասկածելի է, մանավանդ որ 1919 թ. դեկտեմբերի վերջի տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում զինակոչից խուսափող նորակոչիկների թիվը 17665 էր[25]:

Նման պայմաններում հիրավի մարտունակ բանակի և անվտանգության համակարգի անհրաժեշտ ստորաբաժանումների՝ հետախուզական ծառայության, ՆԳՆ ուժային կառույցների ձևավորումը պարզապես դժվարին խնդիր էր: Հավելենք նաև, որ 1918-1920 թթ. հայկական բանակը դեռևս շարունակում էր մնալ կիսաֆիդայական տիպի բանակ՝ թե՛ իր ղեկավար և թե՛ զինվորների կազմով, որոնք չհրաժարվեցին



Դրո, Հ. Հախվերդյան, Ք. Արարատյան

հայկական զորքի կազմակերպման խմբապետական սկզբունքներից և գաղափարներից՝ ունենալով հեղափոխական-ապստամբական լիցք և ազգային ոգի, գործնականում անընդունակ գտնվեցին կիրառելու զինվորական գործի կազմակերպման եղանակներ: Արտաքուստ հայկական բանակը թվում էր կանոնավոր: Սակայն հայ իրականության պայմաններում դժվար էր այդ անցումը կատարել, քանզի կանոնավոր բանակի առաջնահերթությունները անընդունելի էին հայդուկապետերի և կամավորական շրջանի «զորապետերի» համար: Առաջին հանրապետության ռազմաքաղաքական առաջնորդներին չհաջողվեց վճռականություն ցուցաբերել՝ հաղթահարելու ձևավորվող հայկական կանոնավոր բանակի սպայական կազմի և ֆիդայա-խմբապետական առաջնորդների միջև եղած խուլ արհամարհանքը և տարակարծությունները, ինչը խիստ բացասական ազդեցություն ունեցավ զորքի բոլոր գործողությունների վրա: Կամավորական զորամասերից անցումը կանոնավոր զորագնդերի չուղեկցվեց կարգապահության ամրապնդմամբ, քանզի խմբապետական տրամադրություններով առաջնորդվող, այսպես կոչված, «խմբերի» զինվորները հաճախ սանձարձակ, վնասակար արարքներ էին կատարում՝ պաշտպանություն գտնելով իրենց խմբապետների կողմից, ինչն էապես ազդեց կանոնավոր բանակի կազմակերպման վրա, չնայած հայդուկապետերից շատերը խիզախ էին:

1918-1920 թթ. թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ խորհրդարանը և՛ թե զինվորական իշխանությունները ուժերի ներածին չափով փորձել են բանակաշինական արդյունավետ քայլեր ձեռնարկել: Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 16-ի որոշման մեջ ընդգծվում է, որ «մօտիկ ապագայում բանակը զգալու է ռազմական պատրաստականութիւն ունեցող սպայական կազմի պակաս:

Հոգ տանելով բանակի մարտունակութիւնը, ինչպէս և ապագայ սպայութեան ընդհանուր և ռազմական գիտական պատրաստականութիւնը բարձրացնելու, անհրաժեշտ են գտնում շտապ կարգով բանալ Ռազմական գիմնազիոն և Ռազմական դպրոց:

Հայաստանի ապագայ սպայութիւնը ընդհանուր ռազմական պատրաստակամութեամբ չպէտք է ցածր լինի իւր հարևանների, վրացիների և ադրբէյջանցիների սպայութիւնից»[26]: Սակայն խուսափել էական սխալներից և սայթաքումներից չհաջողվեց: Ս. Վրացյանը, անդրադառնալով Դրոյի՝ որպես զորահրամանատարի կերպարին, հիշատակում է նրա կարծիքը բանակաստեղծ գործընթացների և դրանցում տեղ գտած սայթաքումների մասին. «Բանակի հոգեբանութեան վրայ մեծապէս ազդել է նրա մասնակցութիւնը ներքին քաղաքացիական կռիւներին և երկրի մաքրագործման՝ հակապետական տարրերից, ինչպէս և բոլշևիկեան քարոզչութիւնը: Իր կոչման բարձրութեան վրայ չէր և բանակի հրամանատարութեան կազմը, ինչպէս նաև ղեկավարութիւնը: Գործօն զօրամասերի հրամանատարական կազմի մէջ մնացել էին հայրենասիրութիւնից զուրկ, շահամոլ զօրավարներ, և Զինուորական նախարարութիւնը հանդուրժում էր նրանց»[27]:

Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչի 1919 թ. հունիսի 10-ի հրամանագրով հաստատվում է հայկական 1-ին սահմանապահ բրիգադի հաստիքակազմը[28]: ՀՀ սահմանապահ զորքը (15 շտաբային սպաներ, 96 օբեր-սպաներ, 22 բժիշկներ և չինովնիկներ, 2889 կամավոր զինվորներ) կոչված էր ապահովելու պետական սահմանի անվտանգությունը արտաքին թշնամական ներթափանցումներից, արգելելու երկրից ապրանքների և տարբեր արժեքների մաքսանենգային արտահանումը[29]: Հայկական բանակը, ստեղծվելով ռուսական ձևաչափով, կոչված էր լուծելու ՀՀ-ի առաջ ծառացած հիմնախնդիրները անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից: Սակայն տարբեր պատճառներով այն ի զորու չեղավ լիարժեքորեն հաղթահարելու ահռելի և հաճախ անլուծելի դժվարությունները, դիմագրավելու ավելի մեծ փորձություններին՝ Ադրբեջանի հետ տևական հակամարտությանը և վերջապես թուրք-հայկական 1920 թ. պատերազմին: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Արտասահման, Սասուն և Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, Գ. հրատ., 1982, էջ 312:
2- Հովհաննիսյան Ռ. Գ. ,Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, էջ 47- 49, 159; Hovannisian R. G., The republic of Armenia, vol. II, p. 287:
3- Տես ՀԱԱ (Հայաստանի Ազգային արխիվ), ֆ.202, ց. 1, գ. 523, մաս I, թ. 95, 95 հակ.:
4- Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 10, թ . 1; ց. 2, գ. 10, թ. 2:
5- Տես «Ուրբաթ»(շաբաթաթերթ), Երևան, 25 .05. 1990:
6- Տես նույն տեղում; Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 372:
7- Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 115, մաս II, թ. 78:
8- Տես նույն տեղում, ֆ.199, ց. 1, գ. 115, մաս II, թ. 140:
9- Տես «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Երևան, 25. 05. 1990.
10- Տես Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920), էջ 30 -31:
11- Տես ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 47:
12- Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:
13- Սասունի Կ., Հայ-թուրքականպատերազմը, «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11-12, էջ 112:
14- ՏեսՍասունիԿ., Հայ-թուրքականպատերազմը, «Հայրենիք», Բոստոն, 1926, թիվ 11-12, էջ 112, Զալխուշեան Գ.,Ինչ էր նինչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 20, Փաստրմաճեան Հ.,Լեռնային պատերազմ, Փարիզ, 1938, էջ 16, ՎրացյանՍ., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 514, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 477:
15- Վրացեան Ս.,Հին թղթեր նոր պատմության համար, Բէյրութ, տպ. «Մշակ», 1962, էջ 88:
16- Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 768,ֆ.199, ց. 1, գ. 146, թ. 96:
Ованнисян Р. Г. , Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., «Тигран Мец», 2007, с. 563:
17- Տես Ованнисян Р. Г. , նշվ. աշխ., էջ 566:
18- Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագր., Բէյրութ, 1968, էջ 183.
19- Ованнисян Р. Г. , Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., «Тигран Мец», 2007, с. 563-568:
20- Տես ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 116, թ. 36:
21- Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 160, թ. 2:
22- Կարապետյան Հ., Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Եր., «ՀՀ Ազգային Արխիվ», 2004, էջ 27, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 36-38:
23- Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը // «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11 (47), էջ 111:
24- Հայկական հարց. Հանրագիտարան, Եր., «Հայկ. հանր. հրատ.», 1996, էջ 212:
25- Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:
26- Տես ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 190, թ. 9:
27- Տես Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, Պէյրութ, տպ. «Մշակ», 1965, էջ 171, 192-193:
28- ՀԱԱ,ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 296-297:
29- Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 90, 181, 191:

Հայաստանի Հանրապետության հետախուզությունը 1918-1920 թթ.

Վանիկ Վիրաբյան

Հայաստանի առաջին հանրապետության Անդրանիկ կառավարությունը իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարում էր յուրաքանչյուր պետության համար կենսականորեն անհրաժեշտ հետախուզության և հակահետախուզության գործունեության կազմակերպումը՝ որպես ազգային-պետական անվտանգության համակարգի կարևորագույն գործոն: Հնարավոր չէ պատկերացնել մի պետություն, որը չունենա ազգային-պետական անվտանգության համակարգ և դրա բաղկացուցիչ մաս կազմող հետախուզական ու հակահետախուզական ծառայություններ, և, այս առումով դիտարկելով Երրորդ հանրապետության կայացման պետաքաղաքական գործընթացներում հետախուզական ծառայության դերը և ներդրումը անվտանգության ապահովման գործում, արդիական են դառնում նախորդ պատմաքաղաքական փորձի արժևորումը և դասերը դրանցում քաղաքական ուժերի, այդ թվում՝ այդ ժամանակ առաջատար քաղաքական ուժ հանդիսացած ՀՅԴ-ի ունեցած ներդրման գնահատումը: Այդ տեսանկյունից դիպուկ է նկատել Տիգրան Դևոյանցը. «Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է»[1]:

Նախկինում հայ պատմագիտության մեջ իշխում էր այն անհիմն մտայնությունը, թե Հայաստանի Հանրապետությունը չի ունեցել ազգային անվտանգության կառույցներ կամ ի վիճակի չի եղել ստեղծելու դրանք, սակայն փաստերը հակառակն են վկայում: 1918-1920 թթ. ՀՀ կառավարությունը ձգտել է ունենալու ոչ միայն պետականության կայացման տեսանկյունից կարևոր այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին խորհրդարանը, բանակը և այլն, այլև յուրաքանչյուր պետության ազգային անվտանգությունն ապահովող անհրաժեշտ կառույցներ՝ թե՛ հետախուզություն ու հակահետախուզություն և թե՛ միլիցիա, որոնք ծառայում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության տարաբնույթ խնդիրների լուծմանը: Կազմակերպական-ֆինանսական և կադրային խնդիրների լուծման տեսանկյունից առաջին քիչ թե շատ գործնական քայլերը կատարվել են հանրապետության հռչակումից անմիջապես հետո: 1918 թ. օգոստոսի 13-ին ՀՀ Նախարարների խորհուրդը ՀՀ զինվորական նախարարության միջնորդության հիման վրա որոշում է կառավարության վարկից հետախուզությանը և հակահետախուզությանը տրամադրել 20 հազարական ռուբլի[2]: Իսկ արդեն զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագրով Գլխավոր շտաբին կից ստեղծվում է հետախուզական ու հակահետախուզական բաժանմունք՝ փոքրաթիվ անձնակազմով: Հայկական բանակում Գլխավոր շտաբի և հետախուզական մարմինների ստեղծման գաղափարի համահեղինակներից էր ռուսական բանակի կադրային սպա, Հայկական դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Միխայիլ Զինկևիչը, որը զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով նշանակվել է Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար[3], իսկ հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ է դարձել Սարդարապատի ճակատամարտի հերոս, փոխգնդապետ Ա. Կ. Շնեուրը, որին 1919 թ. սեպտեմբերից 1920 թ. ապրիլը փոխարինել է կապիտան Վ. Գ. Մուրադյանը: 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը հետախուզական բաժանմունքը ղեկավարել է ՀՅԴ անդամ Տ. Թ. Դևոյանցը, որի վկայությամբ ինքը եղել է Դրոյի դասընկերը[4] և հենց որի գլխավորությամբ էլ 1919 թ. կեսերին Կ. Պոլսում գաղտնաբար ձևավորվեց և մինչև 1920 թ. սկիզբը գործեց հայկական հետախուզական խումբը, որը Հայաստանին էր փոխանցում հետախուզական արժեքավոր տեղեկություններ Թուրքիայի, Անդրկովկասի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների, հայկական սահմանի ամբողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի մասին և այլն: Իսկ 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը այդ կառույցը գլխավորել է Մ. Ն. Դոդոխյանը: Հետախուզության բաժանմունքում և դրա ենթաճյուղերում աշխատել է պոդպորուչիկ Լ. Գ. Բաշինջաղյանը (հանրաճանաչ հայ նկարիչ Գ. Ջ. Բաշինջաղյանի ավագ որդին)[5]՝ հանձնարարությունների գծով սպա, որն այնուհետև եղել է հետախուզության գործակալ Վրաստանում (կեղծանունը՝ Լևոն Բաշ): Վրաստանում և մասնավորապես մայրաքաղաք Թիֆլիսում հետախուզական ծառայությունը ղեկավարում էր գեներալ-մայոր Հ. Ա. Քիշմիշյանը[6]: Բաքվում ՀՀ գործակալը Ա. Սարգիսյանն էր: Ըստ Ղրիմի ԽՍՀ Գլխավոր քաղվարչությունում 1927 թ. Հուլիսին Գրիգորի Խաչատրյանի հարցաքննության տվյալների՝ Բաքվում հետախուզական գործը ոչ վատ հիմքերի վրա էր դրված: Այդտեղից ստացվում էին Ադրբեջանի Գլխավոր շտաբի և Զինվորական նախարարության առավել արժեքավոր գրագրությունների պատճենները: Հետախուզության համակարգում ընդգրկված էին նաև Գ. Ս. Երամովը (դիտորդ Վրաստանում), շտաբ-կապիտան Մ. Ս. Սարգիսյանը, պորուչիկներ Ա. Ն. Ահարոնովը և Վ. Հ. Ներսեսովը: Այդ գործում որոշակիորեն իր մասնակցությունն է ունեցել նաև գեներալ Հ. Գ. Բագրատունին[7], որը 1919 թ. օգոստոս-նոյեմբերին գլխավորել է ԱՄՆ մեկնած ՀՀ ռազմական պատվիրակությունը, իսկ այնուհետև նշանակվել է ՀՀ դեսպան Լոնդոնում: Գլխավոր շտաբի հակահետախուզության բաժանմունքը ղեկավարել է Ա. Ն. Հովհաննեսովը (Հովհան Խան-Կոտուրսկի կամ Խան-Ղոթուրի), որին փոխարինել է հանձնարարությունների գծով սպա Գ. Խաչատրյանը: Հակահետախուզության ոլորտում էր աշխատում նաև պորուչիկ Բեկզադյանը, որն ավելի շատ հայտնի է իր թիֆլիսյան գործունեությամբ՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության կազմում: ՀՀ հետախուզական և հակահետախուզական մարմիններ են գործել նույնիսկ Լեռնային Հայաստանում (Սյունիք-Զանգեզուրում), որոնց ղեկավարը հայտնի Յապոնն էր (Ա. Հ. Պարոնյանը), իսկ աշխատակիցը՝

Ավ. Դադայանցը[8]: Ինչպես վկայում են փաստերը, ենթասպա, հետախույզ Ավ. Դադայանցը, որն այնուհետև ծառայել է Գ. Նժդեհի զորամասերում, եղել է Յապոնի ղեկավարած հակահետախուզական ջոկատում, 1921 թ. Ձերբակալվել է խորհրդային իշխանության կողմից և հանիրավի գնդակահարվել[9]:

Առհասարակ ՀՀ Նախարարների խորհրդին մշտապես մտահոգել են ռազմական շինարարության և պետական անվտանգության համակարգի տարբեր օղակների ու ստորաբաժանումների կայացման, այդ թվում և՝ հետախուզական ու հակահետախուզական ծառայության կազմակերպման հարցերը, որոնց աշխատանքների համար գործադրվել են իրական ջանքեր, և հատկացվել որոշակի գումար՝ թեկուզև ոչ շատ մեծ: Սակայն կազմակերպական-ֆինանսական խնդիրները դյուրին ձևով չէին լուծվում, իսկ երբեմն արհեստական խոչընդոտներ էին հարուցվում, որոնք դժվարացնում էին հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքները[10]: Դա բավականաչափ հստակ երևում է Գլխավոր շտաբի պետին հասցեագրված 1919 թ. մայիսի 2-ի զեկուցագրից, որում հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հ. Խան-Կոտուրսկին նշում էր, որ հետախուզական բաժնի գործունեության ընդլայնման և հարևան երկրներում նոր կետերի բացման համար անհրաժեշտ է հոգ տանել, որ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հետախուզության գործակալները որոշակի աջակցություն ստանան տվյալ երկրների դիվանագիտական ներկայացուցիչների կողմից: Խան-Կոտուրսկին գտնում էր, որ անհրաժեշտ է խնդրել Արտաքին գործերի նախարարությանը կարգադրություններ անել բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայում, իսկ աջակցությունը հետախուզության գործակալներին ներկայացուցչությունների պարտականությունն է: Արդեն 1919 թ. մայիսի 21-ին Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, փոխգնդապետ Ա. Շնեուրը զինվորական նախարարին ուղղված դիմումագրում խնդրում էր Արտաքին գործերի նախարարության միջոցով աջակցել հետախուզության աշխատակիցներին[11]: Այդ նույն օրը Հայաստանի զինվորական նախարար, գեներալ-մայոր Քր. Արարատյանը գաղտնի գրությամբ դիմում է արտաքին գործերի նախարարին և խնդրում կարգադրել ամեն կարգի օգնություն ցուցաբերել հետախուզության աշխատակիցներին[12]: 1919 թ. ապրիլի 9-ի որոշմամբ ԱԳ նախարարությանը կից ստեղծվում է տեղեկատվական բյուրո, որի գործունեությունը Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հատուկ բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Չալխուշյանի կարծիքով պետք է նպատակամղվեր հակահետախուզական բաժանմունքի առջև դրված խնդիրների իրագործմանը և գտնվեր Զինվորական նախարարության վերահսկողության ներքո: Տեղեկատվական բյուրոյի գործունեության շրջանակներում էին՝ 1) ռազմական բնույթի տվյալները զորամասերի տեղաբաշխման, զինվածության և զինամատակարարման մասին և այլն, 2) հարևան երկրների կառավարությունների կողմից ընդունվող քաղաքական բնույթի միջոցառումները, գործակալական շարժումը, մամուլի նկատմամբ գրաքննչական վերահսկողության ուժեղացումը: Ըստ այդ մտահղացման՝ բյուրոն պետք է սերտորեն համագործակցեր ռազմական հակահետախուզության հետ: Զինվորական և Արտաքին գործերի նախարարությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ Վրաստանում և Ադրբեջանում պետք է նշանակվեին զինվորական կցորդներ, որոնց գործառույթը անհրաժեշտ տեղեկությունների հավաքումն էր: Չալխուշյանը հատուկ ընդգծում էր, որ Տեղեկատվական բյուրոն և ռազմական հակահետախուզությունը պետք է աշխատեն սերտ փոխհամագործակցության պայմաններում՝ օգնելով միմյանց հայրենանվեր աշխատանքում[13]: Հայոց ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 16-ի նիստում նպատակահարմար գտավ Տեղեկատվական բյուրոն առանձնացնել ՀՀ զինվորական գերատեսչությունից և հանձնել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ ի դեմս Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչության, որը հետախուզական գործունեություն էր ծավալում Վրաստանում և նրան սահմանակից Ադրբեջանում, Հարավային Ռուսաստանում և հարակից այլ տարածքներում[14]:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ ծառայությունների կայացման գործընթացը բարդ էր, ոչ միանշանակ, իսկ Արտգործնախարարության հետ հարաբերությունները հստակ չէին, թեև բոլոր երկրներում էլ արտաքին քաղաքական գերատեսչությունը մշտապես եղել է արտաքին հետախուզական ծառայության գլխավոր կազմակերպիչն ու ղեկավարը: Հայաստանի Հանրապետության արտգործ նախարարության պաշտոնյաները հեռու էին մնում հետախուզական ծառայություններից, չէին վստահում, կասկածի տակ էին դնում հետախուզական ծառայությունների գործունեության արդյունքները: Այս ամենը հանգեցնում էր թյուրըմբռնումների և բացասական հետևանքների՝ վնաս հասցնելով Հայաստանի առաջին հանրապետության ազգային-պետականան վտանգությանը:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը, բացի իր ընթացիկ աշխատանքից, ծավալում է նաև հեռանկարային գործունեություն, մասնավորապես որոշակի ջանքեր է գործադրում հետախուզության բնագավառի համար անհրաժեշտ կադրերի պատրաստման համար, կադրեր, որոնք պետք է տիրապետեին ֆրանսերենին, անգլերենին և թուրքերենին[15]:

Կյանքի հրամայականն էր անհապաղ գործուն կապեր ապահովել հետախուզական ծառայությունների ու արտգործնախարարության համակարգի միջև և դրանք ծառայեցնել ՀՀ ազգային անվտանգության համակարգի հրատապ խնդիրներին: 1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի

մասին, որոշում է այդ կառույցների գործունեությունը դնելու Հայաստանի Հանրապետության դեսպանների հսկողության տակ[16]: Այդ ճանապարհին կարևոր քայլ էր արտասահմանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական ներկայացուցիչների (գործակալ, կցորդ, աթաշե, որոնք, ըստ Ռ. Ռուանի, դեռևս 1920-1930-ական թվականներին համարվում էին «հավատարմագրված լրտեսներ») ինստիտուտի ստեղծումը[17]:Այս առումով, անկասկած, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբից գեներալ-մայոր Գ. Գ. Ղորղանյանի (Ղորղանով-Կորգանով) բազմաբեղուն գործունեությունը: Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 3-ին նա զինվորական նախարարին է ներկայացնում մի ուշագրավ զեկույց, որում հարց էր բարձրացնում, այսպես կոչված, «զինվորական ագենտների» համակարգ ստեղծելու անհրաժեշտության մասին և հիմնավորում դրա անհրաժեշտությունը: Նա գտնում էր, որ զինվորական կցորդը պետք է հետևի այլ պետության զինված ուժերի գործողություններին և բացահայտի այն հնարավոր ուժերը, որոնց հետ հավանական են բախումները: Մանրազնին ներկայացնելով զինվորական կցորդ-գործակալների առջև դրված խնդիրները՝ Գ. Ղորղանյանը հանգել էր այն հետևությանը, որ, առանց զինվորական գործակալների, հետախուզության գործի ճիշտ կազմակերպումը իրագործելի չէ: Ուստի անհրաժեշտ էր ամեն տեղ ստեղծել զինվորական գործակալություն, հատկապես Վրաստանում և Ադրբեջանում: Ղորղանյանը գտնում էր, որ զինվորական գործակալները պետք է նշանակվեն զինվորական նախարարի կողմից և ենթակա ու հաշվետու լինեն միայն նրան[18]:

1919 թ. մարտի 31-ին գեներալ-մայոր Արարատյանը կրկին անդրադառնում է Ղորղանյանի՝ Թիֆլիսում և Բաքվում զինվորական գործակալներ ունենալու առաջարկին: Ըստ նրա՝ այդ պաշտոնյաներին պահելու հարցը կարող էր լուծվել Զինվորական նախարարության ընդհանուր վարկի միջոցով: Վերջում նա խնդրում էր հաստատել իր առաջարկները և թույլատրել ռազմական կցորդների վարկավորումը՝ սկսած ապրիլի 1-ից ընդամենը 180 հազար ռուբլի հատկացնելով մինչև 1919 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար[19]: Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության՝ 1919 թ. մարտով թվագրվող փաստաթղթերից մեկում արդեն շարադրված են ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները[20]: Այդ գործի համար միակ հնարավոր թեկնածուն համարվում էր Գ. Ղորղանյանը, որը փայլուն տիրապետում էր ֆրանսերենին, անգլիացիներին գիտեր Պարսկաստանից, որտեղ ծառայել էր գեներալ Ն. Ն. Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի շտաբում, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի պետ և ՀՀ զինվորական խորհրդի անդամ էր, որոշակի հեղինակություն էր վայելում Անդրկովկասում գտնվող ֆրանսիական և անգլիական ռազմական ներկայացուցչությունների շրջանում: Հենց այս թեկնածության նկատմամբ շատ բարեհաճ էր տրամադրված նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լ. Գ. Եվանգուլյանը (Եվանգուլով)[21], որը համառորեն պաշտպանում էր Գ. Ղորղանյանի թեկնածությունը զինվորական կցորդի պաշտոնում[22]: Սակայն կային նաև այլ թեկնածուներ, որոնցից էին դիվանագիտական ներկայացուցչության կազմում ընդգրկված գնդապետ Շահբաթովը, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը, ՀՀ զինվորական դատարանի նախագահ, գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը և այլք[23]: Զինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 13-ի հրամանով Հ. Ա. Քիշմիշյանը[24] Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի և Անտանտի տերությունների ներկայացուցիչների համաձայնությամբ նշանակվում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ: Իսկ արդեն զինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 25-ի հրամանագրից պարզվում է, որ գեներալ Հ. Քիշմիշյանը հուլիսի 18-ից անցել է իր անմիջական պարտականությունների կատարմանը[25] : Ադրբեջանում ՀՀ զինվորական կցորդը Պ . Մելիք-Շահնազարյանն էր:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1. Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», Փարիզ, 1938, Զ տարի, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 59:
2. Տես ՀԱԱ, ֆ. 201, g. 1, q. 484, թ. 9;ֆ. 202, g. 1, q. 13, թ. 12; ֆ. 204, g. 1, q. 216, թ. 1:
3. Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, q. 131, թ. 24:
4. Տես Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ», Փարիզ, 1938, Յունուար-մայիս, թիւ 2, էջ 49:
5. Տես Սարգսյան Ա. Ե., Հետախուզություն և հակահետախուզություն.Հայկական հետք կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին, Եր., «Ամարաս» հրատ., 2005, էջ 194-195: ՀԱԱ, Ֆ. 204, g. 1, q. 42, թ. 52-55, q. 116, թ. 69:
6. Տես ՀԱԱ, ֆ. 204, g. 1, q. 131, թ. 24, ֆ.275, g. 1, q. 75, թ 35q. 26, թ. 203
7. Տես Հայազն (Պետրոսյանց) Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ. Կենսագրական հանրագիտարան, էջ 114-115: Տես նաև Ով ով է. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Եր., Հայկ, հանրագիտ. հրատ., 2005, էջ 187:
8. Տես ЕФ МНЮИ - XXI век.-1998, No 07-08, сентябрь-октябрь, стр. 8 - 13, ՀԱԱ, ֆ. 204, g. 1, q. 131, թ. 24:
9. Տես Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 90: ՀՀ ԱԱՀԱ, Կարմվ. գործերի ֆոնդ, 10865:
10. Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, q. 155, թ. 24:
11. Նույն տեղում, ֆ. 200, g. 1, q. 155, թ. 24-25:
12. Տ՛ես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, q. 155, թ. 9, 23:
13. Նույն տեղում, ֆ. 200, g. 1q. 155, թ.9, 9 հակ.
14. Նույն տեղում, q. 81 թ..2-3, 5-8, 11
15. Նույն տեղում, ֆ. 204, g. 1, q. 104, թ.. 61
16. Նույն տեղում, ֆ.201, g1, q. 489, թ. 62, ֆ.278, g.1, q. 11 թ. 16:
17 Ռուան Ռ. Հետախուզություն յեվ հակահետախուզություն, Ռոստով-Դոն, Ազով-Սևծովյան յերկրային հայկական հրատարակչութիւն «Բոլշեվիկ», 1937, էջ 10:
18 Տես ՀԱԱ, ֆ.199, g. 1, q. 27, թ. 27 (72), թ. 62, ֆ. 275 (278), g. 1, q. 11, թ. 16:
19 ՀԱԱ, ֆ. 199, g. 1, q. 27, թ. 142: ֆ. 200, g. 1, q. 300, թ. 2-3:
20 Նույն տեղում, ֆ. 275, g. 1, q. 114, թ. 10 -12:
21 Լևոն Եվանգուլյան (1872-1920) –հասարակական գործիչ, իրավաբան, անկուսակցական, Վրաստանում Հայոց ազգային խորհրդի նախկին անդամ, 1919 թ. մարտի 9-ից մինչև 1920 թ. սկիզբը՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ: Տես Հարությունյան Մ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1919 թվականներին (նամակներ, զեկուցագրեր), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս-տ, 2017, էջ 70-71: Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918 -1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջ 379; Hovannisian R. G., The republic of Armenia, vol. II, Barkeley, Los Angelos, London, Vol. II, 1982, p. 349:
22 Տես ՀԱԱ, ֆ.275, g. 1, q. 114, թ. 13: ֆ. 121, g. 1, q. 111, թ. 1, q. 9, թ. 15:
23 Նույն տեղում, ֆ. 300, g. 1, q. 300, թ. 1-2, 8-9, 12-13:
24 Քիշմիշև Հովսեփ Արտեմի (Քիշմիշյան, 1881 թ. -1921 թ. հետո): Տես Туманян М., Дипломатическая история Республики Армения :1918-1920 гг. , Ер.: Национальный архив Армении, 25 2012, стр. 448: Տես Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. II, p. 158, 160-162, 195:
25- Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, q. 300, թ. 20 -21, 23-25, 32-34, ֆ. 275, g. 1, q. 116, թ. 70-71, ֆ. 204, g. 1, q. 40, թ. 71, q. 132, թ. 104, ֆ. 27, g. 1, q. 75, թ. 26, q. 26, թ. 203, q. 187, թ. 121:

Ռազմական գործողությունները Հիւսիսային Իրանում եւ քրիստոնեայ բնակչութեան (հայերի եւ ասորիների) կոտորածները. 1914-1916թթ. (մաս 2-րդ)

Դերենիկ Կարոյի Մելիքեան
Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր, պատմական գիտութիւնների թեկնածու

Արևմտեան Հայաստանում ռուսների առաջխաղացումը և Հիւսիսային Իրան ռուսական զօրքերի մուտքը խանդավառութեամբ են ընդունում տեղի ասորի և հայ բնակչութեան շրջանում: Նրանք դիմում են ռուսական զօրքերի հրամանատար Իւդենիչին՝ առաջարկելով կամաւորական ջոկատներ ստեղծել, խնդրելով ապահովել այդ ջոկատները զէնքով ու զինամթերքով: Ռուսական զօրքերին աջակցելուց զատ՝ նման քայլը տեսել դէպքում տեղի հայ բնակչութեան կողմից ինքնապաշտպանական բնոյթ էր կրում, քանի որ թուրքական զօրքերի ներխուժումը նշանակում էր Հայոց ցեղասպանութեան շարունակութիւն Իրանի տարածքում: Ընդհանուր առմամբ1914-1918 թթ. թուրքական բանակների քանիցս ներխուժումների հետևանքով Պարսկահայքի տարածքում զոհուել են հազարաւոր հայեր, իսկ մեծագոյն մասը հարկադրուած գաղթել է Արևելեան Հայաստանի կամ Պարսկաստանի տարբեր վայրեր: Հրապարակող փաստաթղթերը լուսաբանում են 1914 թ. դեկտեմբեր և 1915 թ. յունուար ամիսներին Պարսկաստան ներխուժած թուրքական զօրքերի գազանութիւնները հայ և ասորի բնակչութեան նկատմամբ:

Յայտնի է, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ (1914-1918թթ.) օսմանեան բանակները երկու անգամ մուտք են գործել չէզոք Պարսկաստան[1], հրահրել խժդժութիւններ, կազմակերպել կապուտ-կողոպուտ և ջարդեր Ատրպատականի շրջաններում՝ Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, Մակուի և Ղարադաղի (Դզմար), Ս. Թադէի վանքում, ապա, մուտք գործելով նաև Թաւրիզ, պատանդներ վերցրել հայ բնակչութիւնից, ինչին պիտի հետևէր Թաւրիզի հայութեան և քրիստոնեաների կոտորածը...[2]: Յատկանշելի է, որ օսմանեան բանակի ոտնձգութիւնների մասին Իրանի ԱԳՆ փաստաթղթերի տարբեր արխիւներում մատնանշում են նաև 1909 թւականի ներխուժումները Ատրպատականի սահմանակից քաղաքներ[3]:

Թուրքական զօրքերի՝ Հիւսիսային Պարսկաստան ներխուժման և տեղի քրիստոնեայ բնակչութեան ոչնչացման մասին վկայում է նաև Էրզրումում գերմանացի հիւպատոս Շոհբներ-Ռիխտերը, որը Գերմանիայի ռեյխսկանցլեր Բետմահ-Հոլվեգին 1916 թ. դեկտեմբերի 4-ին գրած նամակում նշում էր. *«Հիւսիսային Իրան Խալիլ բէյի արշաւանքի նպատակն էր հաշուեյարդար տեսնել հայկական և ասորական գնդերի նկատմամբ և արտաքսել Հիւսիսային Պարսկաստանից հայ, ասորի և պարսիկ բնակչութեանը: Խալիլ բէյի արշաւանքը թուրքերի նկատմամբ խոր ատելութեան առաջացման պատճառ դարձաւ»*[4]:

Հիւսիսային Պարսկաստանում հայ բնակչութեան դէմ թուրքական զօրքերի գործադրած բնաջնջման քաղաքականութիւնը վերլուծելիս հայ պատմաբան Ս. Պողոսեանը, վկայաբերելով անգլիական մամուլը, նոյնիսկ նշում է, որ *«Մեծ եղեռնը սկսուեց ոչ թէ արևմտահայերի, այլ արևելահայերի և պարսկահայերի ջարդերով: Դրա վկայութիւններից մէկն է, որ, ի տարբերութիւն Աբդուլ Համիդի, երիտթուրքերը ծրագրել էին իրականացնել ոչ միայն արևմտահայերի (թուրքահայերի), այլև արևելահայերի (ռուսահայերի ու պարսկահայերի) ոչնչացում, այսինքն՝ խօսքը ողջ հայութեան ամբողջական բնաջնջման մասին էր՝ անկախ հպատակութիւնից: 1914 թ. վերջերին եաթաղանի զոհ են դառնում Պարսկահայքի, Ատրպատականի, Բասենի, Արդուինի, Արդահանի և մի քանի ուրիշ գաւառների հայերը»*[5]:

«1914-ի վերջին,- շարունակում է Ստ. Պողոսեանը, *-գործողութեան մէջ դրուեց Ուրմիայի նեստորական ասորիների բնաջնջման ծրագիրը: Խնդիր էր դրուած վերացնել այն բոլոր ոչ թուրք տարրերին, որոնք անջատում էին թուրքերին Բաքւի և Իրանական Ադրբեջանի թուրք-թաթարական բնակչութիւնից»*[6]:

«Ցեղասպանութեան ժամանակակիցների և ուսումնասիրողների տեսադաշտում եղել է հիմնակա-նում արևմտահայոց Գողգոթայի և Արևմտեան Հայաստանի հայազրկման փաստը: Երիտթուրքական վարչակարգը դրել էր ընդհանրապէս հայ ժողովրդի ոչնչացման հարցը: Ցեղասպանութիւնն ընդգրկել էր եւ Արևմտեան Հայաստանը, եւ Պարսկաստանի հայաբնակ վայրերը, եւ Արևելեան Հայաստանը: Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Ատրպատականի հայերը՝ կապուած վերոյիշեալ շրջաններ թուրքական զօրքերի ներխուժման հետ»[7]:

Այսպիսով՝ հայերի ցեղասպանութեան գործադրումը սկսուել էր երիտթուրքական կլիկի՝ 1915

թ. ապրիլի 15-ի տխրահռչակ հրամանագրից ամիսներ առաջ, և դրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերը[8]: Այդ իրողությունը չեն ժխտում նաև իրենք՝ թուրքերը:

Պանթուրքիզմի գաղափարախոսներից Թեքին Ալփի կարծիքով՝ Իրանի բնակչության 1/3-ը թուրքական արիւն ունէր և պէտք է վերադառնար իր ցեղակիցների գիրկը: Իսկ դրա համար պարտադիր պայման էր այդ տարածքներից նաև հայերի անհետացումը: Թուրքերը մեծ թով հայերի, արաբների, անգամ պարսիկների արիւն հեղեցին[9] պարսկական տարածքներում: *«Ես սեփական աչքերով տեսայ,-* գրում է ռուսական առաջին բանակի փոխհրամանատար Կ. Մատիկեանը, *-հարիւրաւոր ծածկուած դիակներ՝ ընկած փոսերում,գարշահոտութիւն, որ վարակել էր օդը, տեսայգլուխըհատած դիակներ, քարերի վրայ կացինով կտրուած ձեռներ, սրունքներ, պոկուած մատներ, դուրս քաշուած գանգեր, դիակներ փլատակների և տասնեակ զոհուածներ ցանկապատերի տակ...Սպանութիւններ կատարուել են հայկական շատ գիւղերում»*[10]:

1915 թ. յունուարին, երբ Կովկասեան ճակատում թուրքական բանակը յարձակողական գործողութիւններ էր ծաւալել, նրան միացած «Համիդիէն» և չեթէները կենտրոնացան Ալաշկերտի դաշտում և սկսեցին հայերին կոտորել: Այդ կոտորածները տարածելով հասան Վանի նահանգ և Ուրմիա լճի շրջանները: *«Էնուերի փեսան՝ արիւնարբու Ճևդեթ,և ազգայնական Խալիլը, թրքական բանակի գլուխն անցած, ասպատակեցին Հիւսիսային Պարսկաստան, և հայկական ու ասորական գիւղերը իրենց յարձակումներուն թիրախ հանդիսացան: Գիշատիչներէ հալածական թռչուններու նման հայերը փախուստ կուտային ամէն ուղղութեամբ՝ապաստան գտնելու համար....»*[11]:

Այս իրադարձությունների մասին Սիմոն Վրացեանը 1915 թ. յունուարի 1(14)-ին Թիֆլիսից ՀՅԴ Ամերիկայի կենտրոնական կոմիտէին յղածնամակում գրում էր. *«....Այդ պանիկայի միջոցին հրաման է տրուում Պարսկաստանի և Ալաշկերտի զօրամասերին յետ քաշուել, սկսում է յետ գալ և Ատրպատականի ռուս զօրքը, որի հետ գաղթում են Աղբակի և Սալմաստի հայերը: Կարիք կա՞յ ասելու, թէ՝ինչ ահռելի կացութեան մէջ ընկել է այդ ժողովուրդը այս ցրտին: Գաղթում են և Թաւրիզից, որը անցել է թուրքերի ձեռքը»*[12]:

Այս մասին կրկին խոստովանել են հէնց իրենք՝ ջարդարար թուրքերը.*«....Պարսկաստան ներխուժող թրքական բանակի հրամանատար Խալիլ բէյը 1914-ի վերջերին և 1915 թ.-ի սկզբին, երբ պարտութիւն կրեց հայ կամաւորական գնդերից (Անդրանիկի գլխաւորութեամբ –Դ.Մ.) և ռուս բանակից, անցաւ Վան և այնտեղ Ճևդեթին (Վանի կուսակալ) յայտնեց, որ «մաքրել» է Ուրմիայի և Սալմաստի քրիստոնեաներին, Ճևդեթն էլ պատրաստուել էր «մաքրելու» Վանի և Վասպուրականի հայերին»*[13]: «Մաքրման» այսպիսի բազմաթիվ գործողությունների են դիմել թէ՛ քրդերը և թէ՛ թուրքերը, երբ, յատկապէս հայ կամաւորականներից պարտութիւն կրելով, դրա վրէժը լուծում էին հայ ազգաբնակչությունից, որն էլ ստիպած գաղթում էր իրանական տարածք, որն աւելի ապահով էր համարում[14]: Այդ մասին վկայել են իրանական աղբիւրները ևս, երբ *«1914-1915թթ. հազարաւոր հայ գաղթականներ «մուսիօ քեռիի» գլխաւորութեամբ Արևմտահայաստանից Սալմաստ են գաղթել»*[15]:

Խալիլ բէյի մատնանշած պարտությունը վերաբերում է Դիլմանի հռչակաւոր ճակատամարտին, որի ժամանակ *«....իրեն փայլուն կերպով դրսևորեց Անդրանիկը 1915 թ.-ի ապրիլին, որտեղ նրա ջոկատը ջախջախեց Խալիլ բէյի կորպուսը և կանխեց Իրանական Ադրբեջանից գերմանա-թուրքական զօրքերի՝ Անդրկովկաս ներխուժելու վտանգը»*[16]:

Անդրէ Ամուրեանը (Տէր-Օհանեան) իր փաստարկները հիմնաւորել է իր տրամադրութեան տակ ունեցած փաստագրութիւն-արխիւով, որում օրը օրին արձանագրած են թուրքական ներխուժող բանակի այն բոլոր անիրաւութիւնները, սպանութիւններն ու սադրանքները, որոնք տեղի են ունեցել պարսկական Ատրպատականում: Այդ փաստագրության հեղինակը Թաւրիզի ֆրանսիական միսիոնարության պետ հայր Պ. Ֆրանսէնն է, որը պատերազմի ժամանակ նշանակուել էր հիւպատոս Սպանիայի և Հոլանդիայի՝ հովանաւորելու համար Ատրպատականի քրիստոնեայ տարրերին:

Ուրմիայի ֆրանսիական միսիոնարության կոյսերը օրը օրին օրագիր են կազմել և տեղեկագրել Թաւրիզ՝ հայր Պ. Ֆրանսէնին, որը դիմումներ է կատարել ու միջոցներ ձեռք առել՝ փրկելու անմեղ տարրերին, որոնք զոհն էին թուրքական վայրագությունների: Այսպէս, օրինակ, թուրքերը ներխուժում են Ուրմիայի ֆրանսիական միսիոնարների շէնքը և եկեղեցու բակում սպանում նրա պետ հայր Սոնտագին: Նրա արեան հետքը պահում է տարիներ շարունակ, ապա յուշարձան է կանգնեցուում անմեղ նահատակի արեան հետքի վրայ[17]:

Հայր Պ. Ֆրանսէնի վկայությունները խիստ արժէքաւոր են նրանով, որ վկաները օտարազգի են՝ ֆրանսիացի, հոլանդացի, իսպանացի, և օրը օրին արձանագրել են անցուդարձը[18]: Սա վերստին ապացուցում է Մեծ եղեռնի սկսվելը ոչ թէ արևմտահայերի, այլ արևելահայերի և ի մասնաւորի պարսկահայերի ջարդերով:

Այստեղ կը ցանկանայինք կարճ ակնարկով անդրադառնալ Ուրմիայի, Խոյի, Սալմաստի և շրջանի կոտորածներից հրաշքով ազատուածների վկայություններին, քանի որ նրանք ժամանակին ականատես են եղել թուրքական գազանությունների: Այսպէս՝ Խոյ գաւառի Թաղեր գիւղից Շուշանիկ Բէյությանցը գրում է.*«1914-ի դեկտեմբերեան նահանջին,երբ ռուսները Բաշկալայէն (Աղբակ) և Ատրպատականէն կը քաշուին, ռուսները տեղական հայերը իրենց հետ կը տեղափոխեն Կովկաս, և Սալմաստի, Ուրմիշրջաններու նման Խոյն ալ գաղթի կը դիմէ: Դեկտեմբերի վերջերը ռուսները յայտարարեցին, որ իրենք յետ կը դառնան, և հայերն ալ պէտք է իրենց հետ նահանջեն (որիշ պատմողներ*

կը պատմեն, թէ կամաւորները կրպարտաւորեցնեն նահանջել չկոտորուելու համար): 200 տուն է բաղկացած հայ թաղամասը բռնեց գաղթի ճամբան: Գիւղին մէջ մնացին միայն մի քանի ծերեր, որոնցմէ 3-ը սպանուած են, միւսները կան»:

Իսկ Յակոբ Խորոզեանցը՝ Սալմաստ գաւառի Հաթաան գիւղից, 1916 թ. վկայել է հետևեալը. *«1914 թ. դեկտեմբերի սկզբները Սոմայի շրջանի քիւրտերը Ամիրխանի ցեղապետ Ջահանգիր Աղայի առաջնորդութեամբ յարձակեցան Մահլամ և Սառնա գուտ հայաբնակ գիւղերուն վրայ և հրդեհեցին խուրի դէզերը և յառաջացան դէպի այդ գիւղերը, սակայն գիւղացիներու և ռուսներու բուռն ընդդիմութեան հանդիպելով՝ կը փախչին: Դեկտեմբերի 18-ին, երբ ռուսները տաճկական սահմաններէն յետ նահանջեցին, ժողովուրդը իրենց հետ արտագաղթել տուին դէպի Կովկաս: Տուները մեծ մասամբ այրուած են կամ փայտերը վառելու համար քանդուած: Վառուած է [են] Շէյթան-Աւայի դպրոցը, դատերու սրահը, Ս. Աստուածածին եկեղեցին (ռիւտաւտեղի): Այրողները տեղական թուրքեր են: Ամբողջ Սալմաստի շրջանին եկեղեցիները աւարի են տուած, զանգակատները ջարդուած կամ գնդակներով ծակուտուած են:*

«1914 թ. դեկտեմբերի սկզբները Սոմայի շրջանի քիւրտերը Ամիրխանի ցեղապետ Ջահանգիր Աղայի առաջնորդութեամբ յարձակեցան Մահլամ և Սառնա գուտ հայաբնակ գիւղերուն վրայ և հրդեհեցին խուրի դէզերը և յառաջացան դէպի այդ գիւղերը, սակայն գիւղացիներու և ռուսներու բուռն ընդդիմութեան հանդիպելով՝ կը փախչին: Դեկտեմբերի 18-ին, երբ ռուսները տաճկական սահմաններէն յետ նահանջեցին, ժողովուրդը իրենց հետ արտագաղթել տուին դէպի Կովկաս: Տուները մեծ մասամբ այրուած են կամ փայտերը վառելու համար քանդուած: Վառուած է [են] Շէյթան-Աւայի դպրոցը, դատերու սրահը, Ս. Աստուածածին եկեղեցին (ռիւտաւտեղի): Այրողները տեղական թուրքեր են: Ամբողջ Սալմաստի շրջանին եկեղեցիները աւարի են տուած, զանգակատները ջարդուած կամ գնդակներով ծակուտուած են:

Հաթաան՝ 650 տուն, Խոսրովա՝ ասորաբնակ, որի մէջ կայ 20 տուն հայ բնակչութիւն, Սաւրա՝ 180 տուն հայ բնկ., Հին քաղաք՝ 125 տուն հայ, Սառնա՝ 180 գուտ հայաբնակ, Մահլամ՝ 270 տուն գուտ հայաբնակ, Շէյթանաւա՝ 15 տուն հայ, Դրիշկ՝ 35 տուն հայ, Քոչամիշ՝ 25 տուն հայ, Քալաշան՝ 20 տուն, Փայաջուկ՝ 400 գուտ հայաբնակ, Ղալասար՝ 200 տուն գուտ հայաբնակ, Միտրախանա՝ 80 տուն հայ, Ղզլջամա՝ 60 տուն, Սարամերիկ՝ 85 տուն, Վարդան՝ 12 տուն, Ուլա՝ 6 տուն, Գիլիզան՝ 4 տուն, Փաթաւոր՝ 3 տուն, բոլոր վերոյիշեալ գիւղերը գաղթի ճամբան բռնեցին դեկտեմբերի 20-24-ի ընթացքին: Այդ ատենները Աղբակի շրջանի հայերն ալ ռուսներու հետ նահանջեցին և Սալմաստ եկան, որոնք սալմաստցիներու հետ Կովկաս անցան, մի մասը տեղացիներու հետ միասին Սալմաստի շրջանը մնացին[մնաց]: Ատոնցմէ 700 հոգի, գլխաւորաբար տղամարդիկ, ջարդուեցան չարաչար տանջանքներով, ոմանց վիզը դրան շէմքին վրայ դրած՝ նաջախով

Ասորիների կոտորածներին նվիրված հուշարձան

(կացին) կտրած են, ոմանց՝ գնդակահարած, ոմանց՝ անդամահատած և տանջանքներով սպաննած, ուրիշներուն ողջ-ողջ այգիներու պատերու տակ են թաղած: Ջարդը տեղի ունեցած է թուրք հրամանատար Խալիլ բէյի հրամանով: Ջօրքերուն մասնակցեցան Սոմայի Թիմուր աղայի և Ջահանգիր աղայի քյուրդերը և հայերու ունեցած ամբողջ ստացուածքը թալանեցին:

Տեղացի թուրքերը կին ու երեխաներ պահած են (պատմողը պահողներուն անունները չի յիշեր), մի տան մէջ հաւաքած, կողոպտած, հազար ու մի անարգանքի ենթարկած են և ապա, ռուս զօրքի վերադարձին, վերստին, ազատուած՝ Կովկաս են անցած»[19]:

Վերոգրեալ վկայութեան դիպուկ փաստարկ է նաև հետևեալ մէջբերումը *«Կաւկազ»* թերթից. *«Խոսրովան մի մեծ գիւղ էր, ունէր 500 ընտանիք, այժմ լրիւ ամայացել է»[20]:*

1915 թ. փետրուարի 14-ի գիշերը Խոսրովա և Մահլամ գիւղերում սպանուեց 707 հայ: Այդ մասին կրկին Կ. Մատիկեանը գրում է Կովկասեան բանակի հրամանատարութեանը. *«Մինչև ամսի 14-ը հայերը շնորհիւ պարսիկների մնացել էին անվնաս: Բայց թուրքական կառավարութիւնը ....սպառնաց պատժել բոլոր այն պարսիկներին, ովքեր կը թաքցնէին քրիստոնեաներին.... Կայմակամ Ռուստամ բէյը հրամայեց քրդերին ու զինուորներին պարսիկների տներից հանել քրիստոնեաներին և սպանել նրանց թաքցնողներին: Հրամանը կատարուեց անմիջապէս.... հայերին տարան Հարիւան և Խոսրովա գիւղերը, որտեղ էլ ....տանջանքներով սպանեցին....»[21]:*

Յաջորդ վկայութիւնը Մկրտիչ քհն. Տէր-Պետրոսեանինն է՝ Ուրմիա գաւառի Մահմադքեար, Նաղադէ և Գեարդաբաղ գիւղերի կոտորածների մասին. *«1.Մահմադքեար և Նաղադէ գիւղերուն մասին- Պաշտօնավարութեանս վայրը՝Սուլդուզ գաւառամասը, 1914 թ. դեկտեմբերի 7-ին Մուսուլի կողմի Դիզէի ըսած քիւրդ աշիրէթներու և թուրք բաշիբոզուկ զօրքերու կողմանէ յարձակումի ենթարկուեցաւ: Սուլդուզի և Ուրմիայի շրջանի մէջ եղած ռուս զօրքերը, որոնք, թուցիկ խումբեր կազմած, այդ կողմերն էին, ընդառաջեցին: Հետևանքը այն եղաւ, որ ռուսները նահանջեցին դէպի Ուրմիա, իսկ քուրդ խուժանը թալանի տուաւ Մահմադքեար հայ և ասորի գիւղը (մօտ 80 ծուխ ունեցող, կէսը հայ են, կէսը՝ասորի), քշեցին տարան տաւար, ոչխար և տնային կահ-կարասիներ: Հետևեալ օրը յարձակեցան Նաղադէ գիւղին վրայ, չթալանեցին, միայն ձիաւորներով*

տեղաւորուեցան հայ հարուստներուն տուները: Վերջիններս, զգուշանալով, որ յարձակում գործողները կարող են սպանութիւններ, առևանգումներ և բռնաբարութիւններ գործել, կապաստանին իրենց հարևան քիւրտերուն տուները: Ջիաւորները մօտ 5 օր կուտեն, կը փչացնեն հայ հարուստներուն ունեցածչունեցածը և կը տանին բոլոր պղնձեղէնները, սամաւարները, կանացի զարդերը և այլն: Մենք այդ մասին բողոքեցինք Սոուջ-Բուլաղի մէջ եղած թուրքերու հրամանատարին, այն հրամայած էր վանեցի Ճեմալ էֆենտիին, որ թալանած իրեղէնները յետ տրուին, և հայերու հետ խաղաղ ապրին: Ճեմալ էֆենտին իրեն եղած հրամանի հիման վրայ կանչեց ինձ և հայ ակաակալներուն (ծերերուն) և խօսքը ինծի ուղղելով՝ ըսաւ. «Փափազ էֆենտի, ժողովուրդիդ կը յայտարարես, որ իրենց գործին կենան, երկրագործը իր գործին երթայ, առևտրականը՝ իր առևտրին, ես եղած անկարգութիւններուն վերջ կուտամ: Ըսէ՛ք, որ միամիտ մնան տեղի հայերը, եթէ անոնք կը կասկածին կոտորածէն, մի՞թէ մեր երկիրը քրիստոնեայ չկար կոտորէինք, որ գայինք այստեղ քրիստոնեաներ կոտորելու»: Այդ խօսքերուն վրայ մենք հանգստացած դուրս եկանք:

Այնուհետև քիւրտ աշիրէթներուն եռուզեռը աւելի սաստկացաւ: Նոյն Ճեմալ էֆենտիին հրամանով ոստիկանները ամէն օր կուգային և կը պահանջէին հաց, իւղ,գաւ, ոչխար, բրինձ, տեղաշորեր, հեշտաեռ պղնձէ կաթսաներ: Ամէն ինչ, որ կը տանէին, վերադարձնել չկար: Նորէն դիմումներ եղան նոյն Ճեմալ էֆենտիին, բայց ապարդիւն, որով վերադարձայ Ուրմի՝իմ ծննդավայրը, դեկտեմբերի 13-ին:

2. Ուրմիի Գեարդաբաղ գիւղին մասին. 1914թ. դեկտեմբեր 13-ին ներկայացայ Ուրմիայի Առաջնորդական փոխանորդ Խորէն վարդապետ Լազարեանին և պատմեցի եղած անցուդարձի մասին: Դեկտեմբերի 19-ին ես մեր գիւղն էի, երբ Առաջնորդինամակը ստացայ, որով գրած էր՝ նամակս առնելուդ պէս աշխատեցէք բոպէ առաջ ձեր հոգին ազատել, որովհետև ռուսական զօրքը կը նահանջէ: Ամէն ինչ թողեցինք, դուրս եկանք: Մենք Դիլմանի, Խոյի վրայով 14 օրուայ ընթացքին հազիւ հասանք Ջուլֆա՝ շնորհիւ սոսկալի ցեխին: Յոի կանայք վիժեցին երեխաները, քանի՛-քանի՛ երեխաներ տեսայ, որ ձիւնի վրայ էին ձգած:

Գաղթողներս 7-8000 հոգի էինք: Մեր գիւղը 150 տուն ունէր, բոլորը մեզ հետ գաղթեցին, միայն 46 հոգի գիւղը մնացին, մնացածներէն 14 հոգի սպանուած են, որոնցմէ 4-ը՝ տղամարդ, 3-ը՝ կին, 2-ը՝ պատանի, 2-ը՝ աղջիկ:

Սպանուածներէն դուրս մը: Մայր մը իր երկու աղջիկները իրենց մեծ մօրը (տատ) մօտ կը թողու, կը փախչի: Մեծ մայրը, երկու երեխաներն առած, գիւղի հարուստներէն մէկուն թոնիրին մէջը կը պահուըտի: Թալանչիները կը նկատեն, որ թոնիրին մէջ մարդիկ կան, կը քարկոծեն և այնքան քարերով կը հարուածեն, մինչև 3-ն ալ շունչը կը փչեն:

Ուրմիայի հարաւային կողմը եղած հայ և ասորի

Խոյի հայ նահատակներին նվիրված հուշարձան

ժողովուրդը չէր կարողացած գաղթել: Ասոնք կը հաւաքուին Ուրմիայի ամերիկեան միսիոներներու հովանաւորութեան ներքոյ: Անոնք բոլորն ալ կազատուին կոտորածէն: Միսիոներներու մօտ ապաստանած էին 16000 հայ, ասորի, որոնք գլխաւորապէս միսիոներներու հաշուին կապրէին: Տուներու մէջ այնքան էին հաւաքուած, իրար վրայ դիզուած, որ վարակիչ հիւանդութիւնները ծայր առին այնպէս, որ մեռնողներուն թիւը օրական 10-16 հոգիի հասաւ»[22]:

Տեսալ իրադարձութիւնների մասին ամերիկեան գործակալ Թ. Ալէնը տեղեկագիր է ներկայացրել, որը, բացի ասորիներից, ուղղակիօրէն առնչւում է նաև պարսկահայերի ջարդերին: Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը ռուսական զօրքերը գրաւել էին Ատրպատականի հիւսիսը: Գրեթէ նոյն ժամանակ «Համիդիէն» յարձակւեց Մարգաւարի և Թարգաւարի պարսկական գիւղերի վրայ: Ռուսական զօրքերի հետ այդ գիւղերի բնակիչները գաղթեցին Ուրմիա: Հոկտեմբերին թուրքերը յարձակւեցին Ուրմիա քաղաքի վրայ: Սակայն Բլրի ճակատամարտում թուրքերն ու քրդերը պարտուեցին և նահանջեցին: Բայց թուրքերին յաջողուեց առաջանալ: Դեկտեմբերի 31-ին զօրքերն ընդհանուր նահանջի հրաման ստացան: Ասորիները նոյնպէս հեռացան. նրանց զգալի մասը ճանապարհին մեռաւ: Մօտ 800 ասորի ոչնչացուեց տեղում: Յարձակման ենթարկուեցին նաև հայերը: Թուրքերը գրաւեցին քաղաքն ու Ուրմիայի հարթավայրը: 1915 թ. յունուարի 1-ից մայիսի 24-ը *«Բոլոր քրիստոնէական գիւղերն ու մուսուլմանական գիւղերում բնակւող քրիստոնեաները թալանուեցին, տղամարդիկ սպանուեցին, կանայք անարգուեցին, մօտ 200 աղջիկ գերեվարուեց: Շատերին ստիպեցին մահմեդականանալ, հազարաւորները մահացան հիւանդութիւններից»:* 1915 թ. մայիսի 24-ին ռուսները վերադարձան, նրանց հետ՝ նաև ասորիները: Օգոստոսին ռուսները նորից նահանջեցին: Թուրքիայում բնակւող ասորիները, հայերին միացած, փախան Վանում և Մարմարայում ռուսական բանակի գրաւած շրջանները: Հետագայում, ռուսական բանակի հետ նահանջելով, հայ գաղթականները հաստատւում են Խոյ, Սալմաստ և Ուրմիա գաւառներում[23]:

Ուրմիայի հայերին և ասորիներին օժանդակող կոմիտէի նախագահ, քահանայ Ու. Շէյդը վկայում է, որ Պարսկաստանի հիւսիսարևմտեան շրջաններում կատարուած ջարդերի ամբողջ

պատասխանատուութիւնն ընկնում է թուրքերի վրայ. նրանք էին կոտորած ու թալան իրականացնողները[24]:

Սալմաստի Սաւրա գիւղից Սիմոն Ղազարեանի վկայութիւնը 1916 թ.-ին. *«Դեկտ.-ին՝ ռուսներու նահանջին ատեն, ինչպէս Սալմաստի միւս գիւղերը, մեր գիւղն ալ նահանջեց: 400 տուն բնակչութիւնը վայրկենապէս գաղթի ճամբան բռնեց, 200-է աւելի անկարող ճամբորդելու, ծերեր և մի քանի ընտանիքներ ամբողջովին գիւղը մնացին, ամբողջ կանայք հաւաքած են մի տան մէջ՝ թալանուած, բռնաբարուած, մեծ մասին կոտորած են, իսկ միւսները՝ փախուստի դիմած: Սաւրայէն Ջուլֆա մինչև ծունկերնիս ձիւնի, ցեխի մէջ թաթախուած կը ճամբորդէինք: Շատերը մեռան, մեր տղան ցրտահար եղաւ, թաղեցինք ձեան մէջ, ճամբաներս շարունակեցինք: Ողջ մնացողները մեծ մասամբ Երկիր են վերադարձեր»[25]:*

1915 թ. ռուսական բանակը, որն առաջացել էր մինչև Սուլդուզ, Սոուջբուլաղ, թերևս առ ի զգուշութիւն կրկին յետ է նահանջում մինչև Ուրմիա: Տեղի հայ և ասորի բնակչութիւնը կասկածում էր, որ ռուսներն այդ շրջանից ևս կարող են նահանջել դէպի Սալմաստ, ուստի մեծագոյն մասը, թողնելով տունուտեղ, հապճեպ գաղթում է դէպի Սալմաստ, Ջուլֆա, Թաւրիզ և այլուր... Դեռևս 1914 թ. աշնանից առգոյ էին ռուսական նահանջի նախանշանները, որի մասին ևս «Այգ»-ը իր 1914 թ. հոկտեմբերեան համարում ահազանգ է հնչեցրել *«Դրութիւնը Ուրմիայում» խորագրի ներքոյ՝ ընդգծելով, որ «....Իրօք, եթէ ռուսական զօրքը այստեղից շարժի, Ուրմիան կորած է. այդ դէպքում մանաւանդ քրիստոնեայ ազգաբնակչութեան ապագան կը դառնայ ահաւոր»[26]:*

Վերոգրեալի ապացոյց է նաև ստորև մէջբերուող՝ Սալմաստի Ղալասար գիւղի բնակիչ Թագուհի Օհաննէսի Վարդանեանի վկայութիւնը. *«1915 թ. յունուարի 5-ին ռուսները Բաշկալէի կողմերէն նահանջելու ատեն կամաւորներու հետ միասին մեզ տեղահան ըրին, որպէսզի եւրէն եկող թիւրքերը կոտորած չսարքէին: Մենք մինչև անգամ ճանապարհիհաց վերցնել չկարողացանք: Ամէն ինչ գիւղը մնաց, որը մեր գաղթելէն յետոյ թալանած են: Գիւղը մնացին ամէն տունէն մի, երկու կամ աւելի անձինք, 18 հատ գեղեցիկ կին ու աղջիկ առևանգուած են, անպատուած, 9-է աւելի կին, երեխայ և մարդ անհետ կորած են: Անցեալ 1915-ի գարնան, երբ մեր մարդիկ Ղալասար գացին, այնտեղ տեսած են ջրհորի եզերքին ձգուած արիւնոտ սղոց մը. ջրհորը նայած գտած են 7-ը դիակ, որոնցմէ 4-ը՝տղամարդու, 3-ը՝ կնոջ: Սղոցով կտրուած գլուխներէն 6-ը դիակներու մօտ ձգուած էին, միայն մէկին գլուխը չեն գտած....»[27]:*

1915 թ. սկզբների Ատրպատականի հայութեան կոտորածների վառ վկայութիւն է ներկայացրել անգլիացի հռչակաւոր պատմաբան Առնոլդ Ջ. Թոյնբին հայոց ջարդերին նուիրած իր հանրածանօթ *«Մի ազգի սպանութիւնը»* գրքում: Գրքի տուեալ հատուածը, որը ներկայացուում է ստորև, անգլերէնից թարգմանաբար մէջբերել է Անդրէ Ամուրեանը. *«Հաֆթանում և Սալմաստում առանց գլուխների 850 դիակներ գտնուեցին՝ միայն հորերից և ջրամբարներից հանուած: Ինչո՞ւ: ՈՐՈՎՀԵՏԵՒ ՀՐԱՄԱՅՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆ ՄԻ ԳԻՆ ԷՐ ԴՐԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՄԷՆ ՄԻ ԳԼԽԻ ՀԱՄԱՐ: Միայն Հաֆթանից 500-ից աւելի կանայք և աղջիկներ են ուղարկած Սոուջբոլաղի քիւրդերին: Եթէ կարող էք, երևակայեցէք այս դժբախտ արարածների բախտը: Դիլմանի քրիստոնեաներից մի մեծ խումբ բանտ նետուեց և պարտադրուեցին, որ իսլամանան: Տղամարդկանց թլփատեցին: Ուրմիոյ շրջակայքի ամենահարուստ գիւղը՝ Գիւլփարջան, հիմնայատակ կործանուեց, տղամարդիկ սպանուեցին, գեղեցկադէմ կանայք և աղջիկները առնուեցին, նոյնը պատահեց Բաբառուդին: Հարիւրաւոր կանայք խորունկ գետը նետուեցին, երբ տեսան, որ իրենց քոյրերից շատերը աւազակախմբերի կողմից բռնաբարուում էին օրը ցերեկով, ճամբի մէջտեղը: Նոյնը եղաւ նաև Սուլդուզի շրջանի Միանդոաբում:*

Այս խժդժութիւնները ահռելի են թւում օտարներին, բայց թուրքերի համար բոլորովին թեթև էին նկատուում, ինչ որ մօտերս կատարում էին իրենց հողամասի վրայ....»[28]: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Օսմանեան բանակները, 1905 թականից բացի (որին անդրադարձել ենք նախորդ բաժնում), Պարսկաստան են ներխուժել նաև 1908 թականին՝ խախտելով թուրք-պարսկական սահմանը: Ըստ Հրաչիկ Սիմոնեանի՝ թուրքական նոր ներխուժումը Ատրպատականի հայերի համար մեծ վտանգ էր ստեղծել: Դա նախ և առաջ փորձանք էր Սալմաստի և Ուրմիայի հայ բնակչութեան համար, որը երկիրի և յուսահատութեան օրեր էր ապրում:

2- Տես Ամուրեան Ա., Ատրպատականի հայութեան վիճակը թուրքական բանակների ներխուժման օրերին, Թեհրան, 1979, էջ 5:

3- Տես Իրանի ԱԳՆ փաստաթղթերի և դիւանագիտութեան պատմութեան կենտրոն, արկղ 42, գործ 16, թղթածրար 2:

4- «Позиция немецкого консула в Эрзеруме Шойбнера-Рихтера в Армянском вопросе», «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии», Ереван, 1995, с. 421.

5- Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 3, էջ 7-8:

6- Նոյն տեղում

7- «Հայոց պատմութիւն. հիմնահարցեր հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը», խմբ.՝ պրոֆ. Հր. Ռ. Սիմոնեան, էջ 249:

8- Նոյն տեղում, էջ 250:

9- Այս իրողութեան մասին պարսկերէն «Ռաադ» թերթը իր 1915 թ. յունուարի 20-ի համարում (3-րդ էջ) գրում է, որ «....Ատրպատական ներխուժելուց յետոյ թուրքերը մի քանի հայերի և ռուսահպատակների հետ միասին գնդակահարել են Սոուջբուլաղի և Մարաղայի քաղաքների կառավարիչներին»:

10- Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 3,էջ 7: Տես նաև ՀԱԱ, ֆ. 4712, ց.2, գ. 2, թ. 1:

11- Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 3, էջ 7: Տես նաև Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներուն, Բէյրութ, 1992, էջ 42:

12- Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան,տպ. «Ալիք»,1982, էջ 587:

13- Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 6:

14- Իրանի ազգային արխիւի կազմակերպութիւն. GH1332-K66-p 38-4:

15- Իրանի ԱԳՆ փաստաթղթերի և դիւանագիտութեան պատմութեան կենտրոն, արկղ 66, գործ 71, թղթ. 43:

16- Աղայեան Ծ. Պ., Ջօրավար Անդրանիկի գործունէութեան մասին, էջ 43:

17- Տես Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 5:

18- Տես նոյն տեղում, էջ 6:

19- ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ.424, թ.17, շրջ., թ. 18, բնագիր, ձեռագիր:

20- «Կաւկազ», 04.01.1915 թ.:

21- ՀՀ ՊԿՊԱ ՀՔԿ փաստաթղթեր, ֆ. 4712, թղթ. 2, գ. 2:

22- ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ.424, թ.14, շրջ., թ.15, շրջ., բնագիր, ձեռագիր:

23- Տես U.S. State Department Record Group 59, 867.4016/39/: Տես նաև Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ.2, էջ 445:

24- Տես U.S. State Department Record Group 59, 867.4016/270/: Տես նաև Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 2, էջ 446:

25- ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 404, թ. 11, շրջ., բնագիր, ձեռագիր:

26- «Այգ» շաբաթաթերթ, 19 հոկտ.1914 թ., Գ. տարի, թիւ 23, էջ1:

27- ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ.424, թ. 7, շրջ., բնագիր, ձեռագիր:

28- Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 21-22:

Հայոց մայրենին երեկ և այսօր

Վաչագան Ռստակյան
Ջավախահայ մտավորական, մանկավարժ

Գրասեղանիս վրա է ընդհանուր կրթության մասին Վրաստանի օրենքը, որի 3-րդ հոդվածի 5-րդ կետը ազդարարում է. «Հանրակրթական դպրոցներում դասավանդման լեզուն վրացերենն է»: Զգիտեմ՝ ում ինչպես, բայց ինձ՝ որպես մայրենիի ուսուցչի ու տասնամյակներով տեսչա-մեթոդական աշխատանքների բովով անցածի, այն անամպ երկնակամարում պայթող որոտ է թվացել և ստիպել է լրջորեն խորհել վրաց օրենսդիր և գործադիր իշխանությունների ընդունած ու գործողության մեջ դրված հիշյալ օրենքի շուրջ: Այսպես՝ երեկ՝ խորհրդային կարգերի շրջանում, կարգեր, որոնց ստվերոտ կողմերը գոնե ինձ՝ նախկին կոմունիստիս, քաջածանոթ են, նման անսպասելի և «խիզախ» նորույթը կամ վրիպում կորակվեր, կամ կդիտվեր արկածախնդրական ու բուռն վեճերի տեղիք կտար. վերջին հաշվով՝ Վրաստանը բազմազգ պետություն է, և միջազգային նորմերով երաշխավորված է մայրենի լեզվով ուսանելու և դաստիարակելու այլազգիների իրավունքը: Սակայն, ո՛վ զարմանք, անցնում են տարիներ, և... «ձայն բարբառոյ յանապատի»... Ճիշտ այնպես, ինչպես սարսափից լռում են երեխաները, երբ դանակը մոտենում է մատաղացուի կոկորդին:

Չնայած որոշ սահմանափակումներին՝ մայրենին՝ մեր կենաց ծառը, խորհուրդների օրոք Ջավախքում շարունակում էր դալար մնալ. գործում էր համակարգված, տեղում և վերևից վերահսկվող ուսումնական գործընթացը, ժողկրթբաժիններն իրենց կից մեթոդկաբինետներով պլանավորված գործունեությամբ մեծապես նպաստում էին սերնդի կրթադաստիարակչական աշխատանքները դրպրոցներում բարձր հիմքի վրա դնելուն: Այսպես՝ Ախալքալաքի շրջժողկրթբաժինը, որտեղ տողերիս հեղինակը տևական ժամանակ զբաղեցրել է տեսչա-մեթոդական պաշտոններ, տարեկան ստուգում ու քննարկում էր առնվազն տասնհինգ դպրոցի աշխատանք: Բաժնի և նրա մեթոդկաբինետի անձնակազմերից ու շրջանում իրենց առաջավոր փորձով աչքի ընկած մասնագետներից կազմված ստուգող խումբն այցելում էր նախատեսված մանկավարժական կոլեկտիվ և հիմնականում դասալսումներով ստուգում առարկաների դասավանդման դրվածքը: Դասից ստացած տպավորությունները նախ քննարկվում էին ուսուցչի հետ և ապա դառնում մանկխորհրդի արտապլանային նիստի քննարկման նյութ: Բնականաբար (մանավանդ ցածր դասարաններում), կենտրոնում մայրենի լեզուն էր, և առաջինը իրենց տպավորությունների մասին խոսում էին մայրենիի դասավանդումը ստուգողները: Մայրենիի կարևորությունը առանձնապես ընդգծվում էր, քանզի այն մնացած առարկաների յուրացման բանալին է:

Ուսուցման արդյունավետության բարձրացմանը

նպաստում էին պարբերաբար տրվող տեսչական թելադրություններն ու շարադրությունները: Մեծ դպրոցներում գործում էին հատուկ առարկայական, իսկ փոքրերում՝ խմբային կամ շրջիկ մեթոդմիավորներ: Գործին օգնում էր շրջանային «Փարոս» թերթը, որը հատուկ էջ էր տրամադրում դպրոցական կյանքին: Նրա էջերում հանդես էին գալիս ուսուցիչները, տարածվում էր առաջավոր փորձը: Տեղում կամ հանրապետության սահմաններից դուրս կազմակերպվում էին վերապատրաստման դասընթացներ, որոնց ժամանակ ուսուցիչները ծանոթանում էին գիտամեթոդական նորույթներին:

Դպրոցական գործը տեղական իշխանության օրգանների գործունեության կարևոր բնագավառն էր: Պարտադիր էր ամենամյա համաշրջանային օգոստոսյան խորհրդակցությունը, որի ընթացքում իշխող օրգանների ներկայացուցիչների ներկայությամբ շրջժողկրթբաժինն ու նրան կից գործող մեթոդկաբինետը հանդես էին գալիս կատարված աշխատանքի մասին յուրատեսակ հաշվետվությամբ, և դրա հիման վրա նախագծվում էին նոր ուսումնական տարվա անելիքները:

Հիշատակվածը միջոցառումների ամբողջական ցանկը չէ, բայց, ափսո՛ս, դրանք երեկ էին: Ինչ է արվում այսօր, ո՞ւր է այն հոգատարությունը, որ կար մայրենիի հանդեպ: Նախ, ինչպես հիշատակվեց վերևում, մեր մայրենին՝ հայոց լեզուն, Սահմանադրությամբ մերժվում է որպես դասավանդման լեզու, տարեցտարի կրճատվում են դասաժամերը: Դասավանդման որակը մնացել է պարապող ուսուցչի խղճին, իհարկե եթե նա մասնագետ է. տեղական ինքնակառավարման մարմինները, նույնիսկ ժողկրթբաժինների ու նրանց մեթոդկաբինետների վերացման պայմաններում, ազատ են և գրեթե պատասխանատու չեն դպրոցի աշխատանքը վերահսկելու «գլխացավանքի» հարցում: Վերադասը՝ Կրթության նախարարությունը, ի վիճակի չէ հեռվից հետևելու դպրոցի գործերին: Ռեսուրսկենտրոն կոչված հիմնարկի աշխատանքները

զուտ ձևական բնույթ են կրում:

Ամոեսուրս ռեսուրսկենտրոնին վերադասը նոր անակնկալ մատուցեց. անկախ դասավանդած առարկայից՝ տարեց ուսուցիչները, սահմանված չափի գումար ստանալով, կարող են դուրս գալ աշխատանքից: Բնականաբար, առաջարկված գումարը հրապուրիչ է, և շատերն են ցանկանում դուրս գալ: Հարց է առաջանում՝ ովքեր պետք է փոխարինեն նրանց, չէ՞ որ առանց այդ էլ դպրոցները այս կամ այն առարկայի համապատասխան մասնագետներով ապահովված չեն: «Միամիտ մի՛ եղեք, -ասում են չար լեզուները, -կա՛ ճանապարհ. կամ դպրոցներն ու դասարանները կկրճատվեն, կամ վերադասը ռեսուրսկենտրոնին օգնության ձեռք կմեկնի իր վրացի մասնագետներով. գլխավորը սայլը տեղից շարժելն է: Եվ շարժվում է սայլը. մայրենիին հատկացվող ժամաքանակի կրճատումը, դրա և այլ առարկաների հաշվին վրացերենին հատկացվող ժամաքանակը մայրենիի ժամաքանակին հասցնելը դեռ բավական չէին, պետական լեզվով ուսուցումը հնարավոր համարվեց նաև նախադպրոցական փուլում, երբ երեխան իր մայրենի լեզվից ունեցած սակավատարր բառապաշարով ու ինքնաճանաչմամբ չի կայացել որպես իր ազգի ներկայացուցիչ: Նախավարժանքը գիտություն է և իր օրենքներն ունի. նախադպրոցական հասակում իշխողը մայրենին է, որը չի հանդուրժում ուրիշ ոչ մի լեզու: Վերջիններիս հերթը կգա միայն ուսուցման հաջորդ օղակում՝ դպրոցում:

Կրթական նոր օրենքը դպրոցներին կից գործող Հոգաբարձուների խորհրդին օժտել է արտակարգ իրավունքներով, ինչը, բնականաբար, ստիպում է վերադասին (այս պարագայում նաև տեղական ինքնակառավարման մարմիններին ու տնօրենությանը) ուշի-ուշով հետևել՝ ովքեր են համալրում Հոգաբարձուների խորհուրդը, որ վերջինս «գլխացավանք» չդառնա վերադասի, տնօրենության և շահագրգիռ այլ մարմինների ու անձանց համար:

Մանկավարժական կոլեկտիվների գործունեության նկատմամբ անմիջական վերահսկողության բացակայության պայմաններում, բնականաբար, նվազում է կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը: Ստեղծված բարոյահոգեբանական լարված իրադրության և անվստահության պայմաններում գրեթե անհնար է բարձրաձայնել հրատապ լուծում պահանջող որևէ խնդիր: Դպրոցի տնօրենի ամենակարևոր և պատասխանատու պաշտոնն անցնում է վրացերենի ուսուցչին, որը չի տիրապետում հայոց գրական լեզվին, և հայտնի էլ չէ՝ կազմակերպչական ինչ կարողության տեր է:

Գիտամանկավարժական քննադատության չեն դիմանում հրամցվող դասագիրքը, թրենինգային հանդիպումները:

Մի խոսքով՝ ստիպված ես մտորել՝ այս ամենը վրացերեն սովորեցնելու նպատակ ունի՞, թե՞ «լիարժեք քաղաքացիներ» պատրաստելու հեռագնա ծրագիր է: Մի բան անտարակուսելի է՝ «լապտերով պիտի փնտրենք գրագետների»: ■

ՀՅԴ կազմակերպական ապակեդրոնացումը կուսակցութեան ամրակուռ խարիսխ

Աւօ Գաթրճեան

Ո՞վ գիտէ, թէ ինչպիսի զարգացում կ'ունենար ՀՅ Դաշնակցութիւնը, եթէ իր կազմակերպութեան հէնց սկիզբի շրջանում «ապակեդրոնացման» ձեւը չստանար: Շատ հաւանական է, որ ՀՅ Դաշնակցութեան եւս պիտի վիճակուէր այն, ինչ-որ վիճակուեց մեր միւս կուսակցութիւններին: Իւրաքանչիւր դաշնակցական մարմին, զարգանալով իր համապատասխան միջավայրում ու զգալով իր իւրաքանչիւր քայլի պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը, գիտակցօրէն էր մօտենում իր անելիքներին եւ ոչ թէ դառնում էր հլու կամակատարը եւ մեքենայօրէն գործադրողը կուսակցութեան կեդրոնական մարմնի կարգադրութիւնների, ինչպէս այդ տեղի էր ունենում այլ կուսակցութիւնների մէջ:

Շնորհիւ ապակեդրոնացման սկզբունքի լայն կիրառման՝ մեր իրականութեան մէջ երեւան եկան ձեռներէցութեամբ օժտուած բազմաթիւ նոր ուժեր, որոնք այլ պայմաններում պէտք է կորչէին անհետ՝ անկարող լինելով դրսեւորել իրենց մտաւոր եւ հոգեկան կարողութիւնները:

ԱԲՐԱՀԱՄ ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

«Կեդրոնացում» (Centralisation) բառը օգտագործուած է 1794 թուականին Ֆրանսայի մէջ, քանի որ Ֆրանսայի մէջ յեղափոխութենէն յետոյ ստեղծուեցաւ կառավարական նոր կառոյց: Իսկ «ապակեդրոնացում»-ը (Décentralisation), որ «կեդրոնացում» բառի հակադիրն է, ուժի մէջ մտաւ 1820-ական թուականներուն:

Ապակեդրոնացումը զանազան պատճառներու բերումով երկար ատեն քաղաքական բառամթերքին մէջ բացասական երանգներ ունեցաւ:

Ապակեդրոնացում գործելակերպը իւրաքանչիւր շրջանի ինքնաղեկավարման մարմիններուն ազատութիւն կու տայ իրենց շրջանին առնչուող բոլոր հարցերու վերաբերեալ որոշումներ արձակելու եւ գործադրելու՝ առանց դիմելու կեդրոնական մարմին: Ձայն կիրարկելը չէ սահմանուած միայն պետութիւններուն համար, այլ որեւէ կազմակերպութիւն կամ կառոյց կրնայ որդեգրել ապակեդրոն գործելակերպ, եթէ իր նպատակները այդ կը պահանջեն:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ հիմնուած է 1890ի օգոստոսին Թիֆլիսի մէջ իբրեւ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն», մինչեւ 1892ի առաջին Ընդհանուր ժողովը ունեցաւ իր կեդրոնական վարչութիւնը կամ Կենտրոնը: Տակաւին կեդրոնաձիգ էր դրութիւնը: Երկու տարի փորձարկելէ ետք կեդրոնով գործելու աշխատելաոճը ՀՅԴ Ա. Ընդհանուր ժողովին՝ 1892ին, կազմակերպութեան գագաթին դրին ոչ թէ կեդրոնական մարմին կամ վարչութիւն մը, այլ Դաշնակցութեան գերագոյն ատեան հռչակեցին Ընդհանուր ժողովը, որ, ժողով ըլլալով, ինքնաբերաբար գործադիր չէր կրնար ըլլալ: Դաշնակցութեան միակ անառարկելի հեղինակութիւնն է իր Ընդհանուր ժողովը, որուն որոշումները պարտադիր են ստորադաս բոլոր ատեաններուն համար: Այս ժողովին մէջ Յոնան Դաւթեանը առանձին ուժով կը պաշտպանէ կուսակցութեան-կազմակերպութեան ապակեդրոնացեալ դրութիւնը:

Ապակեդրոնացման, ինչպէս եւ ընկերվարութեան հարցով Յոնանը եւ Սիմոն Զաւարեանը համախորհուրդ էին եւ բուռն կերպով պաշտպանեցին իրենց տեսակէտները ժողովին մէջ:

1898-ին Դաշնակցութիւնը ունի արդէն կազմակերպական տարածուն ցանց: Այս երկրորդ Ընդհանուր ժողովն էր, որ վերջնականապէս պիտի ճշդէր կազմակերպական միաւորներու իրաւունքները, պիտի յստակացնէր Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը՝ մարմիններու փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւնները, կանոնագրային յստակ տրամադրութիւններով: Կրկին կը յստականան ծրագրային-բարոյական-կեդրոնացում եւ կազմակերպական ապակեդրոնացում տարազները: Կազմակերպական ապակեդրոնացումը կը մնայ հիմնական դրութիւն:

ՀՅԴ Ժ. Ընդհանուր ժողովէն բխող կազմակերպական կանոնները, փաստօրէն, հիմնաքարը կը կազմեն Դաշնակցութեան վերջին յիսուն տարիներու կառոյցին եւ կանոնագրային ըմբռնումներուն. տարբեր երկիրներու մէջ ապակեդրոնացման հիման վրայ գործող կեդրոնական եւ մեկուսի կոմիտէներ, իրենց ներքին ենթակառոյցով խումբեր, ենթակոմիտէներ եւ կոմիտէներ՝ այդ բոլորը շաղկապուած են կեդրոնական գործադիր մարմինով՝ ՀՅԴ Բիւրոյով: Յաջորդող Ընդհանուր ժողովները

միայն մասնակի փոփոխութիւններ բերին 1925ի կանոնագրին մէջ:

Տասնեակ տարիներ ՀՅԴ կազմակերպական կարեւորագոյն համակարգերէն եղող ապակեդրոնացումը կուսակցական համակարգին մէջ պատասխանատուութեան իրաւունքներու լայնօրէն բաշխումը կ'ենթադրէ իւրաքանչիւր կուսակցական մարմնի պատասխանատուութեան բաժնի յատկացում: Պատասխանատուութեան յանձնումը համակարգի որեւէ մարմնի տուեալ մարմնին մօտ առաջ կը բերէ յանձնառութեան զգացում: Իսկ երբ յանձնառու ես որեւէ գործի կատարման ուղղութեամբ, պարտաւոր ես պաշտպանելու կատարածիդ իրականութիւնն ու ճշմարտացիութիւնը: Բաբգէն Սիւնիի ընդգծումով. «Ահա թէ ինչպէս. Դաշնակցութեան հիմնական պայմանը ապակեդրոնացման դրութիւնն է. ամէն կոմիտէ ազատ է իր տեղին մէջ բոլորովին անկախ գործելու. նա իր առանձին անունն ու ներքին ծրագիրը կրնայ ունենալ, բայց կը գործէ յանուն Դաշնակցութեան, եւ երբ դաշնակցական անհատ մը որեւէ կոմիտէի իրաւասութեան տակ գտնուող տեղ մը երթայ, կ'ենթարկուի այդ կոմիտէին եւ կը գործէ անոր հրահանգներուն համեմատ»: Իսկ պետական եւ կուսակցական գործընթացի մէջ կեդրոնացեալ աշխատանքային համակարգերուն մէջ ցայտունօրէն կը տեսնուին աղէտաբեր եւ անցանկալի հետեւանքները: Թէ՛ ռազմական եւ թէ՛ քաղաքական ասպարէզներուն մէջ ուժի կեդրոնացուածութիւնը վտանգաւոր տարրեր կը պարունակէ:

Ապակեդրոնացումը կեդրոնացումէն կը տարբերի այն իմաստով, որ «ես»ի զգացումը կը վանէ եւ հաւաքականի խորհրդանիշ «մենք»ով կը գործէ: Այլ խօսքով՝ ապակեդրոնացման հիմունքով ընթացած ՀՅԴ համակարգը կրցած է անսասան պահել կուսակցութիւնը: Յեղափոխական եւ քաղաքական առումով պաշտպանուած է նախ արտաքին հարուածներէ, ապա՝ ներքին ցնցումներէ:



ՀՅ Դաշնակցութեան՝ մօտաւորապէս 130 տարիներու ընթացքին կազմակերպութեան հզօրացման եւ ակտիւութեան արմատական կարեւորագոյն հիմքերէն մէկը ապակեդրոնացումն է: Այդ պատճառով ալ անհրաժեշտ է այս համակարգը պահպանել ամուր կերպով եւ գործադրել անդուլ կերպով, որպէսզի կուսակցութեան գործունէութիւնը ալ աւելի արդիւնաւորուի, առաւել արդիականանայ եւ հզօրանայ, իսկ միւս կողմէ՝ շարքայիններու քմահաճ կեցուածքին համար որդեգրուելիք կեդրոնացեալ որոշումները տեղ չգտնեն մեր կուսակցական ու ազգային հաւաքական շահին մէջ:

Վերոնշեալ սկզբունքէն ելլելով է, որ ՀՅԴ ապակեդրոնացուած կազմակերպական համակարգը կուսակցութեան ամրակուռ խարիսխն է, որ անոր հիման վրայ կը վերածուի գաղափարական ու բարոյական միաձոյլ նկարագրով կուսակցութեան:



Շուշի կամ անուսադիր գեներալների սովորական պատմությունը

Նորեկ Գասպարյան
Գրող, Արցախի վաստակավոր լրագրող, ռեժիսոր

Մենք տանուլ տվեցինք այս մի ճակատամարտը: Չնայած մեկ-մեկ մտածում եմ, որ այդպիսի բան չկա, որ մենք ուղղակի չէինք կարող, ուզում եմ ասել՝ դրա իրավունքը չունեինք, այսինքն՝ չենք պարտվել: Խոսքը, իհարկե, պարտվողների մասին չէ: Եվ սա ամենևին էլ նրանց առաջին պարտությունը չէ: Օրինակի համար եմ ասում, 92-ին ընդամենը մի քանդված Ստեփանակերտ էր մնացել, մի քանի փոքր-մոքր գյուղ, մեկ-երկու եկեղեցի... Բայց պարտվող չկար... Ձեռքերը բարձրացնող չկար... Հա՛, գեներալ էլ չկար, ոչ մի ուսադիր... ոչ մի մեդալ ու շքանշան... Մենք էինք մերոնցով... Մեր բոլոր բարբառները խառնվել, դարձել էին մեկը... Մենք մեր մեջքը տվել էինք մեր հազարամյա տան պատին ու կռվում էինք... Ձարկվողն էլ դավաճան էր, բա ո՞նց, եղբա՛յր, էլի քիչ էինք, էլի պակաս էինք, էլի ոչինչ չէր հերիքում... էլի նահանջի տեղ չկար...

Իմ Ռուբեն պապը 41-ին թողեց երեք անմայր երեխաներին ու կամավոր մեկնեց ֆրոնտ: Ասում են՝ այնքան հպարտ էր, այնքան հպարտ էր կանգնել գյուղամիջում, որ թվում էր՝ արդեն վերադարձել է հաղթանակի բարիքները համագյուղացիներին առատորեն բաժանելու: Բայց չվերադարձավ պապս: Իսկ երբ մորս հարցնում էի նրա մասին, մայրս միայն արտասվում էր...

92-ին էլ ճակատ մեկնողի հպարտությունը ոտից գլուխ ողողել էր Ռուբեն պապիս Մհեր թոռանը... Ասում են՝ պատկերը նույնն էր. ոչ մի տարբերություն, ոչ մի պակաս գույն ու գիծ: Ուղղակի նույն ֆիլմը մենք հավաքվել, դիտում էինք նորից ու նորից...

Մհերն էլ չվերադարձավ... Շուշի և տասնյակ գյուղեր ու քաղաքներ ազատագրած անուսադիր մարտիկը... Հրադադարին ընդամենը մի քանի օր էր մնացել... Չէ՛, Մհերը ուսադիրներ չուներ, բայց Մհերը գեներալ էր... Կարմիր, հաստ ժապավենով, մեծ-մեծ աստղերով... Ռուբեն պապս էլ էր գեներալ...

Շուշի

Փոքրիկ-փոքրիկ, Երկիր մոլորակից դուրս Սզնեք գյուղից 41-ին մեկնած և նեմեցի ֆրոնտում մնացած տղամարդկանցից յուրաքանչյուրը:

Վերադարձող համարյա չկար, հենց այդ «համարյաներից» մեկի ասած՝ տղամարդու նմանվող մի քանի կիսատ-պռատ, ավերված շինություն:

Ո՞վ կհամարձակվի ասել, որ պապս պարտվել է, որ Մհերը տանուլ է տվել, որ Սզնեքը մոլորվել է պատմության ոլորապտույտ ճանապարհներին... որ ես նման պատմություններով պարզապես մխիթարում եմ ինքս ինձ, որ ես այդպես փորձում եմ... պատկերացնո՞ւմ եք, չմեռնել...

Բան չունեմ ասելու, մեր հավերժական թշնամին Սզնեք գյուղի դաշտերով ու անտառներով եկել-հասել է Շուշի, և՛ մատ է թափ տալիս երկրի վրա, և՛ ծաղրում է, ավերում-քանդում... ոտնատակ տալիս Շուշիիս նրբանցքները, նեղլիկ ու հազարագույն փողոցներում ապրող իմ մանկությունը: Հետո՞... Էլ ի՞նչ կարող է ասել թուրքը, որ Շուշիում մեծացած Նորեկ անունով հայ մարդը զարմանա...

Էլի պապիս ասածը. «Հինչքան թորքը էս հողեն իրեսին ման կյա, աշխարհքս մաքրվլական չի...»:

Նաև խորհուրդների երկրում՝ հենց բերդաքաղաքում, թոփ ու թվանգով զինված հորս խոսքը. «Էս ըրևին տակեն կամ մունք պիտի ինինք, կամ էլ էդ շանտղեքը... Եվ հինչքան մտածում, դուզը մեր ինիլնա: Էսա կտեսնաք... Մեռնիմ, թա սոտմ ասում...»: Եվ հայրս երբեք տանուլ չտվեց. թվանգով եկան, թվանգով դրանց առաջն առավ, դանակով եկան, դանակով գնաց եկողի վրա, ծիծաղելով մտան մեր տարածքը, ծիծաղելով փռեց... Հաճախ մենակ, ընդամենը մի քանի հոգով, մեկը՝ տասի դեմ... Մեռնեմ, թե սուտ եմ ասում:

Այնպես որ հիմա էդ տանուլ տվողը առաջին

անգամ չէ, որ տանուլ է տալիս. սովոր է նա, օրինակի համար՝ ի վիճակի չէ հաղթելու, օրինակի համար՝ չգիտի՝ ինչ փառավոր բան է հաղթելը... Հիմա չասեմ, որ միայն պարտված հաղթողը կարող է այդ անճոռնի ճոճվող մատը ջարդելու ցանկություն ունենալ, որ միայն հաղթողն է վիրավորանքից պատեպատ զարկվողը, միայն նա է ի վիճակի հոտոտելու ցավը, չարչարանքը և պատրաստվելու նոր խիզախումի՝ չմտածելով անգամ, որ ինքը մենակ է էս մեծ ու կործանման արժան աշխարհում, որ ինքը դեռ վերքեր ունի չսպիացած, որ իրեն ոչ մեկն արդեն լուրջ չի ընդունում...

Չասեմ՝ թքած... Չասեմ ինձ բան ասողի...

Թաքցնելու բան չկա. 88-ից այս կողմ երբեք այսքան ծանր չի եղել, ինձ այսպես ամեն օր չեն կարողացել վիրավորել, այսքան թույլ ու անօգնական չեն համարել...

Ո՞վ է մեղավորը... Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի... Ո՞վ է ապաշխարողը... Լիներ այդ եզակի մեկը, այսօր երկիրս այսքան դժվար չէր շնչի... Չկա, չի լինելու... Գոնե մեկը հավատում է մեղավորի անսպասելի խիզախումին: Չփնտրենք: Մենք ժամանակի խնդիր ունենք... Ժամանակը մեզնից առաջ է... Ուշացողի առաջ փակվելու են վերադարձի բոլոր ճանապարհներն ու արահետները, և ոչ մեկը նրան չի ճանաչելու...

Ինչ ասեմ, էլի տղաներից եմ ամաչում, զարկվածներից, մարմնի կեսը մի կերպ խրամատից բերածներից, առանց մեդալի ու շքանշանի ապրողներից... Եթե ուզում եք իմանալ, էլի միայն նրանք գիտեն մեղավորի տեղն էլ, դավաճանի տեղն էլ, չուշացողի տեղն էլ... Այդ նրանք են, որ տանուլ չտվեցին, որ ինձ օգնում են ապրել և երբեք, երբեք չեն սովորեցնում սիրել... ոչ էլ պարտադրում են...

Չէ՛, եղբա՛յր, արդեն այնքան ենք ետ նայել, որ չգիտենք՝ առջևում ով կա, և ինչ է մեզ սպասվում:

Շուշիում 60-ականներին էր, երբ հայրս, ինչ-որ

Արցախ. Մենք ենք մեր լեռները

Ստեփանակերտի հուշահամալիրը

անհասկանալի շորերի մեջ փաթաթած, տուն բերեց իր երրորդ երկփողանին:Մայրս վախեցած ընդամենը մի քանի բառ դրեց սեղանին հպարտորեն մեկնված հրացանի կողքին՝ ինչ ենք անելու...

- Մըզըրա եկողին մաման լիցիցնանընք... Մինը՝ ինձ, մինը՝ Նորեկին, մինն էլ՝ Հովիկին...

Պատկերացնում եք՝ ես ընդամենը տասը տարեկան էի, իսկ եղբայրս՝ ինը... Հայրս ոչ քաղաքականությամբ էր զբաղվում, ոչ բակում հավաքվող տղամարդկանց քննարկումներին էր մասնակցում, ոչ էլ պատմության հաստափոր դասագրքերն էր ուսումնասիրում: Հայրս ամեն օր պատրաստվում էր մեզ համար դեռևս անհասկանալի մի իրարանցումի... Հայրս պաշտպանում էր մեզ, և ոչ մեկը չէր համարձակվում վիրավորել մեզ, կռվի բռնվել մեզ հետ, նայել մեր տան կողմը... Նման բան չէր կարող լինել... Գիտեք՝ ինչու: Ասեմ, որովհետև թուրքը գիտեր հորս զինանոցի մասին...

Էհ, ընդամենը մի քանի օր է մնացել: Մայիսի 9-ին՝ առավոտյան, ես հագնելու եմ իմ՝ հատուկ այդ օրվա համար տարիներ առաջ պատրաստված հանդերձը, ուզում եմ ասել՝ արդեն մի քանի անգամ այն ինձ հետ գնացել հասել է Շուշի: Հա՛, հագնելու եմ այդ հանդերձը և գնալու եմ ուղիղ հուշահամալիր... պապիս հետ զրուցելու, Միերիս լսելու... իմ բանակի համար և ներողություն եմ խնդրելու այնտեղ հանգչող իմ ազգակիցներից, որ այս անգամ չեմ կարողանա հասնել բերդաքաղաք... Եվ ասելու եմ՝ երանի՛ ձեզ, տղե՛րք, որ չիմացաք՝ ինչ բան է պարտությունը, որ... երևի ուրիշ ոչինչ...

Կարծում եմ՝ ունեմ դրա իրավունքը, և տղերքն էլ ինձ սպասելու են...

Գնահատելու համար Պալեաններու ներդրումը

Վրէժ-Արմէն

Ուշադրութեանս յանձնուեցաւ պատկառելի ծաւալով, ընտիր թուղթի վրայ, լաթակազմ ու գեղեցիկ հատոր մը՝նուիրուած Պալեան ճարտարապետներու գերդաստանին[1]:

Խնդրուեցաւ, որ անդրադառնամ: Խնդրանք մըն էր, որ չէի կրնար մերժել գրքին ունեցած կարևորութեան պատճառաւ՝ մէկ կողմէ՝ ինծի համար՝ իբրև ճարտարապետի[2], միւս կողմէ՝ հայութեան համար ընդհանրապէս: Եւ ինչո՞ւ միայն հայութեան:Արդարև, մեծ ծառայութիւն մըն է, որ կը մատուցէ այս գործը թէ՛ մեր և թէ՛ աշխարհի պատմութեան ու մշակոյթին:

Ի՞նչ գիրքի մասին է խօսքը. **«THE BALYANS – Ottoman Architecture and Balyan Archive» («Պալեանները –Օսմանեան ճարտարապետութիւնը և Պալեան արխիւը»),** հեղինակը՝ Պիւքէ Ուրաս: Թրքերէն բնագիրը լոյս տեսած է 2021 թ. յունուարին, անգլերէն թարգմանութիւնը՝ ամիս մը ետք:

Հատորի պատրաստութեան համար հեղինակը օգտուած է բազմաթիւ աղբիւրներէ. թարգմանուած են ԺԹ և Ի դարերու հայկական աղբիւրներ, պատճէնահանուած գերեզմանատուներու և եկեղեցիներու արխիւներ, և հատորին մէջ ներառուած 155 նկարներ, որոնցմէ 98ը՝ Հայաստանի Ալեքսանդր Թամանեանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարան-ինստիտուտէն, մնացեալ 57ը՝ անհատական հաւաքածոներէ, ՀԲԸՄի Փարիզի Նուպարեան մատենադարանէն, հայկական, թրքական, ամերիկեան և եւրոպական տարբեր թանգարաններէ ու պետական կամ այլ հաստատութիւններէ:

Ո՞վ է Պիւքէ Ուրաս, որուն վստահուած է այսպիսի կենսական գործի մը պատրաստութիւնը: Իր ամփոփ կենսագրագիծին մէջ ան ինքզինք կը ներկայացնէ իբրև ճարտարապետ ու գրող: Ծնած է Իսթանպուլ 1976ին, ճարտարապետութիւն ուսանած Հռոմի «Լա Սափիէնձա» համալսարանը, աշխատած Նիւ Եորք՝ մեծանուն ճարտարապետական գրասենեակներու մէջ, Թուրքիա վերադարձած ու բացած է սեփական գրասենեակը և դասաւանդած «Պահչէշեհիր» համալսարանին մէջ, աշխատակցած է զանազան թերթերու և պարբերաթերթերու: Ներկայիս կը բնակի Փարիզ: Մեծ հետաքրքրութիւն ունի օսմանեան շրջանի ճարտարապետական գծագրութիւններու և վաւերաթուղթերու նկատմամբ ու յաջողած է ստեղծել անձնական մեծ հաւաքածոյ մը: Իր կազմակերպած ցուցահանդէսներու կամ հրատարակած գիրքերու և յօդուածներու ճամբով, ի միջի այլոց, ներկայացուցած է Էտուարտօ տէ Նարի իտալացի ճարտարապետի գործը Պոլսոյ մէջ և օսմանեան պալատներու գեղազարդումները Պետրոս Սրապեանի կողմէ:

Այս գիրքը կու գայ հարստացնելու այս ուղղութեամբ ասկէ առաջ կատարուած աշխատանքը, յատկապէս վերոնշեալ թանգարան-ինստիտուտի տնօրէն դոկտ. Աշոտ Հայկազուն Գրիգորեանի «Հայոց ազգին

պարտէզի գանձերը. Պալեաններ» գիրքը[3]:

Այս գործի նախաձեռնողն ու հովանաւորն է «ՀԱՅՃԱՐ» ճարտարապետներու և ճարտարագէտներու միութիւնը, ծրագրին համադրողները (նաև հովանաւորները)՝ Արսէն Եարման և Գէորգ Էօզգարակէօզ:

Այս հատորը արդիւնք է լայն համագործակցութեան մը: Գրքի տուեալներու էջին վրայ կը յիշուին բազմաթիւ աշխատակիցներ ու աջակիցներ՝ ընդհանրապէս հայ:

Ի՞նչ պատկեր կը ներկայացնէ գրքին բովանդակութիւնը:Ահա՛.

- Ներածական
- Նախաբան
- Պալեաններու ճարտարապետութեան արխիւը
- Պալեան ընտանիք. անձնական պատմութիւններ
- Պալեաններու ճարտարապետութիւնը և անոր ներկայացումները
- Պալեաններու ճարտարապետութիւնը Թանզիմաթի դարաշրջանին
- Պալեաններու արխիւի ցուցակը
- Համառօտագրութիւններ
- Մատենագիտութիւն
- Ցուցակ

Ինչպէ՞ս ծագած է գիրքը հրատարակելու գաղափարը:

Արսէն Եարման իր ստորագրած ներածական խօսքին մէջ կը տեղեկացնէ, թէ երբ բացայայտուած է Պալեաններու արխիւը, յառաջացած է այնտեղ թաքնուած իրողութիւնները պատմութեամբ հետաքրքրուողներու սեփականութիւնը դարձնելու ցանկութիւնը: Այդ արխիւի ուսումնասիրութիւնը յստակօրէն հաստատած է, որ «Պալեանները, որոնք յաճախ սխալ մեկնաբանուած են պարզապէս իբրև շինարարներ, և որոնց յօրինողի ինքնութիւնը մոռացութեան տրուած է, իրապէս գործող եռանդուն ճարտարապետներ էին թէ՛ ծրագրերու պատրաստութեան և թէ՛ անոնց գործադրութեան մարզերուն մէջ» (էջ 6): Եարման կ՚աւելցնէ, որ շատ քիչեր գիտեն, թէ աւելի քան մէկ դար «պալատներ, զօրանոցներ, տաղաւարներ, մզկիթներ,

դամբարաններ, դպրոցներ և եկեղեցիներ կերտած» (էջ 7) Պալեան ամիրաները ի՞նչ յարաբերութիւններ ունէին սուլթաններուն և պետական պաշտօնակատարներուն հետ և ի՞նչ մասնակցութիւն բերած են երկրի ճարտարարուեստականացման և քաղաքային զարգացման, ուստի սոյն գիրքը լոյս ընծայելը պարտաւորութիւն մըն էր աւելի, քան պարզ ցանկութիւն մը:

«ՀԱՅՃԱՐ» ճարտարապետներու և ճարտարագէտներու միութիւնը իր կարգին նոյնպէս ներածականի մը մէջ կը նշէ, որ կարևոր իրադարձութիւն մըն ալ նկատուելու է Քիրմիզիեան եղբայրներուն շնորհիւ Սկիւտարի (Պաղլապաշըի) մէջ վերաշինութիւնը Պալեան գերդաստանի դամբարանին, որ կայսերական մայրաքաղաքին վրայ Պալեաններու ունեցած ամենէն ուժեղ ոգեկան դրոշմը կը դառնայ իրենց ճարտարապետական գործերուն կողքին: Այդ դամբարանի ծրագրի ներկայացումը 2014ին Վիեննայի ճարտարապետական երկամեայ ցուցահանդէսին առիթ կը հանդիսանայ, որ ճարտարապետ Արմէն Կիւրեղեան Հայաստանի ճարտարապետական թանգարանի տնօրէն Աշոտ Գրիգորեանին հանդիպի ու անոր յանձնէ Պալեաններու արխիւը՝ կատարելով իր մեծ հօր՝ Պալեաններուն գործակից ճարտարապետ Լևոն Կիւրեղեանի կամքը: Այս վերջինը արխիւը Պոլիսէն դուրս բերած էր, յստակ չէ, թէ 1907ին, 1921ին, թէ 1926-1927ին, և պահած էր իր «Արարատ» մենատան մէջ(Ասոլօ, Իտալիա)՝ միշտ յուսալով ու կամենալով, որ այդ կարևոր վաւերաթուղթերը օր մը Հայաստան հանգրուանեն:

Վերջապէս ներածական իր խօսքով Գէորգ Էօզգարակէօզ շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք իրականութեան վերածեցին այս հսկայական աշխատանքը:

Գրքին հեղինակը«Նախաբանին» մէջ ընդհանուր բովանդակութիւնը ներկայացնելէ ետք կը հաստատէ, որ «Պալեաններու ծրագրերուն պարզապէս արդի մեկնաբանութեամբ մօտենալու փոխարէն յատուկ ճիգ մը թափուեցաւ զանոնք համարկելու իրենց ժամանակաշրջանի հեռանկարին մէջ»(էջ 13): Այդ նպատակով շուրջ երեք տարի ուսումնասիրած է թրքական վարչապետարանի, Ֆրանսայի ազգային գրադարանի, ազգային արխիւներու, ճարտարապետական կաճառի և պաշտօնական այլ հաստատութիւններու վաւերաթուղթերը, օսմանեան, հայկական և ֆրանսական մամուլը, ինչպէս նաև օտարազգի ճամբորդներու և գրողներու տպաւորութիւնները: Առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնեն, շնորհիւ Պալեաններու արխիւին, ցարդ մասնակիօրէն միայն ծանօթ բազմաթիւ անկերտ ծրագրեր, արդէն իսկ քանդուած կամ ամբողջովին փոխուած պալատներու և այլ շէնքերու գծագրութիւններ, ծանօթ առկայ գործերու յօրինման տարբերակներ, ինչպէս նաև Սարգիս Պալեանի ջրաներկ հեռանկարները, որոնք կը պահուին Նուպարեան մատենադարանին մէջ:

Առաջին գլուխին՝ «Պալեաններու ճարտարապետական արխիւը»ին մէջ Ուրաս, առանց

Սարգիս Պալեան, իւղանկարը՝ գործ Պետրոս Սրապեանի, 1874

ձեռնոց դնելու, յստակ կը գրէ. «Պալեանները իրենց ճարտարապետական յղացքներուն մէջ աննախընթաց չափերու կրցան հասնիլ՝ որդեգրելով նոր տիպաբանութիւններ և առաջադրելով նոր լուծումներ առկայ տիպաբանութեանց, որոնք հետզհետէ աւելի ու աւելի կը բարդանային գործառոյթի առումով: Պալեաններու ճարտարապետութիւնը յատկանշող այլ տարրեր են միջգիտակարգային (միջմասնագիտական) գործակցութիւնը, նոր շինանիւթերու գործածութիւնը և շինարարական բարդ վայրերու կազմակերպումը, ներառեալ կառուցողական նորարար հմտութիւնները և գործելաձևերը, մօտէն հետևելով ժամանակակից ճարտարարուեստական յեղափոխութեան արհեստագիտական զարգացումներուն»(էջ 19):

Պալեանները, ժամանակի նոր պարոքեան զարդապաշտական մօտեցումներուն հաւատարիմ մնալով հանդերձ, «յուշարձանային դասականութիւնը,– կ'ըսէ ան,–հարստացուցին աւանդական ցայտուն տարրերով՝ պատմական բազմընտրականութեան մը մէջ, որ պիտի առաջնորդէր ճարտարապետական շարժումի մը, որ պիտի ճանչցուէր իբրև օսմանեան վերածնունդ» (էջ 20):

Հակառակ տարբեր ծրագրերու իրականացման՝ յղացքային տարբեր մօտեցումներով, տարբեր ոճերով, հեղինակը կ'աւելցնէ, թէ անոնք ճանաչելի են շնորհիւ «մեր այն հոգեբանական ընկալումին, որով կը տեսնենք անոնց միջև որոշ կապ մը»: «Այդ՝ տարածութեան ոգին է՝ իբրև վերացական ընկալում մը: Այդ՝ վեհութիւնն ու մեծութիւնն է, որ կը ներկայացնէ երեք ցամաքամասերու վրայ տարածուած հսկայ կայսրութիւն մը, որ կը պատշաճի օսմանեան սուլթանին՝ իբրև արուեստի բացառիկ հովանաւորի մը»(էջ 20):

Հեղինակը վկայութեան կը կանչէ Ալիսըն Վարթոն (Տիւրգարեան), որ կը նշէ, թէ մէկ կողմէ թուրքերը փորձած են նսեմացնել Պալեաններու դերը, նոյնիսկ վարկաբեկել զանոնք, միւս կողմէ հայերը զիրենք հանճարներ նկատած են, երբեմն՝ ի հեճուկս այլ հայ ճարտարապետներու:

Հեղինակը կը գրէ, որ Պալեաններու նկատմամբ վերջերս պետական որոշակի դրական կեցուածք սկսած է ձև առնել շնորհիւ հայ գաղութի ջանքերուն: Նաև նկատի առնելու ենք, որ ճարտարապետական բազմընտրական ոճին նկատմամբ միջազգային բացասական տրամադրութիւններն ալ դեր ունեցած

են հակապալեանական կեցուածքներու յառաջացման մէջ: Բարեբախտաբար, այդ ևս սկսած է փոխուիլ:

Ըստ Ուրասի՝ «ԺԹ դարու օսմանեան ճարտարապետութիւնը որուն մէջ Պալեան ընտանիքը, կրգրաւէ կեդրոնական տեղ մը, արժանի է գիտական ու քննական գնահատման մը՝ այդ նախապաշարումներէն անդին: Օսմանեան հարստութեան հովանաւորութիւնը, կայսերական ինքնութենական քաղաքականութիւնները և բազմալեզու ու բազմամշակոյթ կայսրութեան մը ազգային ինքնութեան որոնում մը արժէքաւոր կը դարձնեն Պալեաններու բազմընտրականութիւնը: Յօրինման լայն ազատութիւնը և ոճական փոխներգործութիւնները, որոնք ի յայտ եկան ընտանեկան արխիւներէն, պէտք է նկատուին իբրև ճարտարապետական ինքնատիպ, խառնածին և բարձրորակ մօտեցում: Ասիկա մօտեցում մըն է, որ կ'օգտուի կայսրութեան մտաւորական դաշտի ժամանակակից գաղափարներէն՝ փոխանակ ստեղծելու անարժէք կրկնութիւններ արևմտեան կաղապարներու, որ կը ձգտի արդիական ըլլալու թէ՛ մտաւորական և թէ՛ արհեստագիտական առումներով և որ կը փորձէ յառաջդիմութեան հասնիլ՝ հիմնուելով արտադրական տեղական նախատիպերուն վրայ» (էջ 25-26):

Այս հատորը բծախնդիր մանրամասնութեամբ կու տայ Պալեան գերդաստանի պատմութիւնը՝ սկսելով անոր հաւանական նախահայրէն՝ Մերեմեթճի Պալի Խալֆայէն, որ վարպետ նորոգողի համբաւ ունէր(ուրկէ ալ՝ իրեն տրուած այդ անունը), որ գաւառէն (Մարաշի և Քոզանի միջև գտնուած Պելէն գիւղէն կամ, երկրորդ աղբիւրի մը համաձայն, Բաբերդի Լուսոնք գիւղէն, վերջապէս ըստ երրորդ աղբիւրի մը՝ Կեսարիոյ Տերևանք գիւղէն) փոխադրուած է Կ. Պոլիս: Ան մահացած է 1803ին: Անոր շառաւիղները ճանչցուած են Պալի-եան, ապա՝ Պալեան (Պալիի զաւակներ) մականունով: Ճարտարապետ եղած են անոնցմէ երկուքը՝ Սենեքերիմը (1768-1853) և Գրիգորը (1764-1831)՝ կայսերական ճարտարապետը, որ ճանչցուած է նաև իբրև Գրիգոր ամիրա: Վերջին ամիրաներէն եղած է անոր զաւակը՝ Կարապետ ճարտարապետը (1800-1866): Այս վերջինին չորս զաւակները, որոնք նոյնպէս նոյն ասպարէզը ընդգրկած են, եղած են Նիկողոսը (1826-1858), Սարգիսը (1831-1899), Յակոբը (1838-1875) և Սիմոնը (1846-1894): Սարգիսը, բացի ճարտարապետ ու տաղանդաւոր գեղանկարիչ ըլլալէ, նաև գիտարար մըն էր, որ հիմնաւորապէս պիտի զարգացնէր շինարարութեան մեքենական սարքերն ու միջոցները: Այս գերդաստանի վերջին ճարտարապետ շառաւիղը պիտի ըլլայ Նիկողոսի զաւակը՝ Լևոնը (1855-1925), որ «ժամանակի պայմաններուն ու անձնական դժուարութիւններու»(էջ 93) պատճառաւ Փարիզ փոխադրուած է ու հոն ալ մահացած: Կ'ենթադրեմ՝ 1915ին կ'ակնարկուի...

Բայց Պալեան անունը՝ իբրև ճարտարապետներու գերդաստանի անուն, ժամանակ մը ևս շարունակուած է շնորհիւ Պալի Պալեանի (1835-1911), որ բացառիկ

Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ խորանը, գործ՝ Կարապետ Պալեանի, 1860-ի շուրջ

արուեստագէտ էր ու անմիջական գործակիցը Պալեաններուն և իբրև պատուոյ կոչում ստացած է ու պահած է Պալեան մականունը: Իր զաւակը՝ Կարօն (1878-1960), ճարտարապետ է եղած, 1896ին (այդ ալ ուրիշ դժխեմ ժամանակի մը մէջ) փոխադրուած է Պուլկարիա, ապա՝ Գահիրէ: Այնտեղ ինքն ալ, համբաւ վաստկած, յօրինած է խտիներու պալատները կամ շէնքերը: Անոր զաւակը՝ Հրազդան Պալեանը ևս ճարտարապետ էր: Այս տողերը գրողը զինք ճանչնալու բախտը ունեցած է...

Պալեանները կը յատկանշուին իբրև հաւաքական ուժ գործած գերդաստան: Անոնք ունեցած են ընտանեկան համագործակցութիւն և յաջողած իրենց տարբեր անդամներու տաղանդն ու ձիրքը ի մի բերել և աւելի արդիւնաւէտ ասպարէզ մը ունենալ: Արդէն անոնց աւարտն ալ մասամբ հետևանք է այդ երկարամեայ ներգործակցութեան տկարացման:

Կ'աւելցուի նաև, որ ամիրաներու և Պալեան ամիրաներու օրով է, յատկապէս 1820է 1840, որ կարելի է եղած շրջանցել մինչ այդ գործող կայսերական-պետական արգելքները և նորոգել հայկական եկեղեցիներն ու հաստատութիւնները և կերտել նորերը: Սա արդէն Պալեաններու այլ ներդրում է, յատկապէս հայկական տեսանկիւնէ:

Յաջորդ երկու՝ «Պալեաններու ճարտարապետութիւնը և անոր ներկայացումները» և «Պալեաններու ճարտարապետութիւնը Թանզիմաթի դարաշրջանին» գլուխներուն մէջ Ուրաս կը կատարէ զանազան վերլուծումներ՝ պատմական ակնարկներով՝ ճարտարապետութեան միջազգային զարգացումներու լուսարձակին տակ:

Դժբախտաբար, Պալեանները իրենց ճարտարապետական յղացքներուն և մօտեցումներուն մասին որևէ գրաւոր վաւերաթուղթ չեն ձգած, կամ նման վաւերաթուղթեր չեն գտնուած, սակայն անոնց պատմութիւնը արձանագրուած է իրենց կերտած յուշարձաններուն և գծագրութիւններուն միջոցաւ:

Գրքին գլխաւոր բաժինը «Պալեան արխիւի ցուցակը» գլուխն է՝ շուրջ 200 էջ, և աւելի քան 200, եթէ նկատի առնենք, որ բազմաթիւ էջեր ունին կրկնակի չափեր, ներծալեն՝ բացուելով ու ցուցադրելով մեծ գծագրութիւններ՝ երբեմն մինչև չորս էջերու լայնքին: Այդ գծագրութիւնները յատակագիծեր

են, ճակատներ («ֆասատ»), ինչպէս նաև մէկական արուեստի գործ հանդիսացող ներսոյթներ (ներքնամասեր), որոնք կը պարզեն Պալեաններու՝ շէնքերու տեղադրման, յօրինումի և զարդարման անզուգական տաղանդը: Այստեղ է, որ կ'ըմբռնենք Չըրաղան պալատի, Եըլտըզի տաղաւարի, Ազիզիէի մզկիթի, Սարայպուռնու պահեստարաններու, Մաչքա զինարանի կամ տաղաւարներու և այլ շէնքերու մանրակրկիտ գծագրութիւնները, ինչպէս նաև նախորդ գլուխներուն մէջ զետեղուած լուսանկարները՝ Տոլմապահչէ պալատի կամ ուրիշ շէնքերու: Կը հանդիպինք նաև այդ շէնքերուն մէջ զետեղուած կահաւորման կամ ջահերու և այլ օժանդակ իրերու՝ ընդհանրապէս այլոց կողմէ ստեղծուած, որոնք վարպետօրէն համարկուած են Պալեաններու ճարտարապետութեան մէջ: Նաև իրապէս տպաւորիչ է Պէշիկթաշի սինանազարդ ու կամարազարդ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ խորանին լուսանկարը՝ 1860ի շուրջ առնուած: Չկառուցուած Ազիզիէի մզկիթը, որուն ճակատը կ'երևի նաև կողքի թուղթէ կիսաշապիկին վրայ, ըստ հեղինակին ինծի ուղղուած մէկ նամակին, իր ծրագրուած չորս մինարէթներով պիտի դառնար օսմանեան և իսլամական ճարտարապետութեան գլուխգործոցներէն մէկը: Եթէ Պալեաններու բազմաթիւ ստեղծագործութիւններ, ներառեալ հայկական եկեղեցիները, չեն երևիր այս հատորին մէջ, պատճառն այն է, որ բացայայտուած արխիւին մէջ անոնք բացակայ են[4]:

Մատենագիտութեան ընդարձակ գլուխով մը՝ 7 էջ, ապա անձնանուններու, տեղանուններու և շէնքերու նոյնպէս ընդարձակ ցուցակով մը կ'ամբողջանայ այս մեծարժէք հրատարակութեան բովանդակութիւնը:

Օսմանեան կայսրութեան զարգացման մէջ հայ մարդուն, հայ քաղաքացիին ունեցած մեծ ներդրումին վկայութիւնը կը հանդիսանայ այս գործը ու նպաստ մը կը բերէ հայ և թուրք ժողովուրդներու փոխադարձ ճանաչման ու մերձեցման տեսանկիւնէն: Նախաձեռնողներն ու հեղինակը իրենց պարտքը կատարած են այս ուղղութեամբ: Կը մնայ, որ հակառակ կողմն ալ գիտակցի ատոր ու ի՛նք ալ դրական քայլեր առնէ նոյն ուղղութեամբ:

Վարձքը կատար այս գիրքը ստեղծողներուն: Կը յուսանք, որ մշակոյթի ու պատմութեան սիրահարներ կարենան գնահատել կատարուած աշխատանքը և ոչ միայն անկէ օրինակ մը ունենան իրենց գրադարանին մէջ, այլև նախանձախնդիր ըլլան զայն տարածելու՝ նուիրելով հայ թէ օտար վարժարաններու, գրադարաններու և կեդրոններու՝ այդպիսով նպաստելով մեր ազգի առաւել ճանաչման[5]:

Աղբիւրներ եւ բացատրութիւններ

1. «THE BALYANS – Ottoman Architecture and Balyan Archive» («Պալեանները – Օսմանեան ճարտարապետութիւնը և Պալեան արխիւը»), հեղինակը՝ Պիւքէ Ուրաս, անգլերէնի թարգմանիչը՝ Թուղչէ Սելին Թաղմաթ, հրատարակիչը՝ Քորփուս Քիլթիւր վէ Սանաթ, խմբագիրը՝ Միւկէ Ճենկիզգան, գեղարկիչը՝ Ուլաշ Ուղուր, տպարանը՝ A4 Ofset Իսթանպուլ, փետրուար 2021: Առաջին տպագրութիւն՝ 600 տպաքանակով (թրքերէնը՝ նոյնպէս): 352 մեծադիր էջեր՝ 26 սմ x 31 սմ, բազմաթիւ ներծալ էջերով, գունաւոր:

2. Այս տողերը գրողը՝ Վրէժ-Արմէն Արթինեան, ճարտարապետ է՝ վկայեալ Գահիրէի համալսարանէն և Մոնթրէալի ՄԳԿիլ համալսարանէն (մագիստրոս, 1969): Այդ ասպարէզին կը ծառայէ մինչ օրս՝ նոյն ատեն մամուլի և այլ գործունէութեանց ճամբով իր մասնակցութիւնը բերելով հայ կեանքին:

3. Աշոտ Հայկազուն Գրիգորեան, Հայոց ազգին պարտէզի գանձերը. Պալեաններ, Երևան, «Զանգակ» հրատարակչութիւն, 2017, 544 էջ և ներծալ էջեր: Կը ներառէ ռուսերէն, անգլերէն ու ֆրանսերէն ամփոփումներ:

4. Այս առնչութեամբ դոկտ. Աշոտ Գրիգորեանէ ստացայ հետևեալ բացատրութիւնը. «Պալեանների արխիւում հայկական եկեղեցիների գծագրեր և լուսանկարներ չկային: Կարծում եմ՝ պատճառն այն էր, որ Լևոն Կիւրեղեանը, որին պարտական ենք արխիւի այդ մասունքները փրկելու և պահելու ազնիւ արարքով, Պոլիս է եկել այն ժամանակ, երբ Պալեաններից վերջինը՝ Սարգիսը, արդէն մահացած էր, իսկ Պալեանների արուեստանոցը՝ քայքայուած, լքուած և թալանուած: Փրկել է այն, ինչը կարողացել է: Տարիներ առաջ Բարս Թուխլաջին (Բարսեղ Թուղլաճեանը) հրատարակեց Ստամբուլի հայկական եկեղեցիներին նուիրուած իր հետազօտութիւնը («Պալեան ընտանիքի դերը օսմանեան ճարտարապետութեան մէջ»), որում որոշ եկեղեցիների յատակագծեր կային նոր չափագրութիւններով: Այդ եկեղեցիների յատակագծային լուծումները անշուշտ տարբերուում են հայկական աւանդական պաշտամունքային կառոյցների յատակագծերից այն պարզ պատճառով, որ Օսմանեան կայսրութիւնը արգելում էր գմբեթների կառուցումը (թերևս միակ բացառութիւնը Զոպեանի կառուցածն է): Միւս կողմից՝ ինչ նախագծել և կառուցել են Պալեանները, խնդրին մօտեցել են ռացիոնալ ճանապարհով. օգտագործել են ձեռքի տակ եղած շինանիւթերը, վարպետներին, աշխատուժը և այլն: Նրանց հիմնական առաքելութիւնը Պոլսոյ հայ համայնքին օգտակար լինելն է եղել: Պալեանների արխիւում կան մի շարք մզկիթների նախագծեր: Դրանցում հետաքրքիրն այն է, որ յատակագծային լուծումներում յստակօրէն օգտագործել են հայկական աւանդական ճարտարապետութեան մէջ 4էն 7րդ դարերում արդէն լայն կիրառութիւն գտած չորս յենարանների (սիւն, մոյթ կայլն) վրայ վեր խոյացող գմբեթի յօրինուածքային լուծումները, որոնց, անշուշտ, լաւ տիրապետել էին նաև Պալեաններից առաջ Ստամբուլում գործած Տրդատը, Սինանը և այլք»:

5. Այս հատորը կարելի է ապսպրել՝ դիմելով www.thebalyans.com կայքէջին:

Նիկոլ Աղբալեան
(1875-1947)

•Ո՞րն է իմաստը մայիս 28-ի:

Այդ թուականին բովանդակ հայազգը, որ ստրուկ էր թուրքին և հպատակ՝ ռուսին, կը դառնար ազատ ու անկախ հայրենիքի տեր ու քաղաքացի:

Այն ժողովուրդը, որ սովոր էր միայն իր վիզը երկարել թշնամիին և կինը զիջիլ ուրիշին, մայիս 28-ին ինքզինք կը հռչակէր ազատ ու անկախ. Ան իր ազատութեան համար կռուեցաւ ձմրան ցուրտին, բոպիկ և մերկ, քաղցած ու արիւնաքամ վիճակի մէջ:

Արևելեան և արևմտեան հայութիւնը՝ միացած Դաշնակցութեան դրօշին տակ, հասած էր ինքնագիտակցութեան՝ իբրև մէկ մարդ:

Ոտնակոխ նահանգները հայրենիքին մաս կազմեցին, ու մենք ունեցանք անկախ երկիր, ազատ ժողովուրդ մը և զարգացման ընդարձակ հորիզոն:

•1918-1920 երկուքուկէս տարուան ընթացքին հայ ժողովուրդը կորովի թռիչքով մը կազմեց պետական իշխանութիւն, մարզուեցաւ 30 հազարանոց բանակ, մաքրուեցաւ երկիրը ներքին թշնամիներէն, թափառական գաղթականութիւնը տեղաւորուեցաւ, անհանդարտ վրացիները սանձահարուեցան, և հնարաւոր եղաւ Կովկասի մէջ անօրինակ դիմադրութիւն կազմակերպել ուստի և թուրքի դէմ:

•Մենք ստրկութեան պատմութիւն ժառանգեցինք. Կը թողունք յաղթանակի էջեր:

•Ժամանակ մը պարզ ազգասիրութիւնը նկատուած էր վտանգաւոր, այսօր՝ ամենևին: Յետոյ յեղափոխութիւնը համարուեցաւ խելառութիւն. այժմ ամէն կողմէ կը ծափահարուի:

Հեռու չէ այն օրը, երբ մայիս 28-ը պիտի դառնայ ազգային տօն. այն ժամանակ գուցէ մեռած կ՚ըլլանք մենք, և մեզի հետ՝ մեր հակառակորդները:

Մոռնալու չէ, սակայն, որ իր փառաւոր անցեալը ժխտողը խառնածին է:

•Մենք եղանք հպատակի ու ստրուկի որդի երէկ, բայց ազատ զաւակի ազատ հայր ենք այժմ. փորձեցինք անոր տալ անկախ հայրենիք ու տուինք. յետոյ ձախողեցանք, բայց մեր զէնքերը վար չեն դրուած, և պայքարը չէ վերջացած մեզ համար:

•Մեր յոյսը մեր բանակին վրայ է: Հայ ժողովուրդը պարտաւոր է ըմբռնել իր իսկ կենսական շահը և իր բարոյական, նիւթական և ֆիզիքական աջակցութեամբ ուժեղացնել իր բանակը՝ զայն դնելու համար այնպիսի վիճակի մը մէջ, որ ոչ միայն ետ մղէ Հայաստանի դէմ կատարուած յարձակումները, այլև իրականացնէ մեր միւս ցանկութիւնները:

ԴՐՕՇԱԿ

Գործ՝ Ա. Խաչատրյանի